



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

334

9-85

1366

~~Specimen~~

1893

2011

20

83-2
2-85

Պ Ա Տ Ի Ի

ԿՕՄԵԴԻԱ ԶՈՐՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ՀԵՂԻՆԱԿ. Գ. ԶՈՒԴԵՐՄԱՆԻ

ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՆ Յ. ՂԱՐԱԳԵՕՋԵԱՆԻ

Հայ դերասանական մշտական խումբն առաջին անգամ ներկայացրեց այս պիէսը Տփլիսի արքունական թատրոնում դեկտեմբերի 10-ին 1892 թ.

«Պատի» վերնադրով այս կամեդիան թուրքերում է ներկայացնելու հովհաննես Էրկրի բոլոր բեմերի վրայ գրաբնության կանոնադրովեան 84-րդ լուր. գորովեամբ հրատ. 90 թ.: Գլխավոր հաստատարչապետի բաշակալության պատճառաւ թուրքերեց և վաւերացրեց ստորագրովեամբ ու արքունական կերով նրա օգնականը: 5 մայիսի 1892 թ. Տփլիս:

Настоящая комедія, подъ заглавіемъ „Честь“, разрѣшена за отсутствіемъ Главнначальствующаго, Помощникомъ его, на осн. 84 ст. Уст. Ценз. изд. 90 г. къ представлению на сценахъ края. Въ чемъ подписью и приложеніемъ казенной печати удостовѣряется. 5 мая 1892 г. гор. Тифлисъ.

Т И Ф Л И С Ь

Типо-Литографія А. Меликъ-Шахназаріанца,
на Вороцовой Набережной.

Տպարան և վրձ. Ա. Մելիք-Շահնազարեանցի:

1893

83-
2-85

“ՊԱՏԻԻ”

ԿՕՄԵԴԻԱ ՉՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ


ՀԵՂԻՆԱԿ. Գ. ԶՈՒԴԵՐՄԱՆԻ

ԹԱՐԳԱՆՈՒԹԻՐՆ Յ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

1006
29092 P-



99



ՏԻՖԼԻՍ

Типо-Литография А. О. Мелик-Шахназарянца.

1893

20 03

11 1 2 3 4

265

ՀԱՄԱԳՈՐԴՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՄԱԳՈՐԴՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՄԱԳՈՐԴՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Дозволено цензурою Тифлисъ, 8-го Апрелья 1893 г.



Յ Ա Ո Ա Ջ Ա Ր Ա Ն .

«Պատիւ» կոչուած հասկացողութիւնը տարբեր նշանակութիւն և գործադրութիւն ունի զանազան հասարակութեանց ու շրջաններէ մէջ: Որքան մարդկային խմբերը կամ ազգերը զանազան են իրանց բնաւորութեամբ ու հոգեկան յատկանիշներով՝ այնքան էլ նրանց պատուի գաղաբարը տարբերվում է իրարուց: Մի ազգ, ուրեմն և մի անհատ (որովհետև ազգը կազմվում է անհատներից), որը յառաջադիմող ճշմարիտ քաղաքակրթութեան ճանապարհի վերայ է կանգնած և իր ինքնաձանաչութեամբ ժամանակի ոգուց ու պահանջից յետ չի մնում՝ նա իր ու իւր բնատանիքի պատուի գաղաբարն էլ միշտ բարձր իդեալական դրօշակի վերայ է պահում: Մարդու պատուի զգացմունքը հասնում է այս դէպքում, նայելով նրա քաղաքակրթութեան աստիճանին, իւր մի յայտնի նրբութեանն ու ուժգնութեանը (интенсивность): Բայց մի հասարակութիւն, որը շատ քիչ է զանազանվում իր առօրեայ աշխարհային կեանքով Աֆրիկայի վայրենի ցեղերից, այն է՝ պապուականներից, հոտենդոտներից ու նեամ-նեամ կոչուած իրար միս ուտող մարդակերներից, որոնք զուրկ են՝ ի հարկէ քաղաքակրթութեան, և համերաշխութեան ու անկեղծութեան միտումից, այդպիսի հասարակութեան մէջ անհատական պատուի գաղաբար չի կարող լինել: Եւ եթէ լինի՝ այն էլ ամենաստոր չափով կամ աստիճանով, որ միայն նրա հաշուեցուցակի ու կոպէկի մէջն է կայանում: Այստեղից պիտի մակարբերել, որ պատուի գաղաբարը պէտք է հասկանալ բնագործակ և նեղ մտքով, որի աստիճանները, ի հարկէ, դժուարին է արշինով չափել ու ճիշտ կերպով որոշել:

Ներկայումս Եւրոպական ազգերի մէջ պատուի գաղաբարն իր մեծ նրբութեանն է հասել իրա բազմաթիւ աստիճաններով: Գերմանական ազգի մէջ այդ հասկացողութիւնը հասարակական զանազան շրջաններում ու շերտերում աւելի որոշ կերպարանք է ստացել թէ հին և թէ նոր սերնդի մէջ: Ահա հասկացողութեամբ այդ երկու իրարուց փարբեր հասարակութիւնների հոգեկան պատկերը, նրանց պատուի վրայ ունեցած գաղաբարը նկարել է նոյն ազգի պատկանող հուշակաւոր պ. Գ. Զուգերմանը «պատիւ» վերնագրով պիեսի մէջ: Սրա բովանդակութիւնը շատ հարուստ և բազմակողմանի է իր կրթիչ ու դաստիարակիչ նշանակութեամբ: Այս պիէսը կարելի է ասել, հայելի է երկու շրջանների կամ հասարակութիւնների մտաւոր ու բարոյական աստիճաններն որոշելու համար, որով արտափայլում է և նրանց ֆիզիօնօմիան: Մէկը հին սերունդը, հին հասարակութիւնը, որը գուրկ լինելով միանգամայն իրենալիկան «պատուի» ու ինքնաճանաչութեան գաղաբարից՝ ծախում է իր ընտանեական պատիւը կուպէկով: Իսկ միւսը, այն է՝ նոր քաղաքակրթուած սերունդն ու դաստիարակուած հասարակութիւնը՝ քաջ ըմբռնելով «պատիւ» ասած բանի վսեմ նշանակութիւնը՝ սրա գինը միմեայն արեան մէջ է տեսնում և ոչ թէ կուպէկով ծախում: Հին հասարակութեան ներկայացուցիչն է իտէնիկէն իր աղքատ ընտանիքով, բացի նրա Բօքերտ որդուց, որ նոր սերնդի ներկայացուցիչ է գառնում իւր Տրաստ-Չարբերգ ընկերի հետ միասին: Հին պատուազուրկ հասարակութեանը պատկանում է նաև Միւլինգ հարուստ վաճառականական տունը, բացի նրա Լէօնորա ազնիւ օրիորդից, որը իւր անկեղծ ու գաղաբարական սիրով դէպի աղքատ, բայց կրթուած Բօքերտը՝ բարձր է պահում իր անհատական ձայնի, կանացի պատուի, իրաւունքի ու սիրոյ զգացմունքը և ոչ թէ կուպէկի ու հաշուի տակ խեղժվում իր երջանկութեան հետ միասին: Նա, իբրև մի քաղաքակիրթ, լուրջ ու խելացի օրիորդ գիտէ պահել իրան

ու ապրել ինչպէս պէտքն է, խտրութիւն չ'դնելով հարուստի և աղքատի մէջ, որից կախուած է և մի քաղաքակիրթ ազգի մտաւոր զարգացման աստիճանն ու ընտանեական պատուի և նրա կոչման սրբութիւնը համերաշխ կեանքով:

Այս պիեսով Զուգերմանը մեծ հուշակ է հանել ներկայումս բոլոր Եւրոպական գրականութեան մէջ: Սա ունեցել է և ունի շատ մեծ յառաջադիմութիւն Արեւմտեան Եւրոպայի բոլոր բեմերի վրայ: Հեղինակը սրանով մեծ անուն հանեց միանգամից թէ հասարակութեան, թէ մամուլի և թէ գրականութեան մէջ ահագին հետաքրքրութիւն շարժեցնելով: Անլիճեղի է, որ այս թատերական գրուածքը մի նոր երևոյթ է ներկայ դրամատիկական գրականութեան մէջ թէ իր գեղարուեստական արժանաւորութեամբ և թէ շատ լաւ դուրս բերած գործող անձինքների բնաւորոշ յատկութիւններով, որոնք տալիս են հանճարեղ դերակատարին շատ լաւ նիւթ: Սրա մէջ հեղինակը վստահ կերպով դիտող հասարակութեան առաջն է դնում մի շատ հետաքրքիր հարց, որը վերաբերում է ինչպէս ասացի «պատիւ» կոչուած գաղաբարի որոշմանը: Հեղինակը վստահ կերպով մեղադրում է ժամանակակից հասարակութեանց այն բանի մէջ, որ պատուի հասկացողութիւնը սխալ ու աղաւաղուած կերպով են հասկանում: Նա պատկերացնում է հանդիսատեսների աչքի առաջ կենդանի պատկերներ մեր ժամանակակից մարդկանց: Գրանից մի մասը՝ որոնք ինչպէս ասացի, հարուստ լինելով, իրանց իրաւունք և լիովին օրէնք են համարում առանց խղճահարուելու գնել փողով մի աղքատ օրիորդի պատիւը: Իսկ միւս մասը, իբրև ողորմելի արարածներ, որոնք ըստ երևոյթին իրանց բազդաւոր են կարծում, հնարաւոր են համարում ծախել փողով պատիւ ասած վէճ ու նուիրական գաղաբարը:

Հեղինակն ահա այդպիսի մի բարոյապէս ընկած հասարակութեան մէջ երևան է հանում երկու իրօք պա-

տուր տէր ու կրթուած անհատներ. մէկը նոյն հասարակութեան անդամներէց, իսկ միւսը մեծացած ու սնուած հետու այդպիսի անբարոյականացնող հասարակութեան ազդեցութիւնից: Այդ մարդկանց հէնց տուաջին չփութից հին հասարակութեան հետ երևում է այն անդունդն ու սաստիկ տարբերութիւնը, որը կայ երկու պատուաւոր անհատների և հասարակութեան մէջ: Այդ երկու մաքուր, անբիծ ու անարատ, հետու ամեն տեսակ փարիսեցութիւնից, ներկայացուցիչները պատուի վրայ ունեն այն հասկացողութիւնն ու գաղաբարը, ինչպէս թէ մի սուրբ պարտականութիւն:

Կարճելով մեր խօսքը պիտի ասենք, որ այս գրուածքը թէ ձեռի, թէ բեմական և թէ գործող անձանց բնաւորութիւններէ կատարելութեամբ օրինակելի մի դործ է Եւրոպական գրականութեան մէջ: Մինչև անգամ երկրորդական տեղ բռնող անձնավորութիւնները պիտի մէջ երեւց բնաւորութեամբ, կարծէք, մարմնացած են երևում:

Գիտենալ մի քանի բառով մի ամբողջ բնաւորութիւն ու տիպ դուրս բերել, յիրաւի, դա զարմանալի է. օրինակ երրորդ գործողութեան մէջ այդ բանը լաւ է երևում, որտեղ հեղինակը, կարծէք, մի բարոյական դասախօսութիւն է անում: Մինչև անգամ նրանց հոգևորականները, քահանաները, փաստօրները ժողովրդին քարոզելիս իրանց բեմբասացութեան բնաբանն ու նիւթն առնում են այս պատիւ վերնագրով, պիտից, որտեղ, յիրաւի, բարոյախօսութեան համար շատ լուրջ և առատ մաքեր կան:

Զուգերմանը իր այս գործով տեղ է բռնել արդէն ամենայնառաջնակարգ գրողների հետ դրամատիկական բանաստեղծութեան պատմագրութեան մէջ: Նա այդ գրական աշխատութեամբ նոր հոսանք ու նոր ուղղութիւն է տանող ընդ XX-որդ դարի համար Եւրոպական գրականութեան մէջ: Այս պիտի մի տարուայ ընթացքում թարգմանուած է բոլոր Եւրոպական լեզուներով: Առտի ես ևս անհրաժեշտ համարեցի ունենալ նա և մեր հայ նորաբող-

բող ազգային գրականութեան մէջ, որի գեղարուեստական մասը իր ճշմարիտ մարով շատ քիչ է վարգացած: Մեր հայկական մասնակ բեմը, այդ նոր ազգային վարժարանը կարօտ է կրթիչ ու դաստիարակիչ և ժամանակի ոգուն համապատասխանող գրուածքների: Մեծ մասամբ մեր թատրոնի անյաջողութիւնը կախուած է նա և չտպագրուած յարմար պիտեաներից: Մենք կարևոր համարեցինք նա և առաջին եւ երրորդ գործողութիւնների դիկարացիաները վիճազրած պատկերներով զետեղել գաւառական քաղաքներում գիւրութիւն պատճառելու համար: Բացի այդ և մի քանի բեմական յարմարութիւններով գերակատարների վերաբերմամբ, Գալով թարգմանութեան և նրա լեզուին՝ ես յաւակնութիւն չունիմ լիովին նրանց կատարելութեան նկատմամբ: Հաւատացած եմ, որ իմ թարգմանութիւնը զերծ չի կարող լինել պակասութիւններից: Բայց և այնպէս լի պատկառանքով յառաջարկում եմ հայ գրականութեան սառն, անաչառ և անկողմնապահ դատաստանին, որտեղ ճշմարիտ ու անկեղծ քննադատը միայն դէր պիտի ունենայ:

Յար. Ղարապետովան:

18 մայիսի, 1893 թ.

Տփլիս:



...ամսուր իր իցո ին մամի յամախարք միարքա զոչ
...ծարարդար է չից աաչ իոցոմ ուրկանէ զի զսան մայ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻ

...աճ մնորս վիամանսն մ չիբրդախաար աս չիկիլ է աօղալ
...աակի դին զնասան ճՆՄ իրմեջ ճաւոյր բոմասասանսան

ԼԱՐ զմալիւրոջմա վմոյ

...մ ամ զմիքմդանաճ զոնդար զմՄ ըլիմմմմիլ զանդալ
...դդմմալապալմի իգմմմիլիւրոնոցոյր ղոզոյն աս միջատո

ԲԱՐԵԿՐՈՆ ՆԵՐՍԷՍ ԱԻԱԳ ԲԱՀԱՆԱՅ

...մ իրա իլաՄ ղանաճ աս ղոնաճատար միկնոյոյր նաոյն
...իլմմգատամոցի իոզմմմիլիւրոնոյն ղալ մարանն զմալ ին

ՏԷՐ-ԲԱՐՍԵՂԵԱՆՅԻՆ (ՀԱՂՊԱՏԵՑԻ)

...մանիւրիդատալ զմալմ միլիոյ նիմոյ մալիւրմիււալ աս
...զմիկնոմանքոյն նի ղո նմ ճարատաւաճ ղնամտարմ

Նուիրում է

...մա մ զլաՄ ըլիմմմմիլիւրոնոցոյր ղմմի ղոզալ վ ճոց
...ոմմալոց ղաճ նմ նաոյնալաւալ իոզմա ասրտար ի սէր

ԼԻ ԵՐՍԻՏԱԳԷՏ ՍՐՏՈՎ

...միմատատար ճարտարմմմալ աս ղոնաճ ասրտար
...վմիլ ղէլ մրամ ղարտարմմմալ աս ղոնաճ ասրտար

Հայ Թարգմանիչը:

...պիվճ

ԳՈՐԾՈՂ ԱՆՉԻՆՔ

ՄԻԻԼԻՆԳԻ, գործարանատէր:

ԱՄԱԼԻԱ, նորա կինը:

ԼԷՕՆՈՐԱ, նորա աղջիկը:

ԿՈՒՐՏ, նոցա որդին:

ԼՕՏԱՐ-ԲՐԱՆԻՏ:

ԳՈՒԳՕ ՇՏԵՆԳԵԼ:

ԿՈՄՍ ՖՅՆ-ՏՐԱՍՏ ՉԱՐԲԵՐԳ:

ԽԷՅՆԻՎԷ ԶԱՅՐԸ:

ԽԷՅՆԻՎԷ ՄԱՅՐԸ:

ՐՕՔԵՐՏ

ԱԼՄԱ

ԱԻԳՈՒՍԱ

ՄԻԻԱԼՍԿԻ, Աւգուստայի ամուսինը:

ԳԵՐԵՆՍԱՐԷՅՏ, այգեպանի կինը:

ՎԻԼՀԷԼՄ, սպասաւոր:

ԻՕԳԱՆ, կառապան:

Կոմս Տրաստի ծառայ՝ Տեղկացի:

Գործողութիւնը կատարում է Միւլինգի գործարանի մէջ, Նարլոտտենբուրգում, Բերլինի մօտ, մեր ժամանակ:

ՀԵՂԻՆԱԿԻ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆԸ:

ՄԻԻԼԻՆԳ: Սառը բնաւորութեամբ, իւր գործի տէր, խելքը գլխին, բայց ոչ չարագործ մարդ: Ինքն իրեն համարում է մի մեղմ, ամենքին սիրելի մարդ և սիրում է, որ ուրիշներն էլ նորան այդպէս ճանաչեն:

ԱՄԱԼԻԱ: Դիւրագրգիռ, վրդովուող մի կին է: Աշխատում է ցոյց տալ, թէ միայն իւր փոզերով է առուտուր անում մարդը, և որ նրա առևտրական գործերի ծաղկելը մի միայն իւր մէջ գրած փողերի շնորհիւն է եղել:

ԼԷՕՆՈՐԱ: Մի լուրջ, հասարակ ու բարի աղջիկ է, միայն եղբոր բարեկամների մօտ պահում է իրեն ինչպէս մի նազելի, աշխարհիկ օրիորդ, թէ և մասամբ մեծամիտ:

ԿՈՒՐՏ: Ներկայացուցիչ թեթև սօլիկ ու սնուցարժ «ոսկի երիտասարդութեան», բայց ոչ այնպէս չարասիրտ: Մինչև անգամ բեմի վրայ չորրորդ գործողութիւնում, երբ նա մեղադրում է գողութեան մէջ Ռօբերտին, արտայայտում է աւելի բուրբանական կատաղութիւն, քան թէ բնածին չարութիւն:

ԼՕՏԱՐ-ԲՐԱՆԴ: Մի մարդ, որ սրախօս լինելու լաւակնութիւն ունի, օրինակելի է և բոլոր արտաքին ձևերով իրեն պահում է «մատաղ Գերմանիայի» ներկայացուցիչ պէս, և որը միացնում է իւր մէջ ընկերութեան պատկանող ուսանողի ու պահապան զօրքի սպայի լատ-

կանիշները: Գիերը կատարում է պարզ և առանց ճիգ թափելու:

ԳՈՒԳՕ-ՇՏԵՆԳԵԼ: Բերլինի «պճնասէր»:

ՐՕԲԵՐՏ-ԽԵՅՆԻԿԷ: Առաջին գործողութեան մէջ հարկաւոր է աստիճանաբար երևացնել պարզահոգութիւնից, համարեա երեխայական պարզ հաւատից, կասկածոտութեան ու թերեհաւատութեան փոխուելը: Երրորդ գործողութիւնը պիտի անցնի առանց աւելորդ ոգևորութեան կամ կրքի: Չորրորդ գործողութեան մէջ Ռօբերտը դառնում է մռայլ, չարացած, իրենից դուրս եկած մի մարդ, որը նույն իսկ ընդունակ է սպանութիւն գործելու:


ԽԷՅՆԻԿԷ: Մի գլխից դուրս տուող ծեր է. միշտ կիսաբերան ծիծաղում է:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Բարի ու մի տխմար պառաւ է: Ռօբերտի ծնօղների վատ վարմունքները և բացասական վարք ու բարքը հետևանք են իրենց ամբողջ կեանքում ունեցած աղքատ ու չքաւոր կենցաղավարութեան և ոչ թէ բնածին հակման:

ԱԼՄԱ: Մի դատարկագլուխ, լիմար և իւր դրութիւնը չիմացող աղջիկ է: Երրորդ գործողութեան մէջ, սկզբում Ռօբերտի հետ նա անկեղծ է երևում իւր զղջման մէջ, բայց միայն երբ մերժում են նրան և թող չեն տալիս պարահանգէս գնալու, որը նորա կարծիքով մի անմեղ խնդիր էր, երևան է հանում իւր լանդգնութիւնը և իր վատ կողմերը:


XI—րոզ երևայթաւ, III-որդ գործողութեան մէջ, Արման չի մասնակցում ընդհանուր տեսարանին, այլ զբաղուած է միայն իւր պրճրանքներով:

ԱՌԳՈՒՍԱ: Մի ազահ, խորամանկ, բալց խելացի կին է:



Handwritten text in Armenian script, likely a technical description or explanation of the circuit diagram above. The text is written in a cursive style and is somewhat difficult to read due to the handwriting and fading.

1 և 3 Գործարանայն Կրտսերուն (Կրտսեր)



1. ... Կրտսերայն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն
2. Կրտսերայն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն
3. Կրտսերայն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն
4. Կրտսերայն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն
5. Կրտսերայն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն
6. Կրտսերայն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն
7. Կրտսերայն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն
8. Կրտսերայն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն
9. Կրտսերայն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն
10. Կրտսերայն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն Կրտսերուն

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Խէյնիկէ ծերերի սենեակը: Հասարակ մաշուած սարք ու կարգով: Մի քանի իրեր, երկու բազկաթու երեսներ մետաքս քաշած, չապիկ հազգրած: Ոսկէզօծ չրջանակով միծ ոտնանի մի հայելի: Գարակների ու հանդերձների պահարանների վրայ տնային կոտորուած գանազան իրեղէններ: Աջ կողմից (հասարակութիւնից) բազմոց և սեղան, սուրճի գաւաթներ իրենց պարագաներով: Ձախ կողմից մի հասարակ դազկեան մի աման լի սոսինձով: Կարածների մի կապոց և մուղաւանների պատրաստաւի մի շեղջ: Չնայելով աղքատիկ կահաւորութեան սենեակը լի է գանազան ցնցոտիներով, անպէտք իրեղէններով, պատից կախած են էժանազին վիմազբած պատկերներ: Գարակների վերայ մուղաւաներ, հին յաղճապակեայ բաժակներ, շաքարաման և մի էժան դնանոց վազա:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի

ԽԷՅՆԻԿԻ.-ՄԱՅՐԸ. (ուշի ուշով աշխատում է կարգի
ընտրել սենեակը) եւ ԳԻՒՆԵՆԱՏՐԵՅՑ:

ԳԵՐԵՆ. (դռնից աջ ուղղուելով). ձե՛շտ է ու-
րեմն, որ եկել է ձեր որդին:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Սո՛ւս, սո՛ւս, նա քնած է:

ԳԵՐԵՆ: Այնտեղ, օրիորդ Ալմայի փոքրիկ սենե-
կում:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Այո, այո. մի խօսքով չը գիտեմ
ինչ անեմ, ուրախութիւնիցս խելքս թռցրել
եմ: (ընկնում է քաղկաթոռի վրայ):

ԳԵՐԵՆ. Գիտե՞նք տան տէրերը նրա գալը:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Ինչպէս չէ. ինքը հրամայեց յայտ-
նել. չէ՞ որ նրա տէրերն են և նրանց շնոր-
հիւն է, որ մի կտոր հաց ունենաք:

ԳԵՐԵՆ. Շատ տարի է, որ նա օտարութեան
մէջ է:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Եօթ—ութ թէ ինն տարի կէս է.
այդքան ժամանակ է, որ չեմ տեսել երե-
տիս:

ԳԵՐԵՆ. Ե՛, շուտ ճանաչեցիք նրան:

ԽԷՅՆ. Այդ էլ խօսք է: Երեկ երեկոյեան, այս-
պէս մօտ ութ ժամին, իմ ծերուկն օղտ-
նից հարբած ներս պրծաւ, իսկ ես հենց այս-
տեղ նստած Ալմայի շապիկն էի կարկատում:

Երանի իմանաք թէ այդ իմ աղջիկը որչափ ճեր-
մակեղէն է մաշում: Յանկարծ լսում եմ դու-
ռը բախում են. նայում եմ, ներս է մտնում մի

տղամարդ և ասումէ. «տես ինչ տղամարդ
եմ.» այն ինչ իսկն ասած մի պարոն, այն էլ
սամուր մուշտակ հագած: Տես ահա նա կա-

խած է այնտեղ. մի մորթուն ձեռք տուր, տես:
Իսկ ես էլ այնպէս էի կարծում, թէ աղջ-
կանս ծանօթներից կամ երիտասարդ տան

տիրոջ սերտ բարեկամներից մէկը կըլինէր:
ԳԵՐԵՆ. Լաւ. յետո՛յ:

ԽԷՅՆ. Նրանք, մեր տէրերը, շատ պարզ սրտի
տէր մարդիկ են. սիրում են գալ մեզ պէս
խեղճ մարդկանց մօտ և զրոյց անել: Մինչ-

դեռ ես այդ մտածման մէջն էի, նա յան-
կարճ ձգեց իւր գլխարկն և մուշտակը յատակի
վրայ, ուղղակի դիմեց դէպի ինձ և անմիջա-

պէս առաջիս ծունկ չոքելով՝ աղաղակեց.
«մայրիկ, մայրիկ, միթէ՛ ինձ չը ճանաչեցիք.
չէ՞ որ ես ձեր որդին եմ:» Ո՛հ, Տէր իմ, ինչ

սքանչելի բոպէ էր և ինչպէս դիմացայ ես
այդպիսի մի ուրախութեան:

ԳԵՐԵՆ. Ինչ՞ էք ասում, սիրելի դրկից, միթէ՛ ու-

բախութիւնից մարդ կը մեռնի: Գիշերը կատուն գորշ կերևայ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ո՛չ, այդպէս մի ասէք, իմ որդին լաւ զաւակ է, նա ազնիւ մտքերի տէր է:

ԳԵՔԵՆ. (հեզօրէն). Ինչպէս չէ, չափազանց առաքինի է, նա այնքան աշխարհներէ տեսել, ուսումնասիրել, մետաքսի, թաւշի մէջ է մեծացել. . . .

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (ցուց տալով քաղկաթոռը). մետաքս ասենք մենք էլ ունենք:

ԳԵՔԵՆ. Գեռ հարց է, կըհաւանի նա ձեր մետաքսը

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Անշուշտ. որովհետեւ ամէն պաշտօնից ու հարստութիւնից վեր է նրա համար մայրական գութը: Ախ՛, ուր՞ է կորել իմ ծերուկը: Չէք տեսել նրան: Ո՛ւր կորաւ այն կաղը:

ԳԵՔԵՆ. Նա կանգնած էր այս ցրտում և ահագին կարտօնը ձեռքին արագակի զէմ բռնած. «չորացնում եմ», ասում էր:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ինչ արած: Պէտքէ թողնել ծերուկը մի քիչ զուարճանայ. մինչև կէս գիշեր հէնց այն է կարտօնները իրար էր կպցնում: Վերջապէս ամբողջ գիշերը ուրախութիւնից աչքերնիս երկուսսէլ չը կպցրինք:

ՏԵՍԱՐԱՆ 11

ՆՈՅՆՔ ԵՆ ԽԵՅՆԻՍԷ (ներս է մտնում կաղի տալով, ձեռին բռնած մի ահագին հանդիսանկար):

ԽԵՅՆ. (ցոյց տալով հանդիսանկարի խորագիրը): Ուրա՛, վերջապէս պատրաստ է:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ինչ էս գոռում:

ԽԵՅՆ. (հանդարտ) «Բարի ես եկել քո հերանց տունը, թանկագին որդեակ:» Ոն՛ց է, լաւ է շինած:

ԳԵՔԵՆ. Կասեա զինւորի հրացանի շրջանիչ լինի:

ԽԵՅՆ. Ուզիդ է, իսկ հայրական սիրտն էլ հէնց մէջ տեղն: Ա՛, մի նայիր է. . . ա՛, պառաւ: (քարծրանում է փոքրիկ ժուրճը ձեռին անթողի վերայ, որպէս զի հանդիսանկարը պատին ամրացնէ):

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Վերջապէս, բաւական է, փակիր բերանդ:

ԳԵՔԵՆ. Ձեր որդին սրտեղ է ստացել այդ կրթութութիւնը ու առաքինի ազնուութիւնը: Ի հարկէ, ձեր բնատանիքում չէր կարող ստանալ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ի հարկէ, ինքն ըստ ինքեան այդ այդպէս է: Ահա՛, հոգիս, թէ ինչպէս է եղել: Տասն եօթը տարի սորանից առաջ մեր տան տիրոջը մի ինչ որ վաճառականական խորհրդականի աստիճան տուեցին: Այդ առիթով նա ճրագալուցցով սարքեց մի մեծ խնջուք: Տականներով գարեջուր ու գինի էր, որ կրում

էին գործարանի բոլոր ծառայողների համար: Իմ մարզն էլ այնտեղ մի լաւ թուջուկ... Էր Ինչ ես այդպէս բողոքում դու, ծերուկ... Մի բան, որ առանց փողի է, ինչո՞ւ չիմես: Հիւրերը կառքերով իրենց տները ցրուելիս, ծերս պատահմամբ կառքի տակով էր եղել, կառքն անցել էր ձեռն ու ստի վրայով:

ԽԷՅՆ. Եւ այն էլ ինչպէս. հեշտ բան չը գիտենաս (սուղում է):

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Մի՛ սուղիր: Տան տէրը լսել էր այդ դէպքի մասին և սկսել էր հարց ու փորձ անել թէ ո՞վ է, որտեղից է և ինչով է ապրում: Ուրախութիւնից նա շատ բարի էր դարձել. այնպէս, որ խոստացաւ մեզ վերայ մի քիչ խնամք տանել: Բացի դրանից՝ խօսք տուեց մեր մեծ որդուն էլ իւր հաշուով ուսման տալ մարդ շինել:

ԳԷԲԵՆ. Բայց խոստումը կատարեց թէ ոչ:

ԽԷՅՆ. Է՛հ, զրոյր տանի նրանց:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Է՛հ... Ինչպէս ասեմ: Տան տէրը վերին յարկում մեզ մի փոքրիկ սենեակ տուեց և այնտեղից մինչև այժմ դուրս չարաւ, իսկ մեր որդուն ուսումնարան տուեց, նա կրթութիւն ստացաւ ու քիչ ու միչ տաշուեց կոպտութիւնից: Բայց երբ նա տօներին տուն էր վերադառնում, տան տէրերը միշտ իրենց մօտ էին տանում, շօխոլատով հիւրասիրում, ստիպում էին օրիորդների հետ խաղ անել: Երիտասարդ աղան այդ ժամանակ զեռ մանուկ էր:

ԳԷԲ. Ուրեմն, ձեր որդին, նշանակում է, աղջրկանիցդ աւելի բաղտաւոր է եղել, այնպէս չէ: ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: (հանդարտութեամբ) Է՛հ, ինչ անես: ԳԷԲ. Այո՛, այո՛, ես էլ այդպէս եմ կարծում:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Իսկ յետոյ նորան ուսման ուղարկեց, այն է՛ իւր զբասնեակում նստեցրեց, որ արտասահմանի վաճառականների հետ գործեր կատարէ: Երբ նա 19 տարեկան դարձաւ, նորան ուղարկեցին Հնդկաստան, որտեղ շատ շոքեր են լինում, ասում են: Այնտեղ ապրում է մեր տան տիրոջ եղբօր որդին, որը սուրճի ու թէյի առևտուրով է պարապում:

ԽԷՅՆ. (սանդուղից ցած իջնելով) Այդ բոլորը այնտեղ այնպէս է բուսնում, ինչպէս մեզանում եաւշան ծաղիկը: (ցած է իջնում) Յը՛, ինչպէս է, փառաւոր է:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Մեր որդին նորա մօտ, իբրև գործակատար, շատ ձեռնտու էր դարձել. է՛հ, փառք Աստուծոյ, որ նա այժմս էլի տանն է: Օ՛հ, էլի սկսեցի շատախօսութիւն անել:

ԳԷԲ. Գնում եմ, դնում: Մնա՛ք բարով... բայց և այնպէս, նորան երես միք տայ: (մի կողմ դառնալով) Է՛հ մարդիկ են էլի (հեռանում է):

ԽԷՅՆ. (նորա նստելից): Ինքդ էլ պակաս օձը չես:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն III

ԽԵՅՆԻԿԷ ԵՒ ԽԵՅՆԻԿԷ-ՄԱՅՐ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ. Նախանձից է, բոլորը նախանձից, ծերուկ:

ԽԵՅՆ. Այս ինչ՞ սատանայութիւն է. որտեղից ես ճարել այս քաղցր կարկանդակը:

ԽԵՅՆ-ՄԱՅՐ: Ճան տիրոջ խոհարարուհին էր բերել: Նրանց օրիորդն է ուղարկել: Պատուիրել է բարևել:

ԽԵՅՆ. (երեսը դարձնելով): Սաստիկ զգուած եմ տան տիրոջ ամեն բանից. բայց ժամանակն է մեր ազնիւ, առաքինի որդին վեր կենալ. շուտով ճաշի զանգը կը տան: (զմայլում է հանդիսանկարով) «Գալգ բարի, որդիս»:

ԽԵՅՆ-ՄԱՅՐ: (ընդհատելով) Ծերուկ, այտեղ է նա ահա:

ԽԵՅՆ. Ո՞վ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Մեր որդին:

ԽԵՅՆ. (ցոյց է տալիս հանդիսանկարը) Գիտեմ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Լսում ես, շշուկ է լսում... (ականջ դնելով) կարծեմ կօշիկներն է հագնում. շատ հաւանական է կօշիկները հագնի և իսկոյն այս դռնից ներս մտնի:

ԽԵՅՆ. (հպարտութեամբ) Ես նորան միայն պիտի ասեմ, «բարի լինի գալգ».....: Իսկ դու գրե՛լ ես Ալմայի ֆրանսիական հոտաւէտ սաղոնը, որ նա լուացուի:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ (ականջ չը դնելով): Քանիցս անգամ ես այտեղ նստած, մտածել եմ նորա մասին, թէ ինչպէս է քնում նա, ինչպէս է ապրում, հօ չէն կերել նրան այնտեղի վայրենի մարդիկը: Եւ ահա նա էլի իւր տանն է, գիտես, ծերուկ, տանն է: Վերջապէս, թո՛ղ այդ չամիչները, բաւական է քչփորես:

ԽԵՅՆ. Քեզ ինչ, ինձ գիւր է գալիս:

ԽԵՅՆ. Հանդարտ, կարծես գալիս լինի: Ախ՛, Տեր՛ Աստուած, էլի փողպատդ գուրս է ընկել: Քո բանը կատարեալ ամօթ ու խայռաակութիւն է: (բազկաթողի վերայ եղած չիժէ շապիկները ուղղում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն IV

Ն Ո Յ Ն Ք ԵՒ Բ Օ Ւ Ե Ր Տ:

ԲՕՐ. (վրայ պրծնելով ծնողներին, որոնք կանգնած են յուզուած կերպով) Բարով հայր իմ: Աստուած իմ, որքան բազբաւոր եմ ես: Բարով մայրիկ... (համընդունում է նորա ձեռը):

ԽԵՅՆ. «Գալգ բարի, որդեակ... (տեսնելով, որ Բօրերարը կամենում է նորա ձեռը համընդունել, արագութեամբ քսում է ձեռը իր վարտիկին): ուզումես ձեռս համբուրել:

ԲՕՐ. Ի հարկէ, հայր, եթէ թոյլ կը տաս:

ԽԵՅՆ. (ձեռը պարզում է): Իսկոյն երևում է լաւ որդի լինելդ:

ԲՕԲ. (յետ նայելով) Այսպէս ահա, վերջապէս
 ես տանն եմ: Ինքս էլ չը գիտեմ... գն-
 ցէ այս ամենը երազէ: Ո՛հ, Աստուած իմ,
 հայրենիքի, հայրենիքի կարօտը, սրբան վիշտ
 է պատճառում մարդու, այն, հայրենիքի կա-
 րօտ. պատահում էր երբեմն գիշերները
 քնած ժամանակս վառ կերպով պատկերա-
 նում էր առաջս այն բոլորը, ինչոր հայրե-
 նական է. հայր, մայր, այգի, պարտէզ, գործա-
 րան, դաշտեր, ձորեր և այլն: Բացեմ անում
 տէքերս, տեսնում եմ վերաս կախուած է ար-
 մաւենու ճիւղը, իսկ հեռուից լսում է թուխ-
 կի ձայնը: Սթափուում և զգում, որ ես միայն
 հեռու աշխարհի միւս ծայրումն եմ. ահա,
 այսպէս էին իմ օրերը:

ԽԷՅՆ. Թութակներ: Այդ ինչ լաւ բան ես տեսնելիս
 եղել: Մեզանում հօ թութակները միայն հա-
 րուստների տներում են լինում:

ԲՕԲ. Այն, բայց պէտք է իմանաք թէ, վերջին
 տարիները ես ինչպէս էի վախենում այնտեղ ...
 Նոյն իսկ ճանապարհին՝ տուն դառնալիս՝
 ինքս ինձ հարց էի տալիս. արդեօք կը գը-
 տնեմ իմ հայրենիքում, մեր տանը, այն ամե-
 նը, ինչ որ ես ինձ պատկերացնում էի:

ԽԷՅՆ. Ինչո՞ւ համար չէ:

ԲՕԲ. Այնտեղ մի լաւ բարեկամ ունէի, որը փոր-
 ձում էր սառեցնել ինձ հայրենիքիս մա-
 սին ունեցած յոյսերից: «Գու արգէն խոր-
 թացել ես, աւելորդ է փորձել ամբողջանել
 այն, ինչ որ ժամանակի ու ճակատագրի ձե-

ռով բաժանել են, ասում էր նա: Եւ ուրիշ
 այսպիսի շատ անմիտ բաներ: Այդ ժամանակից
 վախ ընկաւ սիրտս թէ ձեզ և թէ ինձ համար:
 Ե՛հ, փառք Աստուծոյ, այժմ այլ ևս վտանգ չը
 կայ: Բոլորը կատարուեց համաձայն իմ ցանկու-
 թեան՝ տեսնում եմ հայրենիքս միացած. բոլորն
 այնպէս գտայ, ինչպէս տասը տարի առաջ էի եր-
 ևակալում: Ահա հայրս, ահա մայրս, սիս, սրբան
 սիրեկան ու բարի են... ափսոս մի քիչ ծե-
 րացել են... Բայց ինչո՞ւ համար են իմ այս
 ձեռները: Միայն մի փոքր սպասեցէք: Քոյրերս
 էլ կ'աշխատեն: Ահա այստեղ է և իմ պապա-
 կան օսլայով լի հին ծաղկամանը... գործա-
 րանի շոգեմեքեման ևս բոլոր ժամանակ՝ ա-
 ռաջուայ պէս ուրախալի աղմուկներ է հա-
 նում:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Գուցէ մեքենան ամբողջ գիշերը քեզ չը
 թողեց, որ քնես... սաստիկ աղմուկ է հանում:

ԲՕԲ. Ո՛չ, ընդհակառակը, նորա հանած աղմուկը
 օրօրոցի երգից աւելի քաղցր էր թւում ինձ:
 Քունս աւելի լաւ էր տանում: Բոլոր ժամա-
 նակ մտածում էի. զէ՛հ, հնչի՛ր, բաղի՛ր, հի-
 նաւուրց բարեկամ, մի՛ ծուլանար, բայց ինչ-
 քան էլ աշխատես, չես կարող Միւլինգի տան
 անուկը իմ չափ հօջակել: Մի՛թէ չեմ կարող
 պարծենալ ես: Եւ հենց այդ ժամանակ միտ
 ընկան մեր բարեբարները:

ԽԷՅՆ. Գուցէ ինչ...
 ԲՕԲ. Գուցէ ինչ...
 ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
 ՀՊՈՒՆ — ՀՍՏԱ
 Մ. Ա. ՄԱՅՐԱՅԱՆ
 ԿՍՏԱՆՍՊՈԼ 1922



1001
 29092

ԽԷՅՆ. Ե՞ս: Ո՛չ, ես ոչինչ չասացի:
ԲՕԲ. Ես այդ բոլորից ուխտեցի աշխատել նորանց

Համար մինչև վերջին շունչս:
ԽԷՅՆ. Կարծում եմ, որ դու նորանց Համար շատ ես
աշխատել:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Տանջուեցիր, դեգերեցար դու նորանց
Համար այս տասը տարուայ ընթացքում:

ԲՕԲ. Ե՛հ, այնքան էլ ոչ, մայրիկ: Սակայն, թող-
նենք այս խօսակցութիւնը: Միւլինգի օճախը
ամեն օր ինձ շնորհակալութեան նոր առիթ
էր տալիս: Այն նամակները, որ ես ստանում
էի տան գլխաւորից, մանաւանդ Կուրտից, որ
այժմ նոյնպէս առուտուրի ընկեր է՝ շատ բա-
րեկամական էին:

ԽԷՅՆ. Կու՛րտ... ս՛հ, նա մի լաւ տղայ է: Բայց նա
էլ յետոյ այնպէս կըլինի, ինչպէս առհասա-
րակ ամենքը: Հենց որ էլ պետք չես գալ՝
դուրս կանի: Այդ տեսակ մարդկանց բնաւո-
րութիւնը ես լաւ գիտեմ:

ԲՕԲ. (կամենում է պատասխանել, ըայոյ լռելեայն
ու նեղացած յետ է դառնում):

ԽԷՅՆ. Որդիակա, ոչինչ չէս տեսնում: Ա՛յ կին,
դեռ չի տեսել:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Բաւական է, քիչ դուրս տուր:

ԽԷՅՆ. Ին՞չ: Դո՛ւրս տուր: Եթէ ես սիրալիր կեր-
պով ընդունում եմ իմ թանկագին որդուն իւր
հայրական տան մէջ, այդ քո կարծիքով դուրս
տալ է նշանակում... (Բօրերտին մտնցնում է

հանդիսանկարին): Ին՞չպէս ես տեսնում:
Ին՞չ կարծիք ունիս դու սորա մասին:

ԲՕԲ. Այս դո՛ւ ես շինել, հայրիկ, այդ քո սախատ
ձեռքով:

ԽԷՅՆ. Դա ի՞նչ բան է որ: Ես կարող եմ ուրիշ
աւելի լաւ բաներ շինել: Եթէ ես սախատ՝
խեղճ տեղովս չը կարողանայի աշխատել, մեր
ամենապատուկան այս փոքրիկ գերդաստանը
քաղցից վաղուց մեռած պիտի լինէր: Ա՛յ կին,
ին՞չ ես պարսպ այստեղ կանգնել. ինչո՛ւ չէս
սուրճ բերում:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Օ՛հ, էլի... (դուրս գնալով):

ԲՕԲ. (նորա ետեւից): Մայրիկ, մայրիկ, հաւա-
տացնում եմ, որ հայրիկը դորանով չէր ու-
զում քեզ վերաւորել:

ԽԷՅՆ.- ՄԱՅՐ: Ին՞չ նեղանալ: Եթէ իմանաս, նա նրա
համար է այդ ձեով խօսում, որ դու կարծես
թէ նա այս տան մեծն է: (դուրս է գնում):

ՏԵՍԱՐԱՆ V

(ԼՌՈՒԹԻՒՆ).

ԲՕԲ. (Աշխատում է վարնագուրել անախորժ տե-
սարանը) Աստ՛, խնդրեմ, հայրիկ, դու դարձեալ
առաջուայ պէս արկղիկներ շինո՞ւմ ես:

ԽԷՅՆ. Ին՞չպէս չէ:

ԲՕԲ. Ձեռդ չի՛ խանգարում:

ԽԷՅՆ. Չեռ՝ս... Հո՛, Հո՛, Հո՛, ... ձեռն: Կո՛ւզես տես, ին՞չպէս եմ կպցնում. առաջ վեր եմ առնում կարտօնը, ահա այսպէս... տես, տես... յետոյ կորացնում եմ այսպէս: (Չախ ձեռով քոնելով կարտօնը, վրձինով քսում է օւլանն): Ապո՛, ինձ նման սախատից ո՞վ կարող է աւելի լաւ շինել:

ԲՕԲ. Յիրաւի, կատարեալ ձեռնածու ես եղել:

ԽԷՅՆ. Այո՛, իսկապէս ձեռնածու եմ, միայն ինձ հասկացող չկայ: Ո՞վ է ինձ, օգնողը. ոչ ոք: Պարզ բան է, որ մեր երկու աղջիկներն էլ այս դէպքում չեն կարող դէպի ինձ յարգանքով վերաբերուել... ասենք մէկն արդէն մարդու է գնացել... բայց ինչ անես, քանի որ հարազատ մայրը ինքն է վատ օրինակ տալիս:

ԲՕԲ. (նախատանօք) Հայր:

ԽԷՅՆ. Ի հարկէ, դու գեռ մեր բաները չը գիտես: Հեռուից նայելիս ամէն բան լաւ է երևում: Մի գլուխ լսում ես անուշ խօսքեր. սիրելի մայրիկ, սիրելի քոյրիկ և այլն... բայց եթէ իմանալիր, այստեղ ինչեր են անցնում հօրդ գլխով: Մայրդ մինչև անգամ ձեռքարշի փող չի տալիս ինձ, երբ քաղաք եմ ուզում գնալ մի բաժակ գարեջուր խմելու:

ԲՕԲ. Հայրիկ, դու չափազանց անարդար ես դէպի մայրս: Մթթէ նա քեզ իւր աչքի լոյսից աւելի չէ պահպանում:

ԽԷՅՆ. Ախ՛, տէր Աստուած, ես Հօ նորա մասին վատ բան չեմ ուզում ասել: Սո՛ւս... գալիս է: ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: (ներս է մտնում՝ արձամանը ձեռին) Գէ՛հ... նստիր, որդեակ, նստիր այստեղ. այստեղ՝ բազկաթուռի վերայ: Քիչ համբերիր (հանում է քաղկաթոռի շապիկը): Մեր ազիզ աղայի տեղը մետաքսի վերայ պիտի լինի:

ԲՕԲ. Տէր Աստուած, այս ին՞չ փարթամութիւն է: ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Այո՛, այո, ահա մէկն էլ նոյնպէս մետաքսով պատած: Մենք, գիտես, դրանից երկուսն ունենք: Տեսել ես հայելին, ամբողջ շրջանակը ոսկէգօծ է, իսկ ապակին սաղ կտորից: Մեր փեսան ասում է. ամենաքիչը նորա գինը հարիւր տալեր է:

ԲՕԲ. Բայց սրտեղից էք ձեռք բերել այդ բոլոր վայելուչ իրեղէնները:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Տան տէրն է տուել:

ԲՕԲ. Ուրեմն նա ձեզ այդպիսի ընծաներ է տալիս:

ԽԷՅՆ. Այսինքն, իսկապէս, ասած...

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: (հանդարտութեամբ) Սո՛ւս... սո՛ւս... դու չը գիտես, որ մեր երիտասարդ տան տէրը չի սիրում իւր մասին խօսեն: (ըարծրածայն): Ին՞չպէս չէ: Անցեալ տարուայ գատիկն մի եռոտանի հայելի ընծայեցին, այս տարի էլ բազկաթոռներ: Գո՛ւ, ճերո՛ւկ, կարկանդակը քիչ քրքրի:

ԲՕԲ. Այդպիսի առատաձեռնութիւնը աչքիս լաւ չի երևում:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: (սուրճ լցնելով) Ե՛հ, ասում ես: Չէ որ

այդ իրեղէնները հօ ամենքի համար չեն: Բայց ինչ անես, քանի որ յաճախ առիթ ենք ունենում նշանաւոր հիւրեր ընդունել...: Մեր որդին համարեա աղայ մարդ է, իսկ մեր աղջիկը խելացի ու տաղանդաւոր:

ԲՕԲ. Ալման:

ԽԵՅՆ. Այո՛ այո՛: Մենք մեր աղջկայ համար ամեն բան արինք, ինչ որ մեր ձեռքից եկաւ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Իսկ դու, որդեակ, հենց դրա համար էլ, միշտ մեզ շատ փող էիր ուղարկում:

ԲՕԲ. Այո՛, բայց մեր պայմանն այն էր, որ ուսումը աւարտէր, և յետոյ կար ու ձև, հաշուապահութիւն սովորէր:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ի՛ հարկէ... այդ սկզբում էր...

ԲՕԲ. Իսկ հիմա: Մթթէ նա առանց պաշտօնի է:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Արդէն կէս տարուց աւելի է:

ԲՕԲ. Ուրեմն, այժմ ինչ է անում նա:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (հպարտութեամբ) Պատրաստում է երգչուհի դառնալ:

ԲՕԲ. Ես երբէք չեմ լսել նորա երաժշտական ընդունակութեան մասին:

ԽԵՅՆ. Եւ այն էլ ինչպէս: (սուրճ նն խըմում):

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Նա քննութիւն բռնեց մի իտալուհի երգչուհու մօտ, որին չրգիտեմ սինէօրա թէ այդպէս մի բան են անուանում այն տեղ... նա ասում էր, որ իւր ծնած օրից այդպէս մի ձայն չէ լսել, ինչպիսին է Ալմայինը: Իրան

համար պատիւ է համարում միջև անգամ ճրի դաս տալ Ալմայիս:

ԲՕԲ. Հապա դորա մասին ինչո՞ւ ինձ ոչինչ չը գրեցիք:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ախ՛, տէր Աստուած, այստեղից մինչև Հնդկաստան այնքան հեռու է, որ ճշմամարիտ, միշտ մոռանում ես մի բան գրել և բացի այդ՝ մենք կամեցանք քեզ համար մի սիւրպրիզ (անսպասելի ընծայ) պատրաստել:

ԲՕԲ. (վեր է կենում տեղից եւ վրդովուած այս ու այն կողմն է գնում) Լաւ, իսկ Աւգոստոսան: Նա նորա վերայ հոգ չի տանում:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ի՛ հարկէ, նա նորա վերայից երբէք աչքը չէ հեռացնում: Ալման նորա մօտ համճաշում է, համ էլ պարապում: Իսկ երեկոյանները, երբ ուշանում է, ձիաքարշ չի լինում, մինչև անգամ գիշերը մնում է նորա մօտ:

Այ, ինչպէս այսօր...

ԲՕԲ. Իսկ նորա ուշ տուն վեռագառնալը ձեզ չէ՞ անհանգստացնում:

ԽԵՅՆ. Խ՛ր... խ՛ր... մեծ բան չէ...

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Գիտենք, որ Աւգոստոսան նորան միայնակ չի արձակի: Թէ և պիտի ասել, որ այժմ նա պիտի տանը լինէր: Կաթ ծախող աղջիկը առաւօտեան վաղ մի նամակ տարաւ նրան:

Ո՛րքան կուրախանայ:

ԲՕԲ. Իսկ Աւգոստոսան երջանիկ է պարում:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ինչպէս ասեմ: Պատահում է, որ նորա մարդը մի-մին լաւ կոնծում է, ժամերով

ուշանում ու հովանում է բանից, թէպէտ և...
ԽԷՅՆ. Նա, այժմ... փնթփնթալու ու աղմուկ
հանալու շատ վարպետ է:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Բայց առհասարակ, երևում է, որ նո-
քա ապրում են խաղաղ, հաշտ: Աւգուստան
երկու սենեակ է կահաւորել ու մի Պօտստա-
մբեցի հարուստ պարօնի վարձով է տուել: Նա
մի-մին իջեանում է նորանց մօտ և ամսէ
ամիս վճարում: Այդ էլ տնտեսութեան համար
մի նեցուկ է: Սուրճի համար նա ամեն
առաւօտ մի մարկայ է վճարում: (յուսամուտին
է նայում): Ահաւասիկ փեսայի հետ գալիս է:

ԲՕԲԵՐՏ: Ինչպէս, Ալման նորանց հետ չէ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Վ Ի

ՆՈՅՆՔ, ԱԻԳՈՒՍՏԱ ԵՒ ՄԻՒԱՅԼՍՎԻ:

ԱԻԳՈՒՍՏԱ: Վերջապէս, դու էլ վերադարձար:
(համբուրում են): Դէ, աստ, ինչպէս էիր
ապրում: Այդպէս շքեղ ապրողի մասին թէև
հարկ չկար հարցնելու, ... բայց այն էլ պիտի
ասել, որ ամեն փայլող բան սոկի չէ...: Ահա և
իմ հարազատ ամուսինը:

ԲՕԲ. Դէ, սիրելի փեսայ, տուր ինձ քո ձեռք, բա-
րեկամ գառնանք:

ՄԻՒԱՅ. Խնդրեմ, ինձ համար մեծ պատիւ է:
Շատ հազիւ կպատահի, որ իմ այս կոշտ ձեռ-
ներն արժանանային այդպիսի մի պատուի:

ԲՕԲ. Փեսայ, այդ բարեկամական հոգով չասացիր:

(Աւգուստային:) Իսկ Ալման ո՞ւր է:

ԱԻԳՈՒՍՏԱ: Մեր իշխանուհին դեռ ևս չի գու-
քուել՝ որպէս զի եղբօրն երևայ: Դեռ ծա-
մերն է հիւսում: Երևի, հետևեալ ձիաքարշով
կը գայ: Այս կարկանդակը սրտեղից է:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: (ընդորին տայով կարկանդակը,
Միխայլսկին ուտում է:) Մի կտոր էլ գու-
կէր, որդեակ իմ: (Րօքերտը հրաժարում է
ուտելուց, մ'իաներն ուտում են: Լոուծին:)

ԽԷՅՆ. Նայիր մէկ, Միխայլսկի, ինչ կասես:
«Գալուստդ բարի լինի, թանկագին զաւակ»:
ՄԻՒԱՅ. (ծամծամելով:) Դատարկ բան է:

ԲՕԲ. (զարմացմամբ:) Փեսայ...

ԽԷՅՆ. Ինչ: Այս սախատ ձեռովս սրտիս ուղածի
պէս ես եմ պատրաստել... (Րօքերտին
ցոյց է տալիս:)

ՄԻՒԱՅ. Ես մի հասարակ պարզ մարդ եմ,
միշտ ճշմարիտն եմ ասում... Այդպիսի լիմա-
րութիւններ չեմ սիրում: Ո՞վ է մեզ չափ աշ-
խատողը և սովն ունի է վերայ հասնում, եթէ
ոչ անգործներին:

ԽԷՅՆ. Ինչպէս չէ... մանաւանդ, երբ փո-
խանակ աշխատելու, ամբողջ օրն անդործ
թափառում են ու քաղցր կարկանդակներ խրժ-
ուում:

ԱԻԳՈՒՍՏԱ: Ե՛լի սկսեցիք ձեր հայհուցեանքները. (հըր
մարդուն). գտնէ լեզուդ կարճացնէիր... Չե՞ս
տեսնում, որ ծերը երեխայութիւններ է անում:

ԽԵՅՆ. Ե՞ս: Ե՞ս եմ երեխան: Ահա, այդ էր պակաս... ճարպիկ ես... ինքդ տեսնում ես այժմ, թէ ինչպէս են վարւում զաւակներս ինձ հետ:

ԲՕԲ. (հանդարտ կերպով Աւգուստային:) Ներողութիւն, քոյրիկ, միթէ կարելի է այդպէս խօսել:

ԱԻԳՈՒՍՏԱ. Հապա ինչպէս խօսել: (ըտղիտում են:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն V II

ՆՈՅՆՔ եւ սպասաւոր ՎԻԼՀԵԼՄԸ իւր նշանագրատով, ծաղկի փունջը ձեռին:

ԲՈՒՈՐԸ: (ըացի Բօքերտից:) Ա՛... Վիլհելմ, բարև ձեզ, բարի առաւօտ: (Խէյնիկէն եւ Միխայիլի կին սեղմում են նորա ձեռք:)

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Այդ փունջն ո՞ւմ համար է: Երևի քաղաք մէկին ընծայ էք տանելու:

ՎԻԼ. Ո՛չ, այստեղ ուղարկեցին: Կարծեմ, դ՞ուք էք երիտասարդ Խէյնիկէն: (Բօքերտը զՎիլիով է անում, Վիլհելմը ձեւեր անելով:) Ինձ շատ հաճելի է ձեզ հետ ծանօթանալ: (ձեռը պարզում է:)

ԲՕԲ. (ժպտալով քթի տակից ու ձեռ չի տալիս:) Դուք շատ սիրալիր էք:

ՎԻԼ. Մեծաւորներս ձեր բարի գալուստն են շնորհաւորում: Մեր ջերմանոցում բուսած ծաղիկներից կազմած այս փունջը ձեզ ուղարկեցին: Բայց գաղտնիք լինի, ծաղիկներն

օրիորդն է ուղարկել... առհասարակ ազնիւ օրիորդը՝ շատ...

ԲՕԲ. (իրեն զսպելով:) Միթէ քեզ հրամայել են, որ այդ բոլորն ինձ պատմես:

ՎԻԼ. Ո՛չ, չէն հրամայել, բայց...

ԲՕԲ. Ուրեմն, այդ խօսքերը քո մէջ պահիր: (Վիլհելմը զնում է դռան մօտ:)

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Վիլհելմ, կարկանդակ չես կամենում, մի քիչ մնացել է:

ԲՕԲ. Փոքր ինչ սպասիր, մայրիկ: (սպասաւորին փող է տալիս:) Առէք: Ասացէք ձեր պարոններին, որ ես պատիւ կունենամ ժամը երկուսին նոցա մօտ լինել կոմս Տրաստ Զարբերգի հետ միասին: Այժմ կարող էք գնալ (Վիլհելմը դուրս է գնում:)

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Կոմսի հետ: Ո՞ր կոմսի:

ԲՕԲ. Դա իմ ամենալաւ բարեկամներից մինն է, մայրիկ, ես շատ բանով եմ նորան պարտական:

ԱԻԳՈՒՍՏԱ. (հանդարտութեամբ իւր մարդուն:) Լսում ես, կոմսերի հետ էլ է բարեկամութիւն սկսել:

ՄԻԽԱՅ. (հանդարտ կերպով:) Դորանով ուզում է մեզ զարմացնել:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Տ՞ուր ինձ փունջը ջրի մէջ դնեմ: Լսիր, որդեակ, դու ինչո՞ւ համար Վիլհելմի հետ այդպէս վատ վարուեցար: Մենք, ախր նորա հետ սերտ բարեկամներ ենք:

ԱՒԳՈՒՄՍԱ: Մենք հասարակ մարդիկ ենք. զանազան կոմսերի հետ ծանօթութիւն ունենալ չենք կարող:

ՄԻԽԱՅ. Մեզ միայն սպասաւորների հետ է սազում բարեկամութիւն անել:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Այո՛, այո՛, Վիլհելմի հետ դու պէտք է բարեկամանաս... գոնէ մեզ համար, որդեակի իմ: Նա մեզ շատ բարիքներ է արել: Երբեմն կերակուր է բերում մեզ, երբեմն էլ մի շիշ գինի հասցնում...:

ԲՕԲ. Ախ՛, մայրիկ, մայրիկ... և դու վերցնում էիր:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Ինչո՞ւ համար չէ: Մենք աղքատ մարդիկ ենք, պիտի ուրախանանք մէկը մի բան բաշխելիս:

ԲՕԲ. Մայրիկ, ես աւելի շատ կանչատեմ, բոլորը ձեզ կը տամ, բայց... դու ինձ խոստանում ես, այնպէս չէ՛, որ այդ սպասաւորից դու այլ ևս ոչինչ չես վերցնիլ:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Ախ՛, որդեակ իմ, չէ՛ որ այդ արգէն հպարտութիւն կը լինի մեր կողմից. ինչո՞ւ աւելորդ ծախսեր անենք... ինչո՞ւ լաւ բանից հրաժարուենք: Ախր նա օրիորդի մասին քեզ բարեմտութեամբ պատմեց, թէ և իբրև գաղտնիք: Պէ՛տք է ասած՝ շատ օտարօտի է: Հէնց որ հանդիպում ես նորան դրսում, իսկօյն սկսում է քո մասին հարց ու փորձ անել. լուր չունի՞ս սիրելի Բօբերտից, առողջ է նա, և այլն... այսպիսի բաներ... Եւ միշտ այնպէս սիրալիր կերպով

փայփայում, ընդունում է... եթէ դու միշտ խելացի լինէիր, որդեակ իմ...:

ԲՕԲ. Ի սէր Աստուծոյ, մայրիկ, վերջ տանք դուրա մասին խօսել:

ԽԷՅՆ. Միլիօնատէրերի մի զոյգ մեր ճաշակին շատ յարմար կը գային:

ՄԻԽԱՅ. Այն ժամանակ դու ինձ մի քանի ըուբլի ձեռաց փող կ'տայիր թէ ո՛չ:

ԲՕԲ. (ինքն իրեն): Արդեօք նրանք երկա՞ր են ինձ չարչարելու:

ՏԵՍԱՐԱՆ V III

ՆՈՅՆՔ ԵՒ ԱԼՄԱ, վերջը ՀՆԿԱՑԻՆ:

ԱԼՄԱ: (Դաշտային ըստկոնով պճնուած, սանդրուած, ձեռնոցներով, ըստկոնով ասպարանջաններով եւ մի զարդարուած հովանոցով, դռան միջից):

ԲՕԲ. (դիմադրում է նորան ու փաթաթում): Ալմա... վերջապէս:

ՄԻԽԱՅ. (կնոջը) Ահա՛, մեր ազգականներից երկու կամ իբար գտան:

ԲՕԲ. (զրկախառնելով Ալմային): Լսիր, քոյր իմ, եթէ դու այնքան տգեղ լինէիր, որքան այժմ գեղեցիկ ես, դարձեալ չը պիտի վախենաս մեծ եղբօրդ դուր գալուց:

ԱԼՄԱ: Ֆո՛ւ... Աւգուստան ին՛չ բաց բերան է... բոլորը պատմել է:

ԲՕԲ. Դէ, զէ, նա ինձ չար մտքով չէ պատմել:
Բաւական է, մի բարկանա:

ԱԼՄԱ: (կեղծատրարար:) Սիրելի եղբայր...

ԱԻԳՈՒՍՏՈ: (հանդարտ կերպով:) Տեսն՞ում ես.
սրտարուջ է: (մայրը ձգնում է Ալմային
ըստինքն հանելու:)

ԽԵՅՆ. Դէ, ին՞չ կասես, (փայփայելով Ալմայի
այտերը:) Սա իմ գանձն է թէ ո՞չ:

ԱԼՄԱ: (զեղզեղելով) „Oui cher papa, c'est girofla“.

ԽԵՅՆ. Լս՞ում ես, լս՞ում ես, ին՞չպէս է եր-
գում: Հէնց կ'ասես Իտալուհի լինի:

ԲՕԲ. Ասա՛, ինդրեմ, այդ ին՞չ նորութիւններ են:
Մի՞թէ դու կամենում ես անպատճառ նշա-
նաւոր երգչուհի դառնալ:

ԱԼՄԱ: Այո՛, եթէ կարելի լինի, ընդ զէմ ոչինչ չն՛ւնիմ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Արմիկս, կարկանդակ ուզ՞ում ես:

ԱԼՄԱ: Merci beaucoup: (վերցնում է մ'ի կտոր
կարկանդակ եւ մօտենում է հայելուն սի-
րունանալու:)

ԲՕԲ. Եւ դու աշխատ՞ում ես:

ԱԼՄԱ: (լի ընդանով:) Ես ամեն օր դաս ունիմ.

do, re, mi, fa, sol, la, ci, la, sol, fa, mi, re, do:

Ախ՛, սրբան ինձ ձանձրացրել են այդ գամ-

մաներն ու այդ գզուելի վարժութիւնները:

Բոլոր նետրդերս թուլացել են դորանից:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Խեղճ աղջիկս:

ԱԼՄԱ: O yes ma! Դու գիտես, ես Անգլիերէն էլ

եմ սովորում: Ես շատ ուսեալ եմ. ես ամեն

բան գիտեմ: Բան կ'ոյ, որ չիմանալիս լինիմ:

ԽԵՅՆ. Այո՛, այո՛, ահա տեսն՞ում ես դու:

ԱԼՄԱ: Այո՛, և առհասարակ... Չէ որ մեր կեանքը

կարճ է... Գլխաւորն այն է, որ ուրախ

կեանք ունենանք... Դու էլ ես ուրախ, եղ-

բայր, այնպէս չէ:

ԲՕԲ. Ի հարկ է, եթէ միայն պատճառ կայ:

ԱԼՄԱ: Այ ջեզ բան: Հարկաւոր է ուրախ լինել

առանց որ և է պատճառի: Ինչո՞ւ համար է

մեր երիտասարդութիւնը: Ախ՛, կեանքը սր-

բան լաւ է... Ամեն օր որ և է նորութիւն...

Իսկ Բերլինը այնպէս լաւ է, այնպէս գեղե-

ցիկ, զիտես... Օրինակ... լսրենիների տակի

էլեկտրական լոյսը... Դու արդէն տեսել ես:

Աշխարհի երեսին ամենից շատ այդ եմ սի-

րում... Էլեկտրական լոյսի տակ մարդ միշտ

մի տեսակ գունաթափ, բայց հետաքրքիր է

լինում... Հիմա բոլոր պանդոկներն էլեկտրա-

կան լոյսով են լուսաւորում... Հրաշալի է:

Ես մի ջահ տեսայ... գիտես, նոր բացուած

Իեօնհօֆշպլաց սրճարանում. ահագին ծաղ-

կեայ պսակ և իւրաքանչիւր ծաղիկ մէջ կրակ

է վառւում:

ԲՕԲ. Դո՛ւ... Դու եղել ես այդ սրճարանում:

ԱԼՄԱ: Ե՛ս: Ո՛չ. ին՞չպէս կարող էի. լուսամու-

տից միայն նայեցի: Բայց, ասա՛ ինդրեմ, Հնդ-

կաստանում այդպիսի բան չը կ'ոյ գեռ ևս,

այնպէս չէ:

ԲՕԲ. Իհարկէ չը կայ:

ԱԼՄԱ: Մենք առհասարակ շատ լատ աջագիմութիւն

ենք արել լուսաւորութեան և քաղաքակրթութեան մէջ... Մի պարոն ինձ ասաց, որ այստեղ, Բերլինում, այնպէս լաւ է, ինչպէս Պարիզում: ձե՛շտ է այդ:

ԲՕԲ. Պարիզում չեմ եղել, սիրելիս:

Ա.Լ.ՄԱ. Փնւ... օփսոս: Ամեն մի երիտասարդ մարդ պարտական է տեսնել և ճանաչել Պարիզը:

ԲՕԲ. (կոտելով շփոթի եւ հիացման մ'էջ): Ախ', դու իմ փոքրիկ չարածճի:

Ա.Լ.ՄԱ. Հա՛, հա՛, հա՛... սրքան ծիծաղելի եմ ես, այնպէս չէ: Ահա՛, թէ ինչպէս եմ: (ծիծաղելով եւ վեր—վեր թռչելով գնում է Աւզուտայի մօտ ու քիմին դէմ անում իւր թաշկինակը, որը նորա գօտկի տակն էր:)

Ապա՛, մի հօտ քաշիք:

Ա.Ի.ԳՈՒՍՏԱ. (հանդարտութեամբ): Ահ, ինչ չլաւ է: Այդ թն՛ջ է:

Ա.Լ.ՄԱ. (հանդարտութեամբ): Իկզօր, Պարիզի ամենանոր տեսակիցն է: Այսօր եմ ստացել:

Ա.Ի.ԳՈՒՍՏԱ. Դու այսօր տանից դուրս ես գալու:

Ա.Լ.ՄԱ. (հպարտ կերպով): Դեռ ևս չը գիտեմ: Կա ինձ իմաց կրտայ: Իսկ վաղը մենք դիմակահանգէս պիտի գնանք. հա՛, հա՛, հա՛...

ԲՕԲ. Դէ, բաւական է, փոքր ինչ էլ խելօքանանք: Ե՛կ այստեղ նստիք... Այստեղ, այստեղ, իմ դիմացը:

Ա.Լ.ՄԱ. Ախ', Տէր Աստուած, դու ինչպէս մարդ ես, այդ հօ կատարեալ քրէական լանցաւորի դատ է:

ԲՕԲ. Գոնէ քեզնից հարցնելու բան շատ ունիմ: (ծերերը կանգնում են Ալմայի աթոռի ետեւը, Միխայլսկին նստում է աթոռի վերայ, Աւզուտան նորա մօտ նստաւարանի վերայ:)

Ա.Լ.ՄԱ. Սկսում է: S'il vous plait, monsieur.

ՄԻՒ. (հանդարտութեամբ իւր կնոջը): Ե՛հ է՛, սկսուեց:

ԲՕԲ. Այդ ինչպէս է պատահել, որ դու տաղանդաւոր ես դարձել:

Ա.Լ.ՄԱ. Դա էլ սիրոյ նման մի բան է. չես իմանում, ինչպէս է լինում:

ԲՕԲ. (անբաւականութեամբ): Հը՛ւմ... Բայց և այնպէս եղել է մէկը, որ քեզ առաջին անգամ դորա մասին ասել է: (Ալման ուտերը սեղմում է եւ վեր—վեր է անում:)

ԽԷՅՆ.-ՄԱՅԲ. Ապա՛, միտդ բեր, աղջիկս, դա մեր երիտասարդ պարոնն է:

ԲՕԲ. Երիտասարդ պարոնը:

ԽԷՅՆ. Ի հարկ է:

ԲՕԲ. Իսկ նա ինչպէս իմացաւ:

ԽԷՅՆ.-ՄԱՅԲ. Նա լսել էր դրսից Ալմայի երգը և լետոյ մեզ ասաց, որ չիմարութիւն կը լինի, եթէ այդպէս մի ձայն...

ԲՕԲ. Ա՛լմա, ինչո՛ւ ես ստիպում մայրիկին քո փոխարէն խօսելու:

Ա.Ի.ԳՈՒՍՏԱ. (իւր մնորդուն): Երևի շատ ամօթխած է:

Ա.Լ.ՄԱ. «Շատ ցաւալի բան կլինի, օրիորդ, ասաց նա, քո ձայնի նման մի ընտիր ձայն փչանայ այսպիսի մի նեղ, լետ ընկած տեղում:»

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Ես էլ այդ բանը լսեցի, որ նա Ալ-
մային օրհորդ անուանեց:

ԽԷՅՆ. Ինչպէս չէ, ինչպէս չէ, աղջիկս, օ...
արդար է, ինչպէս արեգակը:

ԲՕԲ. Եարունակիր:

Ա.Լ.ՄԱ. «Իմ ծնողները հոգ տարան ձեր եղբօր
մասին», ասաց նա, «ես էլ ձեր մասին եմ
կամենում հոգալ»... Յետոյ նա ինձ հա-
մար վարժուհի գտաւ, որ ունէր circle musical,
այս կը նշանակէ երաժեշտական ուսումնարան:
Նորա մօտ սովորում են ջահիլ կանայք, ամե-
նանշանաւոր ընտանիքներից միայն: Նոցանից
մէկն էլ մինչև անգամ նշանուեց մի սպայի
հետ: Բայց վերջինիս գլխում միշտ սաստիկ
քամիներ էին բարձրանում:

ԲՕԲ. Ինչպէս է այդ վարժուհու ազգանունը:

Ա.Լ.ՄԱ. (կասկածանքով): Ինչ հարկաւոր է իմանալ:

ԲՕԲ. Չէ որ գաղտնիք չէ:

Ա.Լ.ՄԱ. Սինիօրա են ասում նորան:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Իսկ և իսկ Իտալուհի (հիացմամբ):

ԲՕԲ. (հանելով յիշատակարանը): Եւ բնակում
է նա...

Ա.Լ.ՄԱ. (արագութեամբ): Ինչ բան ունիս նորա
մօտ գնալու: Ինչ որ նորա մասին քեզ պատ-
մել ենք, բոլորն ուղիղ է:

ԲՕԲ. Հասկանալի է, որ ճիշտ է այդ բոլորը, բայց
ցանկալի էր այդ վարժուհուց անձամբ իմանալ
քո յառաջագիծութեան մասին:

Ա.Ի.ԳՈՒՍՏԱ. Հն, եթէ կամենաս, կարող ես վաղը

ճանապարհ գցել նորան ուսումնարան:

Ա.Լ.ՄԱ. Այո, այո, վաղը:

ԲՕԲ. (վեր է կենում տեղից եւ այնկրծուած յեա-
ու առաջ է գնում): Ես չեմ կամենում քեզ
վերաւորել, սիրելիս, սակայն յոյսերդ ցնորք
եմ համարում:

ԽԷՅՆ. Այդպէս... այդ ինչու:

ԲՕԲ. Որովհետև քանի քանի զեռահաս աղջիկ-
ներ են ոտ գրել այդ ճանապարհի վերայ և
նոցա հրապուրողը եղելէ միշտ կօկետութիւնն
ու անձնապատանութիւնը, որ շատ վտան-
գաւոր է աւելի՝ քան թէ կարծում էք: Ես,
ի հարկ է, հաստատ համոզուած եմ, որ երի-
տասարդ պարսնի շարժաւիթները խիստ մա-
քուր են, չափազանց ազնիւ, բայց... Ա՛յ,
էգուց եթէ լսեմ մասնագէտ տիկնոջից, որ
իմ կասկածներն անհիմն են, այն ժամանակ
խոստանում եմ ինքս օգնել քեզ և չեմ հան-
գատանայ՝ մինչև որ արհեստովդ չը հասնես
ցանկալի հետեանքների: (Ալման վերցնում
է փունջի ամանը եւ երեսը թաղում է ծա-
ղիկների մէջ): Եւ զարմանալի է, որ ամեն
բանով, նոյն իսկ այս մեծ բաղդաւորութեամբ
պարտական ենք Միւլինգենց ընտանիքին:
(Միխայլսկին հեզնօրէն ծիծաղում է եւ Բօ-
քերտը ականջ է դնում):

Ա.Լ.ՄԱ. Մայրիկ, այս շքեղ փունջն ո՞վ ինձ ուղար-
կեց:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Այդ ձեզ չի ուղարկած... այլ... (ցոյց տալով): օրիորդիցն է...

ԱԼՄԱ: Ախ', նորանից է?! (ամանը տեսնելէ զընտանու):

ԲՅԲ. Քիչ սպասիր: Մի հարց ես: Նկատուեմ, որ հէնց պարոնենց տան կամ նոցա ընտանիքից մէկի անունը տալիս եմ, իսկոյն ձեզնից մէկը կամ ծիծաղում է, կամ չարակամ խօսք է ասում, բայց երևում է՝ երիտասարդ Միլինգը ձեր բոլորի համակրութիւնը գրաւել է: Ի՞նչ թշնամութիւն ունէք մեր բարեկամների դէմ, թէնչ պատճառով նորանց վերայ արանջալ: (լռութիւն): Օրինակ, փեսայ, ինչո՞ւ դու, այս բօլէիս այդպէս հեզնօրէն ծիծաղեցիր: (լռութիւն): Կամ թէ չէ, ասենք, դու Ալմա, ինչո՞ւ հաճելի չէ քեզ լսել Լէօնօրայի ուղարկած փնջի մասին: Մայրս հէնց նոր պատմում էր, թէ նա միշտ իւր հետ այնպէս սիրով է:

ԱԼՄԱ: Ո՞վ, նա... սիրով է: Ուռած, փքուած, սնապարծ. ինձ որ պատահում է, չի իմանում, թէ ո՞նց անի, որ քիթն աւելի ցցի: Հազիւ է բարեւերիս պատասխանում: Օ... նա...

ԱԻԳՈՒՍՍԱ: Ինձ հետ էլ նա այդպէս է:

ԲՅԲ. (վշտահար ինչն իրեն): Ո՛չ, այդ վարձուները նորան չի սագում:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: (քնքշութեամբ) Միայն թէ թող նա Բօբերաիս առնի:

ԲՅԲ. (վախեցած, ընդմիջելով): Մայրիկ, մայրիկ, սակայն ներեցէք... բոլորովին մոռացայ, որ

դանազան իրեր եմ բերել քոյրերիս ամեն մէկին: Նոյնպէս էլ ձեզ համար, փեսայ:

ԱԻԳՈՒՍՍԱ: (վեր թռչելով ազահովտեամբ): Ո՛ւր է, թէնչ է:

ԲՅԲ. Ննջարանում, սեղանի վերայ է: Ամեն մէկի վերայ գրած է. թէ ո՞ւմ համար է: (երեքով, Ալգուստան առաջ ընկած, վազում է ննջարանը):

ԽԷՅ. Բաս մեզ թէնչ, ոչինչ չէս բերել:

ԲՅԲ. Ձեզ համար, թանկագին ծնողք, այնպէս լաւ բան չը կարողացայ գտնել արտասահմանի փալասներից, որ բերէի: Ինքներդ ինձ սացէք, թէնչ էք ցանկանում:

ԽԷՅ.-ՄԱՅՐ: Ախ', գոնէ չը մեռնէի, մինչև որ ինձ բազմոց ընծայող լինէր մէկը՝ միայն այնպէսը, որ սագէր իմ երկու բազկաթոռներին: (Բօբերաը գարմնացած նայում է նորան): Ասածս չէս հասկանում:

ԲՅԲ. (յանդիմանաբար): Ո՛չ, մայրիկ, չեմ հասկանում քեզ:

ԽԷՅ. (աշխոյժով): Իսկ ես ուզում եմ նոր աման սոսնձի համար: Կարծեմ այդ կարող ես առնել ինձ համար: (Ալգուստան երփներանգ շարով, Ալման զգրոցով, Միխայլսկին ղալիանով ներս են գալիս, շրջապատում են Բօբերտին եւ շնորհակալութիւն են յայտնում նորան):

ԱԻԳՈՒՍՍԱ. Ախ', թէնչպէս ցաւում եմ, որ Հնդկաստանի շալերը հիմայ մօղա չեն:

ՄԻԽ. (փորձելով ծխափողը:) Հասկանալի է,
օգը չի դուրս գալիս:

ԲՕԲ. (Ալմային, որ տնտղում է կոծակները:)
Իսկ դու, Ալմա, գոհ ես: Տես, այս կապոյտ
քարերը կոչուում են Հնդկաստանի շափիղաներ:

ԱԼՄԱ. Շատ գեղեցիկ է, բայց ես աւելի սիրում եմ
սև շափիղաներ, նորա աւելի բոցավառ են:

ԲՕԲ. Ո՞րտեղից գիտես:

ԱԼՄԱ. Ա՛խ, ակնագործների ապակիների ետևը
գրած շափիղաները յաճախ գրաւել են իմ ա-
ռանձին ուշադրութիւնը:

ԲՕԲ. Հապա այդ քնչ է ականջիդ փալլում:

ԱԼՄԱ. Ա՛խ, սորա կեղծ աղամանգներ են, ուրիշ
ոչինչ: Զոյգը երկու մարկ:

ԲՕԲ. Հոգեակս, այդ ոչ ոք չի գործ ածում:
Եթէ խօսք տաս, այս բոպէիս հանել, պայու-
սեակումս էլի մի ուրիշ ընծայ ունեմ, քեզ
կտամ:

ԱԼՄԱ. (կասկածանօք հանում է օղերը:) Ի՞նչ բան է:

ԲՕԲ. Գիտես, նա մի հնդկացի իշխանուհու
զգեստ է, որ արշաւանքի ժամանակ բարե-
կամներիցս մէկը ձեռք է բերել: Որ իմանաս,
ի՞նչ հրաշալի բան է. կարմրի վերայ սոկեկար:

ԱԼՄԱ. (հիացմամբ:) Ո՛հ, Տէր իմ, քնչ շքեղ է:

ՄԻԽ. (ծիծաղելով:) Իսկ յետոյ, երևի, կախաղան
բարձրացրիք նորան: (Բօքերտը գարմացած
նայում է նորան:)

ԱԼՄԱ. (եղբորը քսքսուելով:) Սիրելիդ իմ, թանկա-
գին եղբայր: (կտապանը նշանազգեստ հա-

աճ զած, ծեծում է պատուհանը:)

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ. Գնա՛, ծերուկ, տես քնչ է ուզում
Օհանը:

ԱԼՄԱ. (Ալգուտային:) Ո՛ւֆ, նախանձից ինչպէս
քար են կտրուելու բոլորը, եթէ ես էգուց
գիմակահանգէտում...

ԱԻԳՈՒՍԱ. Սը՛ս... սը՛ս...

ԽԷՅ. (կտրքից) Ա՛լմա, Օհանին ուղարկել է,
երիտասարդ պարոնը, որ իմացանէ թէ՛ ժամը
երեքին քաղաք է գնալու: Հրամայել է հար-
ցնել. հետը գնալու ես թէ՛ ո՛չ: (Ալգուտան
ես Ալման լուռ իրար աչք են ձգում:)

ԲՕԲ. Ա՛յդ ինչ է նշանակում:

ԱԻԳՈՒՍԱ. Մի այնպէս բան չը կայ: Երիտասարդ
պարոնը սեփհական կառք ունի. նա այնքան
բարի է, որ մի անգամից ընդ միշտ վճռել է
Ալմային իւր կառքով ուղեկցել մինչի քաղաք:
ԲՕԲ. Ի՞նչպէս, և դուք այդ թող էք տալիս: Եւ
դու, քոյրիկ, համաձայնում ես:

ԱԼՄԱ. Խեղճ աղջիկն էլ է ցանկանում լաւ կառ-
քով մանգալ:

ԽԷՅ.-ՄԱՅՐ. Բացի այդ, ձիաքարշի համար էլ քիչ
փող է գնում:

ԲՕԲ. Տէր Աստուած, ապա տիրուհիները քնչ գա-
զափար կունենան ձեր մասին:

ԱԼՄԱ. Օ՛, նորա բան էլ չը գիտես: Երբ ես
գնում եմ, կառքը կանգնում է ետևի դռան
մօտ, որտեղով միայն բանուորներն են անցնում:

ԲՕԲ. Աւելի վատ: Այդ տեսակ գաղտնիքներն ա-

ուստ նիւթ կը տան բանբասանքի: Միթէ չես նկատել: (Ալմային:) Ե՛կ այստեղ, ինձ մօտ, աւելի մօտիկ, ուղիղ աչքերիս նայիլ:

Ա.Լ.ՄԱ.: (նայելով նրան:) Հ՛ը, թնջ:

ԲՕԲ. (ընում է նորա գլխից:) Ձէ, այս աչքերը չեն կարող խաբել: Դու անարատ ես... (համըռուրում է նորան:)

ԽԷՅ. Իէ, վճռիւր շուտով, ախր Օհանը սպասում է:

ԲՕԲ. Ասո՛վ Օհանին, հայր, որ նախ և առաջ ես կը խօսեմ նորա պարոնի հետ:

Ա.Լ.ՄԱ.: Ինչո՞ւ. չէ որ ամեն բան վճռուած է...

ԲՕԲ. Դու այլ ևս երիտասարդ պարոնի հետ կառքով չես զբօսնիլ: Մեր շրջանի աղջկերանց համար ձիաքարշ կայ: (Ալման քրքրուելով լայիս է:)

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ.: Խղճուկ զաւակս:

Ա.Բ.ԳՈՒՍՏԱ.: Դու այստեղ ինքնակամ կարգադրութիւններ ես ուզում անել, թնջ է: (ըրսից) լսում է մանկական աղաղակ:)

ԽԷՅ. (պատուհանի մօտ:) Եկէք այստեղ, շուտ, շուտ... տեսէք նեղրի (խափշիկի) չալմով գլուխը: (ըլորըր վագում են պատուհանի մօտ, քացի Բօքերտից, որ, մտիկ տալով նրանց, գլուխը շարժում է:)

ԲՕԼ. Նեգր: Ձէ, սա նեգր չէ:

Ա.Լ.ՄԱ.: (շարունակելով լացը:) Բ՛օրերա, սա նեգր է:

ԲՕԲ. (մոայլադէմ:) Ո՛չ, հոգիս, դա հնդկացի է, բարեկամիս ծառան:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ.: Բարեկամի՞դ. էն քս ասած կամսի:

ԲՕԲ. Այն: (մոնում է հնդկացին, ըլորըր նորան շրջապատում են:) Թագարիտա, պարոնդ հիւր է այս տանը: (հնդկացին զնում է: Մեծ իրարանցում: Պառաւ Խէյնիկէն տեղից տեղ յարէ զնում կան կարասիկը եւ սրբում է հայելին:)

Ա.Լ.ՄԱ.: (հայելու դիմաց:) Բո այդ կոմսը թեր է, թէ ջահիլ: (Բօքերտը լուում է:) Ախ, թնջ պէս կարմրել են աչքերս, բոլորովին կարմրել են: ձիշտ չէ, Աւգուստա: Եւ երեակալիք, եթէ նա լանկարծ ջահիլ լինէր (զնում է:)

ՄԻՒ. Գնանք, Աւգուստա, չը խանգարենք ազգանի պարոններին:

ԽԷՅ. Ձերդ պայծառափայլութիւն, կասեմ, համեցէք, այ, էս բազկաթուռի վերայ, կասեմ... Օ... մենք էլ ենք հասկանում աղջիկ զաքաւարութիւն:

ԽԷՅ.-ՄԱՅՐ.: Մի օր մի բարօն ընդունեցինք. երիտասարդ պարոնի բարեկամներինցն էր:

Միտդ է, ծերուկ, Ալմայի առողջութիւնն էլ հարցրեց... իսկ կոմսեր մեր տանը դեռ չեն եղել:

ԲՕԲ. Ո՛վ է եղել, ասում ես, ձեր տանը, մայրիկ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Ճ

ՆՈՅՆՔ Լ ԿՈՄՍ ՏՐԱՍՏ (խիստ ալեխառը մագերով, երկար խարտեաշ մօրուրով: Բօքերտն և այլքար չէ նոյն պատմութեամբ)

ընդհատ լուռ շտապում է նորան ընդ առաջ
և սեղմում է նորա ձեռքը:

ՏՐԱՍ: (կամաց) Ինչ է եղել քեզ: Մի՞թէ դեռ
չե՞ս սթափուեց տուն վերադառնալուցդ (բարձր):
Ահա սոքա են, որոնց մօտ դու այդպէս
շտապում էիր (սեղմում է ձեռքերի ձեռնները):
Գիտէ՞ք արդէօք, ամենայարգելիք, թէ ինչ
հրաշալի որդի է պարգևել ձեզ Աստուած:
Թանկագին Րօբերտիս բարեկամութիւնը ինձ
իրաւունք է տալիս, որ այդ ասեմ ձեզ:
(Եւէյնիկէ լուռ գլուխ է խոնարհեցնում և
զնում է:)

ԻԵՅՆ.-ՄԱՅՐ: Կարկանդակ չէ՞ք կամենայ արդէօք
Ձերդ պայծարափալութիւն, մի կտոր էլ է
մնացել:

ՏՐԱՍ: Ծնորհակալ եմ, կրկտեմ, կրկտեմ: (մայրը
գլուխ է տալիս և զնում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն X

ՏՐԱՍ ԵՒ ՐՕԲԵՐՏ:

ՏՐԱՍ: Գու գեղնած ես: Ձեռներդ դողում են:
Ինչ է պատահել քեզ:

ՐՕԲ. Ախ', ոչնիչ: Ես երջանիկ իմ, հասկանում ես.
լուզվում եմ, և այդ՝ չէ՞ որ շատ բնական է:

ՏՐԱՍ: Իսկ և իսկ (առանձին): Սուտ է ասում:
(նորան) Ասա, խնդրեմ, դու մտադիր ես
այստեղ երկար մնալ: Ըստ այնմ ես ևս կը
կանոնաւոր եմ իմ Եւրոպայում մնալը:

ՐՕԲ. Անկարելի է, սիրելի բարեկամ, այժմ մեր
ճանապարհները պիտի ջոկուին:

ՏՐԱՍ: Ծատ ցաւում եմ:

ՐՕԲ. Ես պիտի խնդրեմ Միւլինդից, որ ինձ այս-
տեղ պաշտօն տայ: Հնդկաստանի կլիման քեզ
յայտնի է:

ՏՐԱՍ: Ա՛յ քեզ բան: Երևի լաւ է մօր փեշի տա-
կին ծուարիլ:

ՐՕԲ. Ոչ ծաղրիր, ոչ էլ հարցրու: Եւ որովհետեւ
շուտով բաժանուելու ենք իրարից, ուստի, այդ
երբ և իցէ պիտի ասէի, ուրեմն, ընդունիր, իմ թան-
կագին, սիրելի բարեկամ և խնամակալ, ան-
կեղծ շնորհակալութիւնս: Օրհնուի այն ժամը,
երբ ես քեզ առաջին անգամ պատահեցի, երբ
տենդից դադարով, կանգնած էի Բիւտինցորի
ժողովարանում երիտասարդ պարոնիս ետև,
որ կանաչ սեղանի վերայ իրար ետևից ձգում էր
100 գուլդենանոց թղթերն:

ՏՐԱՍ: Ուրեմն լիմար էի, որ քեզ հետ մտերմա-
ցայ, իսկ դու այժմ... ինձ... ֆո՛ւ... այդ
անազնուութիւն է:

ՐՕԲ. Տրոստ, մի վշտացնիր ինձ: Տեսնում ես, չեմ
ուրանում այն բոլորը՝ ինչ որ դու արիր:
«Տրոստ և ընկ.» անունը ձապօնիայից մինչև
Ադէն թնդում է. երբ լսեցի, խոնարհու-
եցայ, ինչպէս կայսրի առաջ:

ՏՐԱՍ: Այո, Կայսեր՝ միայն սուրճի տոպրակների
շնորհիւ:

ԲՕԲ. Բառաւիպու՛մ Միւլինգի գործը քիչ էր մնում սնանկանար:

ՏԲԱՍ: Զարմանալի չէր, քանի որ նոցա ներկայացուցիչն Սրշիպելագասի առաջին անպիտանն էր:

ԲՕԲ. Սպասնում էին տեղից գրկել ինձ: Այդ ժամանակ դու քո հովանաւորութեան տակ առար ինչո՞՞ գործակատարիս: Քո անունով ես բազմաթիւ յարաբերութիւններ սկսեցի: Քո խորհուրդները ինձ մարդ շինեցին և երբ Բիննո-Միւլինգը շարունակում էր իւր շուտ կեանքը, բոլոր գործերի կառավարութիւնն իմ ձեռն անցաւ:

ՏԲԱՍ: Եւ վերջ 'ի վերջոյ, մեր շնորհիւ Միւլինգենց տունը և իւր համբաւաւոր ներկայացուցիչը մի քանի 100,000-ով հարստացան... Ափսոս... աւելի լաւ կը լինէր, եթէ այդ բարբ փողերը քեզ մնային: Ոչինչ, ես տան տիրոջ աչքը պիտի բաց անեմ, որ քեզ տեսնի: Եւ եթէ նա քեզ գոնեայ՝ իրեն ընկեր չը դարձնէ, այն ժամանակ ես այլ ևս չեմ դիմանայ և սուրճի գինն այնքան կերերեմ, որ Քերմանական կաղնի ծառի այդ ազնիւ շառաւիղը բարբովին անսպասելի պտուղներ կը տալ: Հանաքը դէնք ինչու ես յամառում և ուզում, որ անպատճառ ծառայութիւնդ շարունակես այս աւելարական տանը: Անցկաց ինձ մօտ, գաւակիս: Ես քեզ իշխանական ապրուստ կը տամ և ամեն մի ծննդեան մի գոյգ անդրավարտիկ (Րօքերտը լուռ ըսցաւ-

ուսականնչան է անում՝ գլխով): Միայն երախտագիտութիւնը երբէք առիթ չի կորոյ լինիլ քո այգալիս լիմարութեան: Այս տան կայքի ցուցակում չը կայ արգետօք մի գերմանացի գեղեցիկուհի, որը... (առանձին): ԵՏԷ... (ըստ ըստ): Յիրաւի, ի դէպ է մեր խօսակցութիւնն որիորդների մասին: Երևակայիր, ինչ պատահեց ինձ երեկ երեկոյեան: Քեզ մնաս բարեւելուց վայելետոյ, ես անցայ փողոցներով... Աչքիս ընկաւ մի յայտարարութիւն, որ դիմակահանգէս էր՝ հրաւիրում... 'ի միջի այլոց յայտարարուած էր, թէ հարիւրաւոր պարող կանայք պիտի խաղան Հնդկաստանի կրքոտ պարեր: Ձէ որ գրա մասնագէտ եմ... Ո՛հ, այդ տեսարանը նոյն իսկ խտտակեաց ճգնաւորին անգամ կըստիպի թողնել իւր ուխտը... Մէկ էլ տեսնեմ, ամբողջի մէջ առաջս է գալիս կիսահաս գեղձի նման մի մատաղ, քնքոյշ ու թարմ արտրած: Երևում էր, հետը մարդ չկար: Ես վրայ ընկայ: Նա, ինչպէս երևում էր, լիմար չէր և քողըր մանկական ձայնով թախանձելով, պոկեց ժամացոյցիս փոքրիկ մեղալիօնը... Հանեզ չ'առտուծոյ, որն իմ պաշտպանն է, իբրև յաջողութեան չ'աստուած, որին, ինչպէս գիտես ինձ ներկայացնում են մկանը հեծած... Մուկն, 'ի հարկէ, մկան հոտը կառնէ... Եւ գիտես ինչ իմացայ, գնալով և գուարճախօսութիւն անելով նորա հետ: Իմացայ, թէ ինչ պար-

Տ Ե Ս Ա Ր Ա Ն XI

ԵՆՅՆՔ ԵՒ ԽԵՅՆԻԿԵ ՄԱՅՐԸ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: ԲՕՐԵՐԱ:

ԲՕՐ. Ի՞նչ ես ուզում, մայրիկ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Խցահան չ'ունիս: (Տրաստին:) Աղջիկս ուզում է ձեզ գինով մեծարել, Ձերդ պայծառափայլութիւն: Հասարակ գինի չէ, եղածներից ամենալաւն է:

ԲՕՐ. Երևի տանտիրոջիցն է:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (հպարտ: Ի հարկէ!

ԲՕՐ. (շղթաւով է սեղանի վրայ դանակը:) Ահա:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Համա ինչն ես!

ԲՕՐ. Այո՛, այո՛, ճիշտ ես ասում, ներիւր: (մայրը գնում է:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն XII

ՏՐԱՍ: Պէ, դարձի եկ, սիրելիս, յուս՛ս ինձ:

ԲՕՐ. Երանի այնպէս լինէր, որ այլ ևս հայրենիք չ'վերագառնայի:

ՏՐԱՍ. Օհօ... Այժմ ուրիշ քամի է փչում!

ԲՕՐ. Ես ամաչում եմ այն շրջանից, ուր ծնուել եմ: Իմ ընտանիքն ինձ համար այլ ևս ոչինչ է: Ես սարսափում եմ նորանց հետ շփուելիս: Ես վախենում եմ, թէ մի գուցէ ինչազարուեմ: Անմիտ կասկածներ իրարից մտքումս չեն հեռանում. Տրաստ, վախում եմ մինչև անգամ, մէջս որդիական զգացմունքը մեռած լինի:

զամիտ ապականութիւն էր թաղնուած մանկական քօղի տակ:

ԲՕՐ. (վախեցած) Մթթէ իրօք այդ հնարաւոր է: ՏՐԱՍ: Ինքդ խօ լսում ես, իսկ սիրտս չէ որ սովորել է միշտ զարկել է այն չափով, որ պահանջում են ինձ հիւրնկալող երկրի բարքերը: Ես ուրախութեամբ ամբօխի ստրուկ եմ դառնում: Արևելքում հարեմ եմ պահում: Իտալիայում լուսնեակի լոյսով այգիների պատերի վերայից անցնում: Փրանսիայում կրպակների հաշուէցուցակով վճարում. իսկ Գերմանիայում առաքինութեան ճանապարհ բաց անում: Իսկ և իսկ տրամաբանօրէն է: Արևելքում սիրում են զգացմունքով, Իտալիայում երևակայութեամբ, Փրանսիայում քսակով, իսկ գերմանիայում —, խելքով: Այսպէս ուրեմն, ես վճռեցի այդ լանցաւոր մանկիկն ազաշխարհող Մազդաղինէ դարձնել: Մտադրութեանս գեռձեռք չէի տուել. շամպանեա գինին գեռ չէինք բաց արել, որ մի պարոն՝ կէս զև, կէս ինդկատակ, եկաւ և յայտարարեց իւր իրաւունքները նորա մասին: Ես միշտ յարգում եմ աւագութեան իրաւունքները. այդ պատճառով վերագործայ և պարկեցի, քնեցի, չը կարողանալով մի բարի բան շինել: Բայց ես թանկ կը վճարէի, եթէ բաղար... ինձ... այն սիրուն արարածը... (Րօքերարը հոգս է հանում եւ նրեար ծածկում է ձեռքերով:): Ա՛հ, ստտանայ, այս ին՛չ բան է:

ՏՐԱՍՏ. Ի՞նչ լիմարութիւններ: 12
 ՐՕԲ. Ո՛հ, եթէ կարողանայի պատմել քեզ, թէ որքան եմ տանջուել այստեղ: Ամեն մի լուրջ խօսք ինձ համար բռունցքի հարուած է, ամեն մի կատակ — սպտակ: Կարծես գործածելու ուրիշ բառեր չկան. այլ այն տեսակ՝ որ ինձ վիրաւորական են: Ես չուսով էի, որ այստեղ ամեն ինչ հարազատ է, բայց ընդհակառակը, զգում եմ, որ բոլորովին օտար աշխարհումն եմ գտնուում, ուր հազիւ եմ կարողանում շունչ քաշել: Մի խորհուրդ տուր ինձ. թէ՛նչ անեմ:

ՏՐԱՍՏ. Պայուսեակներդ ժողովիր:
 ՐՕԲ. Բայց դա կը նշանակէր, վաղկոտութեամբ ու անսիրտ կերպով փախչել: Միթէ այդ բանին արժանի է մայրս: 17 18 19 20

ՏՐԱՍՏ: Գիտես ինչ կալ. թողնենք այդ ճռճոտան բառերը: Այստեղ բանը շատ պարզ է, մանաւանդ ինձ ու քեզ համար, որ ուսումնասիրել ենք դասակարգերի ոգին իրենց բուն հայրենիքում: Այստեղ էլ միևնոյն դասակարգերըն են: Գոքա իրարից ոչ թէ այն պատճառով են ջոկուել, որ արգելուած է մի ամանից ստել, ամուսնանալ միւս դասակարգի անձանց հետ. և ո՛չ էլ կրօնական կարգի կանոններով են բաժանուած, դոքա արդէն շատ մանր բանէր են. այլ նրանց միմեանցից բաժանող անդունդը հայեացքների և գաղափարների զանազանութիւնն է: Ամեն մի դասակարգ

իւր գաղափարն ունի պատուի մասին, իւր ինքնասիրութիւնը, իւր իդեալը, մինչև իսկ իւր սեփական լեզուն: Այդ պատճառով իւր դասակարգից ու հասարակութիւնից ջոկնուողն անբաղդ մարդ է, եթէ քաջութիւն չունի նորանից բոլորովին խզել իւր կապերը: Այսպէս էլ դու: Գու գիտես, որ մի ժամանակ ես էլ այդպէս էի: Այն, ինչ որ դու ես քաշում հիմալ, այդ բոլորը ես քաշել եմ շատ տարի առաջ: Միթէ դու կարծում ես, թէ այն ժամանակուայ հեծելագորում ծառայող ջահիլ, գեղեցիկ սպայի համար հեշտ էր, մի գեղեցիկ առաւօտ զարթնել 90 հազար տալեր թղթախաղի պարտքով 24 ժամում վճարելու պայմանով: Տուն շտապելս ու հօրս ոտները ընկնելն ինձ օգուտ չբերեց: Նա իմ ու իւր անուան պատիւն ազատելու համար՝ զբաւ կը դնէր՝ եթէ զբաւ զբաւ չէր եղել արդէն այդ գլուխը: Եւ քանի որ ինձ ընծայելու բան չ'ունէր, ուստի, իւր անէծքն ընծայեց միայն:
 ՐՕԲ. Եւ դու այնքան արիութիւն ունեցար, որ շարունակեցիր ապրել:

ՏՐԱՍՏ: Ե՛հ... բաս չը գիտես, թէ՛նչպէս եղաւ:
 ՐՕԲ. (շփոթուած:) Ես էլ ոչինչ չը գիտեմ... ոչինչ...

ՏՐԱՍՏ: Այդ քեզ խրատ լինի. կարելի է պէտք գալ: Ընկերներս, որ ինձանից բաժանուեցան, վերջին լաւութիւնն այն եղաւ, որ լցրած՝ ոտը

քաշած ատրճանակը սեղանիս վրայ դրին: Ես ամեն կողմից զննեցի նորան: Թէ ես, իբրև պատուազուրկ մարդ մի ժամ էլ չը պիտի ապրէի, ինձ համար շատ պարզ էր: Եւ երբ ատրճանակը քունքիս դրի՝ գլխումս մի միտք ծագեց. «սա խիտ է, լիմարութիւն է. ինչու դու այժմ աւելի վատացար, քան երեք տարի սորանից առաջ: Ի՞նչ լիմար երեխայի պէս կարողութիւնիցդ վեր գումարների խոստմունքներ անելով՝ գուցէ ծեծի միայն արժանի լինէիր, բայց ոչ մահուան: Հազարաւոր տարիներ մարդիկ վայելել են արևի լույսը, չը խաւարացնելով նորան պատուի ցնորքով: Եւ հէնց այժմս էլ այդպէս է ապրում ամբողջ մարդկութեան 99 տակօսը: Ապրիր, աշխատիր և վայելիր նորանց պէս»:— Երբ ես 12 տարուց լետոյ վերադարձայ, պարտքս, խօսք չըկայ, շատ վաղուց էի վճարել: Իմ և հօրս մէջ մի տեսակ հաշտութիւն կայացաւ, միայն երեսանց: Եթէ նա ինձ անառակ որդու օրն ընկած տեսնէր իւր դրան շէմքում, ցեխից կը հանէր և իւր կրծքին կը սեղմէր, բայց ես որ նորա մօտ եկայ հպարտ, գլուխս բարձր բռնած և նոյն իսկ իրեն կարող էի օգնութիւն հասցնել իմ կէս միլիօնովս,— այդ երբէ՛ք ինձ չէր կարող ներել: Մի քանի շաբթից լետոյ ես կրկին լետ մեկնեցի: Հարստացած սուրճ վաճառողն ու սնանկացած ազնուականն՝ էլ կապ չունէին իրար հետ:

ԲՕԲ. Եւ ահա նա էլ կենդանի չէ:

ՏՐԱՍ: Նա արքայութեան բաժին լինի, որին հաւատում էր: Սակայն, ահա և բարոյական խրատը: Թո՛ղ ձերոնք իրենց հայեացքն ունենան աշխարհի վերայ, դու նորանց փոխողը չես: Տո՛ւր նորանց ինչ որ հարկաւոր է, մինչև անգամ աւելի, քան թէ պետք է և... հեռանանք միասին:

ԲՕԲ. Չեմ կարող... Եւ լսիր, թէ ինչու քեզ առաջ ես բան չ'ասացի սորա մասին: Ես ինքս ինձնից ամաչում էի: Ես այստեղ մի սիրած քոյր ունիմ: Նա դեռ երեխայ էր, երբ ես զնացի: Ո՛հ, ես սրբան ուրախանումէի նորա տեսութեան: Յոյսերս չը խաբեցին ինձ: Այժմ սպասածիցս առաւել չքնաղ ու սիրուն է նա, բայց դէպի նա ունեցած սէրս սարսափի ու տանջանքի փոխարկուեց: Հազար վտանգներից եմ վախենում... վախենում եմ նոյն իսկ անուաները տալուց: Ինչ է անում նա և ինչպէս են վարում նորա հետ: Ի հարկ է, պատուի վերաբերմամբ ունեցած զաղափարներիս, բոլորովին անգիտակցաբար, հակասում են ամէն մի քայլափոխում: Քիչ առաջ, որ պատմում էիր ինձ այն դեռ չը բացուած, բայց արդէն ապականուած արարածի մասին. սարսափը... սարսափը տիրում էր ամբողջ անձնիս, որովհետեւ... ո՛չ, հազար անգամ ո՛չ...: Այս է իմ տեղը, այստեղ պիտի մնամ ես և եթէ կարիքը պահանջէ, մինչև անգամ զոհուելու եմ:

ՏՐԱՍ: Համաձայն եմ, որ դու հիմնաւոր պատճառ-

ներ ունիս... բայց խիստ գրգռուած ես. մարջ
կը դամ, որ դու ամեն բան աւելի սև գոյ-
նով ես տեսնում՝ քան թէ իսկապէս կան:

ԲՕԲ. Աստուծոյ կամքն է: (ձեռքերով սեղմում է
գլուխը):

ՏԲԱՍ: Ի հարկ է դու չը պիտի վհատուէիր. այն
ժամանակ հեշտութեամբ շատ բան կը տա-
նէիր:

ՏԵՍԱՐԱՆ XIII

ՆՈՅՆՔ և ԱԼՄԱ (ձախ կողմից, ձեռին մա-
տուցարան, որի վերայ դրած են զինի եւ
ըստականեր: Կոմսը յետ է թռչում, Ալման
ձայն է արձակում եւ քիչ է մնում վայր
ձգի մատուցարանը: Կոմսը դրստուելով,
շտապում է նորան օգնութեան):

ՏԲԱՍ: Քիչ մնաց այս բոլորը ջարդ ու փշուր ա-
նէիք, mademoiselle: (առանձին): Աբդէն ամեն
բան ջարդ ու փշուր է եղել:


ԲՕԲ. (փաթաթուելով քրոջը): Նայիր, սիրելի Տրաստ,
ահա նա: ձգմարիտ չէ, հրեշտակ է: Դէ, հիմայ
մօտեցիր նորան, թաթիկդ տօւր և ասս.
«բարով էք եկել»:

ԱԼՄԱ: (կամաց Տրաստին): Դուք էք. չը մատ-
նէք ինձ:

ՏԲԱՍ: (առանձին) Ողորմելի... Ես նորան ինչ-
պէս հանեմ այստեղից:


Վերջ I. գործողութեան:

ՎԱՐԱԳՈՅՐ:



Handwritten notes in Armenian script, likely related to the stage plan above. The text is dense and appears to be a detailed description or commentary on the diagram, possibly including stage directions or character positions. The handwriting is cursive and somewhat difficult to read due to the angle and ink bleed-through.

2 և 4 9-ր ծառահատից շտապակ (շտխոյ)



1. Երկու սենյակ-խոտան քիչ շոգ շոգ (ստիպակի շոգ)
2. Կահլիչից քոն տան քոտից 9. Երկու (խոտան)
3. Խոտանից 9 շոգից և 10. 3 ուսույն սենյակից և 11. Կահլիչից և 12. Կահլիչից
4. Խոտանից և 13. Բնակարանից և 14. Կահլիչից
5. Խոտանից և 15. Կահլիչից
6. Կահլիչից և 16. Կահլիչից
7. Կահլիչից և 17. Կահլիչից
8. Կահլիչից և 18. Կահլիչից

ԵՐԿՐՈՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Միւլինգի տան դահլիճը. կարգ ու սարքը ձոխ, բաց անյարմար: Դէմ ու դէմ սեղանատան դուռը վարագոյրով. ձախ կողմը վառարան, բազմոց, ձուռան սեղան և թիկնաթուռներ: Աջ կողմը փոքրիկ դահաւորակ, փոքրիկ սեղան ու ձօճք: Սեղանատանը երկուս է ձոխ բացած սեղան, որ խստն ու փնթոր է մնացել նախաճաշիկից յետոյ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն I

ՄԻՒԼԻՆԳ, ԱՄԱԼԻԱ, ԿՈՒՐՏ (ձախ կողմը),
ԼԷՕՆՈՐԱ (աջ կողմը ձօձքում՝ զիրքը ձեռին:)՝
Սպասատրը սուրձ է բաժանում՝ միւս սպա-
սատրը սեղանն է հաւարում:

ԿՈՒՐՏ: Խօսք չկայ, սե ձին հիանալի է:

ՄԻՒԼԻՆԳ: Բայ թանկ է...

ԿՈՒՐՏ: Թանկ. ախ Տէր իմ:

ԱՄԱԼԻԱ: Պակասն ինձ վերայ եմ առնում, միայն
թէ միանգամայն այս խօսակցութեանը վերջ
տրուի:

ԿՈՒՐՏ: (համբուրելով նորա ձեռը:) Շնորհակալ եմ,
մայրիկ, ուրեմն, ես այնուամենայնիւ կերե-
ամ իմ սիրելի Բերլինցիներին նոր ձի հեծած:
(Լէօնորային) Քեզ ևս կը թող տամ, որ ինձ
վերայ նայելով, զմալուխս:

ԼԷՕՆՈՐԱ: (կարողալով:) Լաւ, բարեկամս:

ԿՈՒՐՏ: Լօտար Բրանգար և Գուգօ Նաենգելն ու-

զուժ էին գալ ձին տեսնել. Լօրի, գուցէ կա-
րող է այդ քեզ հետաքրքրել:

ԼԷՕՆՈՐԱ: Ի հարկ է նոքա շուտ կը գան: պա-
րապ մարդիկ են: (ժամացոյցին նայելով,
ինքն իրեն:) Ատուած իմ, ինչպէս ժամա-
նակն երկար է տևում (սպասատրը զնում է:)

ԱՄԱԼԻԱ: Գու, լաւ կը լինէր այդպէս չը խօսելը
այդ պարոնների մասին, զաւակս, քանի որ
Լօտարը, ինչպէս երևում է, ուզում է ձեռք
խնդրել:

ԼԷՕՆՈՐԱ: Միթէ:

ԱՄԱԼԻԱ: Միթէ ոչինչ չէս նկատում:

ԼԷՕՆՈՐԱ: Ես նրան չեմ հետեւել, մայրիկ:

ԱՄԱԼԻԱ: (կէս ձայնով մարդուն:) Այդ անկարելի
է, Թէոդոր:

ՄԻՒԼԻՆԳ: Այդ խօսակցութեան ձեռ մեզ շատ լաւ
ծանօթ է, զաւակս, բայց հօր գրպանով
հպարտանալն էլ իւր սահմանը պիտի ու-
նենայ:

ԼԷՕՆՈՐԱ: (շտակուելով:) Հօր գրպանով:

ՄԻՒԼԻՆԳ: Բաս ինչ անուռ տանք քո վարձուքին, որ
տասը տարի շարունակ քեզնից հեռացնում
ես յայտնի և հարուստ փեսացուներին... Ես
հասարակ մարդ եմ. քչից սկսել եմ և իմ
սեփական աշխատանքով եմ ձեռք բերել բոլորը:

ԿՈՒՐՏ: (առանձին:) Այսինքն՝ հարուստ կնիկ ես
առել:

ՄԻՒԼԻՆԳ: Այդ ինչ ասացիր, Կուրտ:

ԿՈՒՐՏ: Ո՛հ, սա հրճուանքի թուիչք էր, ուրիշ ոչ-ինչ, հայրիկ:

ՄԻՒԼԻՆԳ: Եւ ինձ համար այնքան էլ հեշտ չի եղել, ինչպէս քեզ, որդիս: Ես չեմ սիրում գոռոզանալ ու չեմ ուզում նոյնը տեսնել և որդոցս մէջ: Միայն այդպէսով կարելի է քաղցր կեանք վարել:

ԿՈՒՐՏ: Ասա և էժան:

ԼԵՕՆՈՐԱ: Հայրիկ, քո նախատինքն ինձ չէ վերաբերում:

ԱՄԱԼԻԱ: Դէ, ուրեմն բացատրիր մեզ վերջապէս քո վարմունքը:

ԼԵՕՆՈՐԱ: (յանդիմանելով): Մայր:

ԱՄԱԼԻԱ: (ցնցուած): Ախ, իսէր Աստուծոյ, իսէր Աստուծոյ:

ԼԵՕՆՈՐԱ: (վէր կենսալով): Աստուած իմ, ինչո՞ւ դուք ինձ թոյլ չէք տալիս ապրել, ինչպէս որ ես կամենում եմ: Ես ձեզանից ոչինչ չեմ խնդրում ու չեմ պահանջում, բացի այն՝ որ ինձ թողնէք ուզածիս պէս ապրեմ:

ՄԻՒԼԻՆԳ: Եւ քու աչքում այդ համեստութիւն է: Այն ժամանակ ո՛ւր կը մնայ բնտանեկան կապերի սրբութիւնը:

ԱՄԱԼԻԱ: (մարդիկ): Դէ, ինքզ տեսնում ես. ին՞չպէս չը վրդովուիմ:

ԼԵՕՆՈՐԱ: Իմ պատճառով, մայրիկ:

ԱՄԱԼԻԱ: Ամեն օր այսպիսի տարօրինակ ու անվայելուչ վարմունք... Դէ, աստ, ին՞չ է նշանակում, օրինակ, որ ամբողջ ջերմանոցը քան-

դեցիր. ինչ է... մի փունջ ուղարկեմ վերադարձած գործակատարին:

ԼԵՕՆՈՐԱ: Այսինքն, Ռօբերտին, կամենում ես ասել:

ԱՄԱԼԻԱ: Երիտասարդ Խէյնիկէին, ուզում եմ ասել:

ԼԵՕՆՈՐԱ: Նա ին՞չ գործակատար է. նա համարեայ մեր տանիցն է:

ԿՈՒՐՏ: Շնորհակալ եմ:

ԱՄԱԼԻԱ: (մեղմ) Այսինքն, մենք նորան ցեխից հանեցինք:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն 11

ՆՈՅՆՔ և ՎԻԼՀԵԼՄ:

ՄԻՒԼԻՆԳ: Հ'ը... ին՞չ կայ:

ՎԻԼՀԵԼՄ: Երիտասարդ պ. Խէյնիկէն հրամայեց յայտնեմ, որ նա պատիւ կունենայ այստեղ գալ ժամը երկուսին: (Լէօնորան շարժումն է անում եւ նայում է ժամացոյցին):

ՄԻՒԼԻՆԳ: Մի տեսէք, ին՞չ մեծ աղայ է... Լաւ:

ՎԻԼՀԵԼՄ: Եթէ թոյլ կը տաք... նորա հետ կը լինի և մի պարոն, կոմս Տրաստ, կարծեմ:

ՄԻՒԼԻՆԳ: (տեղից վեր թռչելով): Ին՞չ, Կոմս Տրաստը... «Տրաստ և ընկ»: Կո՛ւրտ, սուրճի թագաւորը: (ձեռով է անում վիշիթիմին, սա գնում է):

ԿՈՒՐՏ: Ին՞չ բազաւորութիւն է վիճակում երբեմն գործակատարներին:

ՄԻՒԼԻՆԳ: Ամալիա, պէտք է անպատճառ հրաւիրենք նորան:

ԱՄՍԼԻՍ: Լա՛ւ. էգուց ճաշի:
ԼԷՕՆՈՐԱ, Ին՞ չպէս, իսկ Բօբերտ Խէչնիկէին չէք
հրաւիրելու:

ԿՈՒՐՏ: (անանձին) Հետզհետէ բանն աւելի ծան-
րանում է:

ՄԻԻԼԻՆԳ: Իսկապէս ասած, դու իրաւացի ես:
Եթէ երբեմն հաւասարուում ես այդ մարդ-
կանցը, միայն առևտրական շահերն աչքի ա-
ռաջ ունենալով, այդպիսի յարաբերութիւն
յաճախ խիստ շահաւէտ է, Կո՛ւրտ: Այդ պա-
տանին լաւ կրթուեց Բեննօյի ձեռքի տակ և
քանի որ ես նորան եկող տարի ուզում եմ
Անտիլեան կղզիներն ուղարկել:

ԼԷՕՆՈՐԱ. (զայրոյթով) Բոլորովին այդ չէ իմ ա-
սածը, հայրիկ:

ՄԻԻԼԻՆԳ: Միևնոյն է:

ԱՄՍԼԻՍ: Իսկ դու, Կո՛ւրտ, մտիկ տո՛ւր նորան,
որ մի անշնորհք բան չ'անի: Գիտես թէ ին՞չ
զրջանից է նա. իսկ այդ զրջանը միշտ թողնում
է իւր դրօշմը:

ԿՈՒՐՏ: (կանգնելով) Pardon! Բայց ախր դուք
ցանկանում էք, որ բարեկամներս էլ կան-
չուին:

ՄԻԻԼԻՆԳ: Ի հարկէ, քո բարեկամներն էլ: Չա-
հիւնե՞րը միշտ ազատ ժամանակ կուրենան:

ԿՈՒՐՏ: Ես կը խնդրէի ինձ ազատելիք գարանից,
ինձ համար անմիտ բան կը լինի պատուա-
ւոր մարդկանց այնպիսի զրջան տանել, որ-

պիտին է մի որ և է Խէչնիկէի որդու շրջանը:
ԼԷՕՆՈՐԱ: (նորան նանդարն կերպով) Թերևս
դու կամենում ես ասել օրիորդ Խէչնիկէի եղ-
բօր մասին:

ԿՈՒՐՏ: (առաջ վահուցած, յետոյ սիրտ աննշլով) Գործնով ին՞չ ես ուզում ասել:

ԼԷՕՆՈՐԱ: Գո՛հ եղիք իմ լուռութիւնից:

ԿՈՒՐՏ: Ո՛չ, ո՛չ, խնդրեմ:

ԼԷՕՆՈՐԱ: Ասեմ:

ԿՈՒՐՏ: Ին՞չ, դու ինձ ստառնում ես:

ՄԻԻԼԻՆԳ: Զուակներս, ես թոյլ չեմ տալ, որ իմ
տան մէջ այդպիսի անախորժ տեսարաններ
տեղի ունենան:

ԱՄՍԼԻՍ: Ի՛հ, Թէոդօր, ենթադրենք, թէ մենք
ոչինչ չենք լսել: Ես հեռանում եմ, և կար-
ծեմ, դու վոքք ինչ կը հանգստանաս: (Միւ-
լինազը համըռուում է ձեռական կերպով նո-
րա մակատը):

ԿՈՒՐՏ: (մի կողմը) Ա՛յ կիտի հին ժամանակ: (Ա-
մա՛մ տալիան զնում է ղէպի դուռը, Միլիինազը
զանազը տալիս է):

ԼԷՕՆՈՐԱ: (հըր մօր ետեւից հասնելով) Մա՛յր:

ԱՄՍԼԻՍ: (յետ է դառնում մայրական զգուան-
քով եւ սիրով) Լա՛ւ, լա՛ւ, թող ինձ: (զնում
է: Ներս է մտնում Վիլհէլմը):

ՄԻԻԼԻՆԳ: Եթէ ինձ հարցնող լինի, ես առանձ-
նասենեակումն եմ:

(դուրս է զնում Վիլհէլմը նորա ետեւից):

ՏԵՍԱՐԱՆ III

(Կուրտը նոյնպէս կամենում է դուրս գնալ):

ԼԷՕՆՈՐԱ: Կուրտ, ինձ թվում է, թէ իրար հետ մենք դեռ ևս խօսելիք ունինք:

ԿՈՒՐՏ: Մեզ հարկաւոր է զարձեան խօսել: Հը... ոչ: ԼԷՕՆՈՐԱ: Եւ դու կարեւորութիւն չ'ունիս ինձնից բացատրութիւն պահանջելու:

ԿՈՒՐՏ: Կարծեմ քեզ համար անտանելի է, որ հասարակութեան մէջ եմ մտնում: Երևի դեռ էլի ուզում ես ինձ ճշմարիտ վերայ մանածել. որովհետև ինձանից չորս տարով մեծ ես և երբեմն ինձ քայլել էիր սովորեցնում... Իսկ այժմ, հականում ես. ես ինքս կարող եմ քայլել իմ ոտներով... և մի քանի կանայք գտնում են մինչև անգամ, որ ես երբեմն սահմանից անցնում եմ: Բայց ես քեզ մի բան կը խնդրեմ. թող տուր գտնեմ արքայութեանս ճանապարհը:

ԼԷՕՆՈՐԱ: Ես քեզ ոչ մի բանում չեմ նախատել, գուարձացիր, քէֆ արա, որքան կամենաս, միայն քաջութիւն ունեցիր այդ բանը խոստովանելու:

ԿՈՒՐՏ: Ե՛հ, այդ ինձ համար կարող է անհաճոյ հետեանքներ ունենալ:

ԼԷՕՆՈՐԱ: Դու այժմ հնազանդ որդու գեր ես կատարում, որպէս զի յետոյ յետևից ծիծա-

ղես ծնողներիդ վերայ: Կուրտ, հաւատա՛, որ դու այդ ճանապարհով կը փջանաս:

ԿՈՒՐՏ: (Տեղափոխ) Միթէ: ԼԷՕՆՈՐԱ: Մի բան եմ խնդրում քեզ. հանգիստ

թող մեզ ու մեր տունը:

ԿՈՒՐՏ: Այդ կը փորձենք, Աստուծով: ԼԷՕՆՈՐԱ: Դու գիտես թէ ամբողջ գործարանում

ինչ բանի վերայ են փսփսում ու խօսում: Դու, ասում են, բօքերտ խէյնիկէի քրօջ ետևիցն ես ընկել, որ դու...

ԿՈՒՐՏ: (ուսերը վեր բարձրացնելով) Ե՛, է՛. ինչ ասեմ, քանի որ թող ես տալի տարածել փողոցային բամբասանքներ:

ԼԷՕՆՈՐԱ: Խնդրեմ, թող քո այդ ոճը: Այսօր մեր ծնողաց ներկայութեամբ ես քեզ խնայեցի. միևս անգամ ներողամիտ չեմ լինիլ: Նախ և առաջ... Բօքերտը վերադարձել է, եթէ նա իւր քրօջը կը գտնի անարգուած... անհոգ կանց, ես չեմ վախիլ: Բայց օրիորդը թեթևամիտ է... Եւ եթէ այդ պատահեց, այն էլ քո շնորհիւ, Կուրտ, զգուշացիր, նա քեզ կ'ոչնչացնէ:

ԿՈՒՐՏ: Ո՛վ, իմ գործակապարձը, իւր պայուսուած կով ու նմուշներով:

ԼԷՕՆՈՐԱ: Իսկ որ դու կողոպտում ես քո գործակապարհին, այդ մասին ոչի՛նչ:

ԿՈՒՐՏ: Այդ ինչ խօսք է, թէ կողոպտում ես: Նորա ինչն եմ խլում:

ԼԷՕՆՈՐԱ: Նորա հասարակական զիրքը, նորա բարի անունը:

ԿՈՒՐՏ: Խէչնիկէի անունը, փն... (վիշէլժը ներս է ժտնում. բերում է երկու այցետոմսեր ու տալիս է Լէօնորային):

ԼԷՕՆՈՐԱ: Քեզ են բերած:

ԿՈՒՐՏ: Ո՞վ է:

ԼԷՕՆՈՐԱ: Կարգն:

ԿՈՒՐՏ: Լօտար Բրանդա... Գուգօ Շտենգել... Ներս խնդրիր, ներս խնդրիր: (վայր է ձգում այցետուսը սեղանի վերայ դէպի աջ: Ճառան դուրս է գնում):

ԼԷՕՆՈՐԱ: (Նստում է ծօծքի վերայ):

ԿՈՒՐՏ: Զարմացք բան է: Դու այսօր չես շտապում հեռանալ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Վ

ՆՈՅՆՔ ՇՏԵՆԳԵԼ և ԲՐԱՆԴ:

ԲՐԱՆԴ: Բարով, բարեկամ:

ԿՈՒՐՏ: (առաջը գնալով): Ախ', դուք եկել էք իմ սև ձիուն նայելու: Այդ ինչ շատ հաճելի է:

ՇՏԵՆԳԵԼ: (զլուխ տալով Լէօնորային): Մենք մեզ թող տուինք:

ԲՐԱՆԴ: (նայնալէս): Եթէ նեղութիւն չենք տալ օրիորդին:

ԼԷՕՆՈՐԱ: (շատ սիրաւոր): Օ՛, խնդրեմ, բնաւ ես շատ սակաւ եմ լինում արտուում: (երկունս էլ փոքր ինչ շփոթում են):

ԿՈՒՐՏ: Ինչո՞ւ չէք նստում:

ԲՐԱՆԴ: Սպասում ենք, որ օրիորդը թող տայ:

ԼԷՕՆՈՐԱ: (սառը) Խնդրեմ: (Թերթում է գիրքը: Կուրար դժգոհ վէկ նայում է նորան: Բողբօր: Նստում են):

ԿՈՒՐՏ: Դէ, ասէք, երեկ որտեղ էիք քաշ գալիս: ԲՐԱՆԴ (քրքրուելով) Երեկ... ինչ տեսակ պահանջներ ես անում յիշողութիւնիցս: Եւ ուղիղ... որտեղ էի երեկ... Առաջ ձիարշաւի ընկերութեան ժողովումն էի, յետոյ հօրս հետ էի խորհրդակցում: Սուրճի գինն էլի ցածրանում է:

ՇՏԵՆԳԵԼ: Դա երկիւղալի է — 53 1/2:

ԲՐԱՆԴ: Երկիւղալի է ասելը, սիրելի Գուգօ, բողբօրովին ճիշտ չէ: Յածրանում է. մենք էլ կը մրցենք: Յետոյ ես այցելութիւններ արի: Յետոյ ճաշեցի սպաների ժողովարանում:

ԼԷՕՆՈՐԱ: (մտիկ տալով նորան): Ա՛, ուրեմն դուք սպայ էք:

ԲՐԱՆԴ: (վիրաւորուած): Ես կարծում էի ձեզ արգէն այդ լայանի է, օրիորդ: Ես՝ թագառանգի անուան՝ պահեստի գրահաւոր հեծելազնդի սպայ եմ:

ԼԷՕՆՈՐԱ: (ժպտալով եւ նայելով սեղանի վերայ այցետուսին): Իբրաւ, պետքէ նայել այցետուսին:

ԿՈՒՐՏ: (Բրանդաի ուսին խփելով): Իսկ միւս ժամանակները հօրդ գրասենեակում երեւի աթուռին ես հեծնում:

ԲՐԱՆԻՏ: (խտախ) Խնդրեմ, խնդրեմ, սիրելի:
 ԼԷՕՆՈՐԱ: Պարոն սպայ, բաղդ որոնելու: Տամար
 դա վատ ձի չէ: Նոյն (դոստ): Մոմոյ-Վ
 ՇՏԵՆԳԵԼ: Ախ', սրբան տեղի է՝ ձեր տատը, չի-
 րաւի':
 ԿՈՒՐՏ: Ես երեկ երեկոյեան ձեզ փնդուում էի:
 ԲՐԱՆԻՏ: Երեկոյեան: Երեկոյեանները միշտ հրա-
 շիրուած եմ լինում: Ո՛րտեղ. ինքս էլ լաւ չեմ
 չիշում: Թողնենք այդ: Գուրջ ժպտում էք,
 օրիորդ:
 ԼԷՕՆՈՐԱ: Արդեօք կը համարձակուեմ ես:
 ԲՐԱՆԻՏ: Զեր փակ կեանքով դուք երեւակայել ան-
 դամ չէք կարող, թէ ինչ է նշանակում մեր
 սիրուն լեզուով բառս սեզօն:
 ՇՏԵՆԳԵԼ: Երկու ամիս կը լինի, որ ինձ, ինչպէս
 ասում են, չի յաջողում մի կուշտ քնել,
 ինչպէս պետքն է:
 ԿՈՒՐՏ: Այն էլ բիլիարդի վերայ:
 ԲՐԱՆԻՏ: Սիրելի, Կուրոր հանաք է անում: Բայց
 եթէ գիտենայիք, թէ ինչ է նշանակում
 զուարճութիւնների նահատակ լինել իսկա-
 պէս, դուք զուցէ մեզ հասկանայիք:
 ԼԷՕՆՈՐԱ: Ես այնչափ աշխատում եմ ձեզ հաս-
 կանալ, որ սկսում եմ արդէն ձեզ խղճալ:
 ՇՏԵՆԳԵԼ: (կամաց Բրանտին): Կարծես այդ աղ-
 ջիկը մեզ վերայ ծիծաղելիս լինի:
 ԲՐԱՆԻՏ: (կամաց եւ կծու): Ամեն մէկն էլ իւր ու-
 զածի պէս է քրքրում:
 ԿՈՒՐՏ: (անցնելով Լէօնորայի կողմը, կամաց):

Ես կարծում եմ, բոլորովին չպետքէ այդպէս
 անքաղաքավարի լինել:
 ԼԷՕՆՈՐԱ: (ձօժուելով): Հ՛րմ... (կարողում է):
 ԲՐԱՆԻՏ: Կարելի է իմանալ, ինչն է այդպէս
 զբաղեցնում օրիորդին:
 ԿՈՒՐՏ: (ինքն իրեն): Ինչ է ուզում այս աղջկանից:
 ԼԷՕՆՈՐԱ: Ասենք՝ հազիւ թէ հետաքրքիր լինի
 զուարճութեան մարտիրոսներին, քանի որ
 խնդիրը վերաբերում է աշխատանքի նահա-
 տակներին:
 ԲՐԱՆԻՏ: Այդ այդպէս է:
 ՇՏԵՆԳԵԼ: (վեր թռչելով): Գնանք ձին տեսնենք:
 ԲՐԱՆԻՏ: Ետ գեղեցիկ. առաջ ընկէք: Աշխա-
 տութեան նահատակներն ինձ հետաքրքրում
 են աւելի, քան կարծում է օրիորդը:
 ԿՈՒՐՏ: (առանձին): Ախ', դու թշուառ:
 ՇՏԵՆԳԵԼ: Օրիորդ...
 ԿՈՒՐՏ: (ընդր ըրթելով նորան): Դէ', գնա, 'ի սէր
 Աստուծոյ, եղբայր: (զնում են):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Վ

ԼԷՕՆՈՐԱ և ԲՐԱՆԻՏ:

ԼԷՕՆՈՐԱ: (անհամբեր ժամացոյցին է նայում):
 Պարոն Բրանդա. ինչ բանով կարող եմ օգ-
 տաւէտ լինել ձեզ:
 ԲՐԱՆԻՏ: Ի մեծ ցաւ սրտիս, օրիորդ. ես տեսնում եմ,
 9

ինչքան էլ մեծ ընդունակութիւններ ունե-
նամ, բայց էլի շատ քիչ եմ գրաւում ձեր
բարի աչքը:

ԼԷՕՆՈՐԱ: Եւ այդ բանն ինձ արտայայտելու համար,
դուք ձեր ձեռից թողնում էք յարմար դէպքը:

ԲԲԱՆՌԱ: Մի բոսէ էլ, ինդրում եմ:

ԼԷՕՆՈՐԱ: (առանձին:) Առաջարկութիւն:

ԲԲԱՆՌԱ: Իմ թերութիւններն, օրիորդ, գուցէ և
անհամար լինին, բայց ես նախ և առաջ
ազնիւ մարդ եմ:

ԼԷՕՆՈՐԱ: Պ. Բրանդա, ինձ թւում է, թէ ըն-
տիր ընտանիքի մարդու համար այդ ինքն
ըստ ինքեան հասկանալի է: Այդ յատկու-
թիւնը նոյնպէս քիչ գովասանքի է արժանի,
ինչպէս որ լաւ հագուստը...

ԲԲԱՆՌԱ: Դուք այնքան սակաւ էք գնահատում...

ԼԷՕՆՈՐԱ: Ներեցէք, ես իմ յարգանքը չեմ զլանում
և վատ հագնուածին, բայց նորանց ներս չեն
թողնում սալօնները մանելու: Սակայն, պ.
Բրանդա, ես ձեզ ընդհատեցի: Գուցէ ձեր
մասին ես սխալ զաղափար ունիմ: Շարու-
նակեցէք:

ԲԲԱՆՌԱ: Պէտք է խոստովանեմ, օրիորդ, դուք
ինձ ընկճեցիք. իսկ այդ արդէն մի նշանա-
կութիւն ունի. որովհետեւ էլ ինչ տղամարդ
է նա, որ քաջութիւնը կորցրել է:

ԼԷՕՆՈՐԱ: Ախ', անշուշտ. ես միշտ յարգել եմ
քաջութիւնը, բայց ձեր քաջութիւնն ինչու՞մն
է արտայայտուել:

ԲԲԱՆՌԱ: Դա բոլորովին աներկբայելի է. հարցրէք
բարեկամներին:

ԼԷՕՆՈՐԱ: Երևի կամենում էք ասել. մենամարտել էք:
ԲԲԱՆՌԱ: Կանանց հետ այդպիսի բաների մասին
չեն խօսում:

ԼԷՕՆՈՐԱ: Բայց մենք այնուամենայնիւ ի վերջոյ
իմանում ենք: Չէ որ կանայք հենց նորա
համար գոյութիւն ունին, որ յաղթողներին
դափնիներ բաժանեն: Գուցէ դուք պատե-
րազմել էք այնպիսի բաների դէմ, որոնց
դուք ձեր սրտի խորքում համակրել էք:

ԲԲԱՆՌԱ: Այդ ինչպէս էք մտքից անցկացնում: Ես
այդպէս հայեացքներ չ'ունեմ:

ԼԷՕՆՈՐԱ: Կամ դուցէ դուք լուռ ու մունջ տա-
րաք անարժան կասկածանք:

ԲԲԱՆՌԱ: Ե՛ս, լուռութեամբ. երբէք. ընդհակառակը:

ԼԷՕՆՈՐԱ: Երբէք:

ԲԲԱՆՌԱ: Երբէք, օրիորդ:

ԼԷՕՆՈՐԱ: Ուրեմն ձեր քաջութիւնն էլ անյայտու-
թեան մէջ է մնացել, պարոն... կարելի է
ասել... սղոյ: Նախ ապացուցէք, յետոյ մանրա-
մասն կը խօսենք: (ուզում է վեր կենալ):

ԲԲԱՆՌԱ: (չը թողնելով նորան:) Օրիորդ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Վ Պ

ՆՈՅՆՔ, ՎԻԼՀԷԼՄ, ՏԲԱՍ և ԲՕՐՅԵՐՏ:

ՎԻԼՀԷԼՄ: (ըռան շէմքին:) Բարեհաճեցէք փոքր
ինչ սպասել այստեղ:

ԼԷՕՆՈՐԱ: Ա՛հ, վերջապէս... (վրայ է ընկնում
Րօբերտին ձեռները նորան պարզած:)

ՏՐԱՍ: (առանձին:) Ահա թէ ինչու՞ն է բանը:
(աչ դուռը զնացող սպասատրին:) Բարեկամ,
այստեղ եկէք: (նորա ձեռիցը առնում է մ'ի
այցետումս, դնում է գրպանը:)

ԲՐԱՆԴՏ: (դիտելով Լէօնորային եւ Րօբերտին:)
Ին՞չ է նշանակում այս:

ՏՐԱՍ: Իմ այցետոմսը բաւական է, զնայէք: (սպա-
սատրը գնում է:)

ՐՕԲԵՐՏ: Լէօնորա, ներկայացնում եմ ձեզ Կոմս
Տրաստին, իմ ամենալաւ բարեկամին:

ԼԷՕՆՈՐԱ: (ուշքի գալով:) Պարոնայք, թող տուէք
ներկայացնել ձեզ պ. Լօտար Բրանդտ, Կոմս
Տրաստ, պ. Րօբերտ Խէյնիկէ, իմ մանկու-
թեան ընկեր (փոփոխակի ողջոյններ:)

ԲՐԱՆԴՏ: (ինքն իրեն:) Նա ինձ ներկայացնում է
Ալմայի եղբորը. լաւ նշան է: (ըարձր:) Պա-
րոնները կը ներեն ինձ... բայց բարեկամ-
ներս... (կրմ'կրմում է եւ մըմ'նջում:)

ՏՐԱՍ: Սպասում են ձեզ, այնպէս չէ:

ԲՐԱՆԴՏ: (մեծամտութեամբ դիտելով նորան
ոտքից ցը գլուխ, գնալով:) Դա ին՞չ տեսակ
կոմսերիցն է: (դռան շէմքին շուռ է գալիս.
գլուխ է տալի, կրնկները իրար խփելով:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն V I I

ԼԷՕՆՈՐԱ: (խնդրելով, որ նստեն:) Վազո՞ւց է,
Կոմս, որ մեր կողմերը չէք եղած:

ՏՐԱՍ: Ես մօտ քառորդ դար է՝ որ առևտրական
գործերով եմ զբաղուած արեւադարձի երկիրներում:

ԼԷՕՆՈՐԱ: Զուարճութեան համար:

ՏՐԱՍ: Ամենայն զէպս, որքան հնարաւոր է:
Բացի դորանից, ձեռք եմ գցել սուրճի, համե-
մունքի փղոսկրի շահագործութիւնը: Փղեր
եմ որսում. եկած տեղը դեռ ինքս էլ եմ
փիղ դառնում:

ԼԷՕՆՈՐԱ: (ծիծաղելով:) Ուրեմն, ին՞չ ձեռով կը
հրամայէք ողջունել այդպիսի մի բազմակող-
մանի անձնաւորութեան:

ՏՐԱՍ: Ընտրութիւնը ձեզ եմ թողնում, օրիորդ:

ՎԻԼՀԷԼՄ: (դառնալով:) Պարոնը ձեզ խնդրում է
իւր մօտ: (ըլորը կանգնում են:)

ՐՕԲ. Ուրեմն, ես պէտք է...

ՏՐԱՍ: Մնաս այստեղ: Առաջ ես պէտք է խօսեմ
քո մեծի հետ: (կամաց:) Մի հակառակուրդ.
ին՞չպէս դու ինձնից ծածկել ես դորա մասին:
(ըարձր:) Ամբողջ տասը տարի իմ առաջ սա-
երգ է կապել ձեզ վերայ զանազան եզանակ-
ներով: Միթէ արժանի չեմ, որ դուք էլ տասը
րօպէ գոնէ նորանից մի լաւ բան լսէք իմ
մասին:

ԼԷՕՆՈՐԱ: (մատը թափ տալով նրա վրայ:) Որ-
չնի խորամանկ էք եղել:

ՏՐԱՍ: Զեզ հաճոյանալու համար, դորան էլ պատ-
րաստ եմ: (գնում է:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն V I I I

ՐՕԲԵՐՏ Լ ԼԷՕՆՈՐԱ:

ԼԷՕՆՈՐԱ: (Րօբերտի ձեռք բռնելով): Վերջապէս կրկին տեսնում եմ ձեզ, Րօբերտ:

ՐՕԲ. Լէօնորա, ձեր ամեն մի բարի խօսքի համար, ի սրտէ շնորհակալ եմ:

ԼԷՕՆՈՐԱ: Օհօ... այդ ինչ վսեմ ոճ է. իմ բարի խօսքերը ողորմութիւն չէ: (տանում է նորան վառարանի մօտ): Նստեցէք այստեղ, կրակի մօտ՝ իմ դիմաց: Միթէ դուք կամենում էք ցրտից փետանալ սառը Գերմանիայում: Սպասեցէք, կրակը վառեմ (փուքսով չաղացնում է): Հիմալ ամեն տեղ բուխարի վառարան է... շատ անյարմար է... բայց շատ դուրեկան է կշտին նստել և զրոյց անել: Հնդկաստանում երևի վառարանների կարիք չեն զգում. այնպէս չէ: (ինքն իրեն): Ո՛րչափ երջանիկ եմ ես... Օ՛, որչափ ուրախ եմ ես, Րօբերտ... Թողէք բոլոր կասկածներն շիտակ խօսեցէք... ես ձեզ ականջ եմ դնում:

ՐՕԲ. Լէօնորա, մի բորբոքէք սիրտս:
ԼԷՕՆՈՐԱ: Աստուած մի արասցէ:

ՐՕԲ. Այդ ասելով, դուք յարուցանում էք ուրուականն այն բազդի, որին ես վաղուց թաղել եմ:

ԼԷՕՆՈՐԱ: Օ՛հ, եթէ դուք նոյնը մնացած լինէք:
ՐՕԲ. Վկայ է Աստուած, որ ես միւսնոյնն եմ. սա-

կայն դորանից ինչ օգուտ: Մեզ բաժանում է մի սոսկալի անդունդ:

ԼԷՕՆՈՐԱ: (ոյժախառ ձայնով): Այո՛, եթէ այդպէս է:

ՐՕԲ. Ո՛հ, ՚ի սէր Աստուծոյ սխալ մի մեկնէք խօսքերս: Ձէ որ չեմ համարձակում ասել ձեզ այն ամենը, ինչ որ փափակս է: Միտներդ է ինչ ասացիք ականջիս հրաժեշտի րօպէին:

ԼԷՕՆՈՐԱ: Ինչ էր:
ՐՕԲ. «Ինչ հաւատարիմ կաց»:

ԼԷՕՆՈՐԱ: Այդպէս ասացի ես:
ՐՕԲ. Այդպիսի խօսքեր չի կարելի մոռանալ, Լէօնորա:

ԼԷՕՆՈՐԱ: ձիշտ այդպէս: Ձէ որ մեզ արգելում էին «դու» ով խօսել:

ՐՕԲ. Բայց մենք շարունակում էինք:
ԼԷՕՆՈՐԱ: Ուրեմն, ինչո՞ւ այժմս էլ նոյնը չ'անել:

ՐՕԲԵՐՏ: Լէօնորա, կատակ էք անում ինչ հետ:

ԼԷՕՆՈՐԱ: Բարեկամ, դուք իրաւացի էք... բայց այդ այժմ անյարմար է. դա կը լինէր կոկեկուժիւն: Հաւատացած եղէք, որ ես ուրախ եմ կրկին ձեզ տեսնել: Գուք պարզեցիք ինչ, որ մեր մանկական երազները վերջացել են:

ՐՕԲԵՐՏ: Այդպէս էլ պէտք է լինի: Ձեր հայրն իւր մեծահոգութեամբ ինչ մարդ շինեց: Ես ամեն ինչով նորան եմ պարտական: Սեփական կամքի իրաւունքից ես զրկուած եմ: Այս ասան մէջ ես միայն խոնարհ ծառայ եմ, և իմ տիրուհու հետ ինչ ձևով էլ լինի, այդ-

չափ մտերմանալու իրաւունք չունիմ:
 ԼԷՕՆՈՐԱ: Ձեր հպարտութիւնը թելաորում է
 ձեզ կեղծել:

ՐՕՔԵՐՏ: Գուցէ, լիրաւի, հպարտութիւնն է այդ
 լուծն ինձ վերայ դրել:

ԼԷՕՆՈՐԱ: Եւ դուք չէք ուզում գորանից մի
 ամենաչնչին մասը զոհել ինձ համար:

ՐՕՔԵՐՏ: Մի տանջէք ինձ: Բանը միայն այդ չէ:
 Մտածեցէք իմ վիճակի վերայ միայն այժմ:
 Այս ըոպէին, երբ ես նստած եմ ձեզ մօտ,
 զգում եմ, որ գտել եմ մի սրտակից բան:
 Բայց ես ողորմելի եսական մարդ կը լինէի,
 եթէ ազատութիւն տալի այս զգացմունքներին,
 քանի որ այնտեղ, բակի ծայրում կե-
 նում է իմ ընտանիքը. հայրս, մայրս, քոյրս:
 Եւ այդ ընտանիքը... Ախ', Լէօնորա, այդ
 անկիւնում գործի ընթացքն այնպէս է, որ
 երեւակայել անզամ չէ կարելի:

ԼԷՕՆՈՐԱ: Սիրելի բարեկամ, իւրայիններից օտա-
 րանալու համար, հարկ չը կայ Հնդկաստան
 գնալու:

ՐՕՔԵՐՏ: Ինչպէս, Լէօնորա, միթէ դուք էլ նոյն
 դրութեան մէջ էք:

ԼԷՕՆՈՐԱ: Աւելի լաւ է լռել այդ մասին: Ես ձեզ-
 նից ամաչում եմ, ես ինձ զսպելու համար
 ձեր չափ ընդունակ չեմ: Բոլոր իմ պարտա-
 ւորութիւնները դառն ատելութեամբ մոռա-
 ցել եմ. մի տեսակ գօրոզ կերպով եմ վերա-
 բերում այն ամենին, ինչ որ այստեղ կատար-

ւում է, թէ և ես մեծամիտ չեմ: Ասացէք,
 ինչ է պատահել ինձ:
 ՐՕՔԵՐՏ: Սնու...

Տ Ե Ս Ա Ր Ա Ն IX

ՆՈՅՆՔ, ՄԻԻԼԻՆՔ և ՏՐԱՍՏ (մտնում են աջ
 կողմից):

ՄԻԻԼԻՆՔ: (հրաժեշտ տալով կոմսին): Ուրեմն
 մինչև վաղը, ճաշին, Գոմս... Օ՛, ահա և
 երիտասարդները: Բարով ես եկել, բարով ես
 եկել: (ձեռք սեղմում է): Ինչ է. արդէն ու-
 զում էք հաշիւ տալ:

ՐՕՔԵՐՏ: Ես ուզում էի ձեզ ներկայանալ. թղթերս
 դեռ բաց չեմ արել:

ՄԻԻԼԻՆՔ: Լաւ, Լաւ, շտապելու բան չը կայ: Գու-
 այստեղ ինչ գործ ունիս, Լէօնորա:

ԼԷՕՆՈՐԱ: Շատ բնական է. ես ուզում էի Րօ-
 բերտին տեսնել:

ՄԻԻԼԻՆՔ: Հըմ... բայց ախր դիտես, որ մայրդ
 քեզ կանչել է: Գնանք, պարոն, ես ձեզ շատ
 բաներ ունիմ ասելու: Գուք գիտէք, Գոմս,
 որ ձեզանից ծածուկ մենք ոչինչ չունինք:

ՏՐԱՍՏ: Աւելի լաւ է, դուք երկուսով խօսէք: Ես
 քեզ կը սպասեմ այստեղ:

ԼԷՕՆՈՐԱ: Բօբերա, ցրտեսութիւն: (սեղմում է
 նորա ձեռք):

ՄԻԻԼԻՆԳ: (ըարկացած:) Հըմ... (Միլիինզը և Բօքերտը զնում են:)

ՏԵՍԱՐԱՆ X

XI ՆՍՂՍՄՅՑ

ՏՐԱՍ և ԼԷՕՆՈՐԱ:

ԼԷՕՆՈՐԱ: Կոմս, դուք լսեցիք... ես ստիպուած եմ հեռանալու:

ՏՐԱՍ: Օրիորդ: (Լէօնորան զնում է դէպի դուռը, Կոմսը ետեւից նայում է. երբ աղջիկը շուտ է գալիս, նա ժպտալով, մատը թափ է տալիս:)

ԼԷՕՆՈՐԱ: (չոր-չոր:): Կոմս, այդ ինչ է նշանակում:

ՏՐԱՍ: Հըմ... իսկապէսդ ասած, սա... (ծափ է տալիս:)

ԼԷՕՆՈՐԱ: Իսկ այդ ինչ է նշանակում:

ՏՐԱՍ: Այս նշանակում է... (ձեռով զուռնայ է շինում:): Բրավօ...

ԼԷՕՆՈՐԱ: Պարոն, ես ձեզ չեմ հասկանում: Ա՛, ա՛... (ծիծաղում է, յետ է դառնում եւ ձեռը մեկնում է նորան:)

ՏՐԱՍ: Միտքդ հասկացայ. գիտեմ, ինչ ես ասում:

ՏՐԱՍ: (երկու ձեռով առնելով նորա աջը:) Վերջապէս...

ԼԷՕՆՈՐԱ: (կրկին աւելի խիստ:): Կոմս:

ՏՐԱՍ: Օրիորդ, (Լէօնորան զնում է:) Ինչ հեռանալի աղջիկ է: Սրտանց բաղդաւորութիւն եմ

գանձանկանում երկուսին էլ: Սա նորանը պէտք է լինի:

ՏԵՍԱՐԱՆ XI

ՏՐԱՍ, ԿՈՒՐՏ, ՇՏԵՆԳԵԼ և ԲԲԱՆԿՏ:

ԿՈՒՐՏ: (Շտենգելին:): Համարձակ, բարեկամս, համարձակ ներս մտի: (Տրաստը նայում է նորա վերայ եւ ճանաչում է: Կուրտը նոյնպէս ճանաչում է նորան. վախեցած խուլ ձայնով:)— Դուք ինձ էք որոնում, պարոն:

ՏՐԱՍ: Ո՛չ, բայց ես շատ ուրախ եմ ձեզ այստեղ տեսնելու համար:

ԿՈՒՐՏ: Ո՛ւմ հետ պատիւ ունիմ արդեօք:

ՏՐԱՍ: Կոմս Տրաստ:

ԿՈՒՐՏ: (այլապրում եւ շատ քաղաքալարի կերպով:): Ա՛, մենք պարտական ենք ձեր այցելութեամբ մեր... կարելի է ճանապարհորդական ծանօթութիւն է... Մեր պարոնը...

ՏՐԱՍ: Դուք, երևի այս տան տիրոջ որդիքն էք:

ԿՈՒՐՏ: Pardon, ծառայ եմ: Զմարիտ չէ, Կոմս: Մենք երկուսս էլ այնքան վեհանձն ենք, որ չը պիտի յիշենք երեկուայ երեկոն:

ՏՐԱՍ: Դուք կարծում էք:

ԿՈՒՐՏ: Աղջիկը շատ սիրուն է և դուրեկան: Այդ իմ գիտենալու բանն է: Կոմս, ձեր ճաշակը պիտի ասել, որ ձեզ պատիւ կը բերէ: Բայց դուք տեսնում էք, որ իրաւունքը իմ կողմն է:

ՏՐԱՍ: Կոմս, ձեր ճաշակը պիտի ասել, որ ձեզ պատիւ կը բերէ: Բայց դուք տեսնում էք, որ իրաւունքը իմ կողմն է:

Յուսով եմ, որ իրարու հակառակորդներ չենք լինի:

ՏՐԱՍՏ: Նա մանաւանդ, որ այդ աղջկայ եղբայրն իմ ամենալաւ բարեկամն է:

ԿՈՒՐՏ: (վախեցած ինքն իրեն հաւաքում է. լռութիւնից յետոյ): Դուք ինչ էք մտածում անելու:

ՏՐԱՍՏ: Դեռ ևս ես ինքս էլ չը գիտեմ: Եթէ ինձ յաջողուի ազատել նորան իւր երեւակայական պարտաւորութիւնից ձեր տան վերաբերմամբ և եթէ դուք ինձ այդ բանում կ'օգնէք, այն ժամանակ գուցէ ես կը լռեմ ձեր արարքի մասին:

ԿՈՒՐՏ: Բայց եթէ ոչ:

ՏՐԱՍՏ: Ե՛հ, այն ժամանակ այդ պ. Խէյնիկէի գործն է:

ԿՈՒՐՏ: Միթէ՞ դուք կարծում էք, որ ես կարող եմ մենամարտել իմ գործակատարի հետ:

ՏՐԱՍՏ: Ձեր ինչի... ախ... այո՛...:

ԿՈՒՐՏ: Դուք, Կոմս. կարող էք վարուել, ինչպէս կամենաք:

ՏՐԱՍՏ: Ես միշտ այդպէս էլ վարում եմ: Պարոն Խէյնիկէն հենց այժմս գտանւում է ձեր հօր առանձնասենեակում: Դուք ինձ թող կը տաք մի քիչ այստեղ մնալու, որպէս զի ձեր տեսակցութիւնը ընդհատել: Ես կամենում էի թող չը տալ, որ դուք միմեանց ձեռ տայիք:

ԿՈՒՐՏ: Խնդրեմ, ինչդրեմ:

ՏՐԱՍՏ: Ծնորհակալ եմ ձեզանից: (յէտ է դառնում եւ նայում է պատեց կախ արած պատկերների վերայ: Կուրտը վրդովուած խորքն է մտնում):

ԲՐԱՆԴՏ: (Շտննազնիւ): Ինչ է պատահել ճոցահետ: Եթէ չեմ սխալվում, մեր զօրագնդի մէջ կար մի ինչ որ Կոմս Տրաստ, որի վերջը շատ վատ եղաւ: Համբերիր փոքր ինչ:

ՇՏԵՆԳԵԼ: (Երկիւղով): Միթէ՞ դու ուզում ես նորան մօտենալ:

ԲՐԱՆԴՏ: Ինչո՞ւ չը մօտենալ. նա ինձ շատ է հետաքրքրում: (ժօտնում է Տրաստին): Կոմսը, կարելի է գերադաս է համարում առանձնութիւնը:

ՏՐԱՍՏ: (Երեսը շուռ տալով): Անկասկած:

ԲՐԱՆԴՏ: Այդ համարեայ անբաղաքավարութիւն է:

ՏՐԱՍՏ: (նայելով նորա վերայ զարմացքով): Ա՛, ձեր ինքնասիրութիւնը, կարծեմ, գտանվում է դանակի ծայրին, պարոն... Pardon:

ԲՐԱՆԴՏ: Անուհս Լօտար Բրանդտ է և ես աւելորդ չեմ համարում աւերացնել, որ թագաժառանգի զօրագնդի սպայ եմ:

ՏՐԱՍՏ: (շատ քաղաքավարի կերպով): Միտնե՛ք:

ԲՐԱՆԴՏ: (սպառնալով): Այո՛, միայն, Կոմս:

ՏՐԱՍՏ: Ներեցէք, բայց պահեստի զօրագնդի մէջ եղածները ծառայում են միայն պատերազմի ժամանակ: Երբ ես գալիս էի այստեղ, կարծում էի, որ խաղաղ ժամանակ կը լինի:

ԲՐԱՆԳԻՏ: Դուք սխալվում էք, Կոմս: Պահեստի
գորագնդի մէջ ծառայում են նաև գործնա-
կան պարապմունքների ժամանակ:

ՏՐԱՍՏ: Ինչպէս. ես ձեր գործնական պարապ-
մունքների համար պէտք եղա՞յ:

ԲՐԱՆԳԻՏ: Թոյլ տուէք ինձ, Կոմս, նախ ձեզ մի
հարց առաջարկել:

ՏՐԱՍՏ: Ուրախութեամբ, ինչդեմ:

ԲՐԱՆԳԻՏ: Այն գորագնդում, որին ես պատիւ եմ
ունեցել պատկանելու, մի ժամանակ ծառայ-
ում էր ձեր ազգանունով մի երիտասարդ
սպայ:

ՏՐԱՍՏ: Հա՛... կարելի է այդ հենց ես եմ եղել:

ԲՐԱՆԳԻՏ: (խստիւ:) Այդ սպան ստիպուած էր
դուրս գալ գորագնդից:

ՏՐԱՍՏ: Շատ ուղիղ է, շատ ուղիղ է: (ընդոր ժա-
մանակ շատ քաղաքավարի կերպով:) Եւ
եթէ դուք, մեծապատիւ պարոն, դորանով
կամենում էք ցոյց տալ, որ փողոցում հան-
դիպելիս գլուխ չը տալ ինձ, սակայն ես ու-
րախութեամբ ազատում եմ ձեզ գլուխ տա-
լուց: Ամենևին կարիք չ'ունիմ դորա համար:
(վերցնում է այբովը եւ սկսում է թերթել:)

ՇՏԵՆԳԵԼ: (հիացմամբ:) Այդպէս ճարպիկութիւ-
նով դեռ ևս ինձ չէին գններ: (մտննում է
Տրաստին, խորը գլուխ տալով:) Թոյլ կը
տաք... իմ անունը Շտենգել է:

ՏՐԱՍՏ: (շուռ գալով:) Ինչ'ով կարող եմ ձեզ ծա-
ռայել:

ՇՏԵՆԳԵԼ: Շտենգել: (Տրաստը սիրալիք կերպով
գլուխ է տալիս եւ հանդարտ խօսում է:)

ԿՈՒՐՏ: (գալով բեմի առաջ Բրանդտի մօտ:) Դու
գժուէլ ես, ինչ է: Չէ որ դա է «Տրաստ և
ընկ.» կոչուած ամենագորեղ Ֆիրմայի գլխա-
ւորը: Ինչ է, դու կամենում ես հորդ Ֆիր-
ման քանդել:

ԲՐԱՆԳԻՏ: (վախեցած:) Դու ինչո՞ւ այդ բանը ինձ
առաջուց չ'ասացիր:

ԿՈՒՐՏ: Յամենայն դէպս, հարկաւոր է շուտով
այդ բանը ուղղել:

ԲՐԱՆԳԻՏ: Այո՛, եթէ դու կը գտնես դրա համար
պատշաճաւոր առիթ:

ԿՈՒՐՏ: Ներեցէք, Կոմս, բարեկամս զղջում է...

ԲՐԱՆԳԻՏ: Զղջում է... այդ այնքան ճիշտ արտա-
յայտութիւն չէ, սիրելի Կուրտ:

ԿՈՒՐՏ: (կակազելով:) Այսինքն... նա... նա...

ՏՐԱՍՏ: Այսինքն ձեր բարեկամը ցանկանում է, որ
իբր թէ մեր մէջ ո՛չ մի խօսակցութիւն չի
եղել:

ԲՐԱՆԳԻՏ: Դորա հետ ես պատրաստ եմ համաձայնիլ,
սիրելի բարեկամ:

ՏՐԱՍՏ: Եւ ես իմ կողմից պատրաստ եմ և ցանկա-
նում եմ նոյնը:

ԿՈՒՐՏ: Այդպէս ուրեմն. այդ տարաձայնութիւնը
կարելի է վերջացած համարել:

ԲՐԱՆԳԻՏ: Իսկ ես թոյլ եմ տալիս ինձ արտայայտել
իմ բաւականութիւնը Կոմսի հետ անձամբ

ծանօթանալու համար, որի գործունէութիւնը ես վաղուց արդէն գիտէի յարգել:

ՏՐԱՍ: (շատ քաղաքավարի կերպով:) Ահա տեսնում էք, պ: սպայ. իմ հարցը ձեր հասարակական գիրքի մասին աւելորդ չէր: Քաղաքացիական տեսակէտից մենք շատ լաւ ենք ըմբռնում միմեանց: Պարոններ, կրտսեր Բրանդտը ժողովուրդ է Բրանդտի և Շտենզելի յարգելի վաճառականական տան: Ինչպէս ես հենց նոր իմացայ, այդ տունը զտանվում է վաճառականական յարաբերութեանց մէջ և որի հետ ես ինձ մեծ բաւականութիւն եմ համարում ծանօթանալ: Նա կարգաց ինձ primatissimo (երկելի) դասախօսութիւն, պատիւ կոչուած գաղափարի մասին: Թոյլ տուէք ինձ նորա դէմ պատասխանել publizize. (հրատարակելու) Պարզ անել, պատիւ ասած բանը գոյութիւն չունի: (ընդհանուր զարմանք:) Մի վախենաք: Այդ այնքան էլ սարսափելի չէ:

ԲՐԱՆԴՏ: Ինչ է պատիւը:
ՏՐԱՍ: Այն ինչ որ մենք առհասարակ պատիւ ենք անուանում՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ստուեր, որ մենք ձգում ենք մեզանից, երբ մեզ լուսաւորում է հասարակական կարծիքի լուսոյ ճառագայթը: Բայց միևնույն ժամանակ, ամենավատն այն է՝ որ մեզանում այնքան տարբեր են իրարուց պատուի վերայ եղած հասկացողութիւնները, որքան և զա-

նազան են հասարակական շրջանները, խմբերը ու կուսակցութիւնները: Ինչպէս հասկանալ արդեօք՝ և ինչպէս որոշել:

ԲՐԱՆԴՏ: (կատիւ:) Իսկ սխալվում էք, Կոմս. միայն մի պատիւ կայ, ինչպէս մի արեգակ ու մի Աստուած: Պատիւ ասած բանը մարդ կամ պիտի խղճով խոստովանի, կամ պատկանի անկարգ մարդկանց խմբին:

ՏՐԱՍ: Պարոններ, բարոյական է միայն այն բոլորը, ինչ որ բարոյական է համարվում մի որ և է երկրում: Բացի գորանից, պատիւ կոչուած հասկացողութեան հիմքն այն է, որ նա երևում է մարդու վերայ, իբրև մի առաքինի արժանաւոր սեպհականութիւն ու յատկանիշ միայն մի քանի մարդկանց մօտ, այսպէս ասած՝ մի խումբ կիսաստուածների մօտ. որովհետև նա, այսինքն, պատիւը մի տեսակ շուայութիւն են համարում մեզանում, որը կորցնում է աստիճանաբար իւր արժեքը, երբ նա ամբողջի սեպհականութիւն է դառնում:

ԿՈՒՐՏ: Բայց սպասեցէք, Կոմս, չէ որ գա տարրինակ (παράδοξον) միտք է: Մեզանից ամեն մէկը կարող է պատուի մարդ լինել:

ՏՐԱՍ: Ընդհակառակը. այն ժամանակ փողոցից ամեն մէկը կարող է զալ այստեղ և պահանջել մեզանից յարգանք զէպի ինքը, ինչպէս

մի ջենտելմենի: (Կուրտը իրեն անպատուած է զգում:)

ԲՐԱՆԻՏ: Եթէ մարդ իւր վարձուներէ մէջ հասարակական գործերում անարատ, անաչառ ու անբիծ է, ուրեմն նա ջենտելմեն է:

ՏՐԱՍ: Հըմ... այո... Դուք թոյլ կը տաք ինձ պատմել մի համառօտ պատմութիւն: Բայց ես վախենում եմ ձեզ ձանձրացնել, պարոններ:

ԲՐԱՆԻՏ և ՇՏԵՆԳԵԼ: (միասին ծիծաղելով:) Ո՛չ, ո՛չ, խնդրեմ:

ՏՐԱՍ: Գործողութիւնը կատարվում է հարաւային Ամերիկայի մի ինչ որ է տեղում: Այն տեղի արիստոկրատները կամ ազնուականները սպանիացիներից են, իսկ հասարակ ժողովուրդը նեգրիտոսներից, հնդիկներից ու խառնուրդ ժողովուրդներից, որոնք ապրում են այնտեղ աշխարհիս զանազան անկիւններից հաւաքուած: Խառնուրդ ցեղերից մէկը... Հ՛մ, մ՛մ... Պեպէ անունով, պատահմամբ ընկաւ Սպանիա, որտեղ (թեւի վերայից թողը մնաքում է:) և կպաւ նորանց կատարիական պատուի վերայ ունեցած հասկացողութիւնը:

ՏԵՍԱՐԱՆ XII

ՆՈՅՆՔ և ԲՈՅՔՔՏ (դուրս է գալիս աննկատելի կերպիւ առանձնասենեակից եւ գաղտնի լսում է:)

ՏՐԱՍ: Մի քանի տարուց յետոյ, երբ նա վերադարձաւ, այն ժամանակ գտաւ իւր նորափթիթ ու մատաղ քրօջը չափազանց բարեկամական յարաբերութեան մէջ մի երիտասարդ ազնուականի հետ: Պարոններ, պէտք չէ վրդովուիլ: Մի մատաղահաս օրիորդի համար համապատասխան իւր ունեցած շրջանի, հենց նորա իսկական կոչումն էլ այդ պիտի լինէր: Բայց երիտասարդը համարձակուել էր հաշիւ պահանջել նորա սիրեկանից, իբր թէ՛ նա ծնուել է ո՛չ թէ մետիս կամ խառնորդ, այլ իբև որ և է մի սպանիական ազնուական:

ԿՈՒՐՏ: (ցած կերպով:) Լսիր, այդ իմ հասցէովն է:

ՏՐԱՍ: Ինչպէս տեսնում էք, պարոններ, դա նորա կողմից խելագարութիւն էր: Նորա հետ վարուեցին, ինչպէս մի խելագարի, բայց հենց այստեղ մերկացել է նորա իսկական բնաւորութիւնը: Նա իբրև մի չար աւագակ, թագնուած, սպասում էր երիտասարդ ազնուականին և սպանեց նորան: Պարզ բան էր, վճռեցին նորան կախելու: Բայց երևակայեցէք, կախելուց մի քանի րոպէ առաջ, այդ բիրտ աւագակը... կարծեմ նորան Պեպէ էին անուանում, շարունակում է պնդել, որ նա մեռնում է իւր պատուի համար: Գէ՛հ, ասացէք խնդրեմ, դա ծիծաղելի չէ արդեօք:

ԲՈՒ: Դու սխալվում ես, բարեկամս, այդ լիմարը իրաւացի է եղել: Ես էլ լինէի նորա տեղը, նոյնը կանէի: (ըղբորը վեր են կենում:)

ՏՐԱՍ: Ախ', վերջապէս և դու: (արագութեամբ զնում է նորա մօտ եւ հանդարտ կերպով ասում:): Դու այստեղ ոչ ոքի չես ճանաչում: շուրջդ մի նայիր: Գնանք:

ԲՕԲ: Այդ Կուրտը չէ:

ՏՐԱՍ: Այստեղ ամենքն էլ օտարականներ են: Գնանք: Ներեցէք, պարոններ, մենք ըշտապում ենք: Յըտեսութիւն:

ԲՐԱՆԻՏ: (Կուրտին:) Ես այժմ նորան կը բռնեմ: (ըարծր:) Քոյլ տուէք ինձ, Կոմս, ձեզ էլի մի հարց առաջարկել: (շեշտելով) Եթէ դուք կամենում էք պատիւ ասած բանը կամ նորա հասկացողութիւնը ոտի տակ առնել, ուրեմն ձեր կարծիքով պատուի տէր մարդիկ նորա տեղ ինչ հասկացողութիւն պիտի ունենան:

ՏՐԱՍ: (ուղղուելով:): Պարտաճանաչութիւն, երիտասարդ պարոն: (ուրախ կերպով) Ի հարկէ, դա այնքան էլ յարմար չէ... (զլուխ տալով:): Պարոններ:

ԿՈՒՐՏ: Կոմս, դուք մեծ պատիւ արիք մեր տանը:

ԲՕԲ: Ներողութիւն, ինդրեմ ասացէք, դուք էք պարոն Կուրտ Միւլինգը:

ԿՈՒՐՏ: Այո՛, հենց ես ինքս եմ:

ԲՕԲ: (այլայլուած:) Ինչպէս... և... այո՛, ես մոռացել էի: Դուք, կարծեմ, ինձ չէք ճանաչում... Ես... (զնում է նորա մօտ ձեռք պարզած:)

ՏՐԱՍ: (կանգնելով նոցա մեջ տեղը:) Դու այդ պարոնին ձեռ չը պիտի տաս:

ԲՕԲ: (վայրենի կերպով նայում է Կուրտի վերայ, յետոյ Տրաստի, յետոյ էլի Կուրտի վերայ ու աղաղակում:): Ի՛նչ յանդիման ես ձեզանից բացատրութիւն եմ պահանջում, պ. Միւլինգ:

ԿՈՒՐՏ: Ինչպէս տեսնում էք, ես այժմս զբաղուած եմ, բայց մի ժամից յետոյ պատրաստ եմ:

ԲՕԲ: Ուրեմն մի ժամից յետոյ, պ. Միւլինգ:

ՏՐԱՍ: (ինքն իրեն:): Նա բոլորը հասկացաւ, թէ բանն ինչումն է:

Վերջ II գործողութեան:

Վ.Ա.ՐԱ.ԳՈՅԻ:

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԳԵՎԵՐԱՅԻՆ

Սեղանի վերայ վառվում է լապտերը: Լուսադէմ է: Յետևում, բեմի խորքում, ձախ կողմից պատրաստած, չը բացած մահիճը. նորա մօտ դրած մի պայտուակ: Բոբերտը նստած է սեղանի մօտ, գլուխը յենած ձեռի վերայ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի

ԲՕԲԵՐՏ և ԽԷՅՆԻԿԷ—ՄԱՅՐԸ: (գլխին գիշերուայ թաշկինակ եւ քրդեայ իւրկայ:)

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Բարի լույս, որդեակ: (Բօբերտը չի պատասխանում:) Աստուած իմ, ամբողջ գիշերը չի էլ պառկել: մօտենում է նորան արտասունքը սրբելով:)

ԲՕԲ. (տեղից վեր է թռչում, աղաղակում է:)

Ին՞չ է, ին՞չ ես ուզում:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Տէր Աստուած, սա ին՞չպէս է գո-

ւում ին՞չ վերայ: Ի՞նչ մըսում ես, որդի, տես, չից գողում ես: Ուզում ես սուրճ խմել: (Բօբերտը մերժում է:) Օրինակ ան քո պառաւ մօրից: Մարդ ինչքան էլ որ վիշտ ունենայ, բայց էլի քնել հարկաւոր է. քունը ոյժ է աւելցնում: (լապտերը մարում է:)

ԲՕԲ. Մայրիկ, մայրիկ, այդ ին՞չ է ձեր արածը: ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: (լսելով:) Մենք մեղաւոր չենք, որդիս: ԲՕԲ. Մեղաւոր չէք... ո՞հ, մայրիկ:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Ես Ալմային դաստիարակում էի պատուի զգացմունքով ու առաքինութեան մէջ պահելով: Նա մեր տան մէջ ոչ մի վատ օրինակ չի տեսել: Ես ստիպեցի նորան ուսումնարան լաճախել, նաև քահանային հանդիսաւոր խոստովանք կատարեց, թէև այժմ մենք դորան կարիք չ'ունինք: Հաղորդութեան ժամանակ ես նորան հազրի նոր շորեր... Տուեցի նորան իմ պսակադրութեան ժամանակից մնացած թաշկինակը... Իսկ քահանան խրատում ու խօսում էր այնպէս սրտաշարժ, այնպէս սրտաշարժ...

ԲՕԲ. Ի՞նչպէս թոյլ տուիր Ալմային ծանօթանալու այդ պարոնի հետ:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Կարելի է գեռ ևս գործն ուղղել:

ԲՕԲ. Էլ ին՞չ ապացոյցներ են հարկաւոր: Նա խոստովանեց իւր արածը լանդուզն պարզութեամբ: Մթթէ ինքը Ալման մերժեց: Ես երեկ երեկոյեան Միխայիլիների տանն էի. այնտեղ ամեն բան իմացայ: Հենց քո սիրելի-

մեծ աղջիկը, Աւգուտտան է պատրաստել նո-
ցա համար գաղտնի բոյն... Նորան, ՚ի հարկէ,
վարձատրել են դորա (համար... հա, հա,
հա... Այն անպիտանը երեկ ձեռու մտ էր:
Ո՛հ, եթէ ես կարողանայի հանգստացնել
սիրտս:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Բայց, Բօբերտ...
ԲՕԲ. Լաիլ: Նա խոստացաւ ինձ բաւարարու-
թիւն տալ, գոնեայ դորան էլ արժանացայ:
Նա տեսաւ, որ ես ամեն բանի պատրաստեմ:
Եւ հենց այսօր բաւարարութիւն պիտի տայ
ինձ էլ, ձեզ էլ: Ես մտածեցի: անբազդ աղջ-
կայ ապագայի մասին, ուստի, նորան հան-
գիստ թողի:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Բոլորովին չէի կարծում, որ վերջն
այդպէս վատ կը լինի:
ԲՕԲ. Դու պէտք է գուշակէիր: Հապա ինձ էիր
մտածում, երբ տեսնում էիր, կէս գիշերին
ճանապարհ էր ձգում նա նորան:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Ե՛հ, որդեակ, քնելու միջոցին էլ
ոչինչ չէի մտածում: Ախր նոքա էլ դուան
ջոկ բանալի ունէին:

ԲՕԲ. Ախր դու չէիր կարող չ'իմանալ, որ եթէ նո-
քա տուն էին վերագառնում միասին, պէտք
է որ մի տեղ քաղաքում իրար պատահած
լինէին:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Ի հարկ է կարծում էի, որ երևի
միասին զբօսնում են:

ԲՕԲ. Ես քեզ չեմ հասկանում, մայրիկ:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Այսինքն, որ նոքա միասին ման են
գալիս:

ԲՕԲ. Ձէ որ դու ասացիր.....

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Ի՛նչ ինչպէս որ առհասարակ աղջիկ-
ները ջահիլ կավալերների հետ զբօսնում են:
ԲՕԲ. Ձբօսնում... Ին՞չպէս թէ զբօսնում:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Կոնցերտ են գնում, կամ ըեստօրան-
ներ: Եթէ փող կայ, թատրոն, խսկ ամառը
Գրուներվալդ, Տրեպո... և այլն:

ԲՕԲ. Մենակ:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Մենակ... (լեզուն քսիւսացնելով):
Ձէ, ջահիլ կավալերների հետ:

ԲՕԲ. Ես ուզում էի ասել. առանց ծնօղներէ:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Հասկանալի բան է: Ին՞չ է, ուրեմն
քո ասելով, ես այս իմ պառաւ տեղովս, թոյլ
ոտներովս ջահիլների երևեց պիտի քաշ գամ:

ԲՕԲ. Հ՛րմ... նշանակում է դու գիտէ՞ր, որ նո-
քա ամեն տեղ միասին են լինում:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Ձէ, ես այդ միայն են թաղրում էի:

ԲՕԲ. Եւ դու նորանցից ոչինչ չէ՞ր հարցնում:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Հարցնելն ին՞չ հարկաւոր է: Դորա-
նից միայն զուր խօսակցութիւններ դուրս կը
գան: Աղջիկն ինքը պիտի գիտենայ, թէ ին՞չ
է անում:

ԲՕԲ. Այդպէս, այդպէս:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Ախ՛, որ նա... ու՛հ, ո՛վ կը կար-
ծէր... Տէր Աստուած, ինչպէս զոզում ես: Այս

ըսպէիս քեզ համար սենեակը կը տաքացնեմ:
(գնում է վառարանի մօտ):

ԲՕԲԵՐՏ: Ո՛չ մի ելք և ո՛չ մի փրկութիւն: Նախա-
տինք, անբողջ կեանքում նախատինք:
ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (ծայն է տալիս ղէպի խոհա-
նոցը): Ծերո՛ւկ, շուտով ածուխը բեր: (չո-
քում է վառարանի առաջ եւ մոխիրը հա-
նում է:)

ԲՕԲ: Եւ ին՞չ բաւարարութեան մասին էր նա ինձ
հետ խօսում: Ամուսնութի՛ւն... հա, հա, հա...
Եւ եթէ պարզն ասենք... պէտք է ցանկա-
նամ արդեօք ես այդ: Ին՞չ արած. վերջ ՚ի
վերջոյ, ինձ մնում է մենամարտութիւնը:
Եթէ նա ինձ սպանէ, ես անբիծ կը լինիմ.
բայց սոցա վիճակն ին՞չ կը լինի այստեղ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն II

ՆՈՅՆՔ և ԽԵՅՆԻԿԷ (պատռտուած խալաթով,
թաղիքէ հողաթափերով, ներս է քերում
ածուխը:)

ԽԵՅՆԻԿԷ: (քթի տակին): Բարի լոյս:

ԲՕԲԵՐՏ: Աստուծոյ բարին, հայր:

ԽԵՅՆԻԿԷ: (մըթմըթում է:): Հ՛ը, Հ՛ը...

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Մի փնթփնթա՛, ծերո՛ւկ: Օգնիր ինձ
կրակ վառեմ:

ԽԵՅՆԻԿԷ: Հ՛ը... հ՛ը... ասել է թէ՛ կրակ ենք
վառելու: (չոքում է վառարանի առաջ:)

ԲՕԲ: (ինքն իրեն): Իսկ եթէ ես նորան սպանեմ...

ճիշտ է՝ բաւարարութիւն կը լինէր: Բայց էլի
հարցը բաց է մնում. ին՞չ կը լինի սորանից
վերջը... այստեղ... Վախենում եմ, որ չեմ
կարող ինձ թոյլ տալ մի այնպիսի շուայու-
թիւն, որպիսին է անձնական պատիւը (ծայն
է արձակում): Ախ՛, ին՞չ կեղտոտ եմ ես:

ԽԵՅՆԻԿԷ: Մի տեղդ ցաւում է, որդեակ:
ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (կամւոց): Բոլորը Ալմայի պատճա-
ռով: Այսօր չի էլ պառկել քնելու:

ԽԵՅՆԻԿԷ: Հա, հա... Ալման... պատուով մարդը դորա-
նից կարող է հալւորուիլ... ես միշտ ասում էի.
տան տիրոջնց ընտանիքը մեզ միշտ թշուա-
ռութիւն կը բերի:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Լաց մի լինի, ծերո՛ւկ (փաթաթվում
են):

ԲՕԲ: (ինքն իրեն): Դէ, ինչպէս մարդու սիրտը չը
պատուուի:

ԽԵՅՆԻԿԷ: Ա՛խ, ես լաց չեմ լինում... Ես իմ տա-
նը իշխան եմ... Ես գիտեմ ին՞չ պիտի անեմ...
Խեղճ անդամալոյճն էլ իւր պատիւն ունի:
Սպասեցէք. իմ աղջիկը... նա ինձ կը ճանա-
չի... (շարժելով կրակքաշը): Կանիճեմ ես
նորան, ա՛յ...

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (անկողինը ուղղելով): Դէ, դէ...

ԽԵՅՆԻԿԷ: Է՛, դու էլ... շատ ես հասկանում պա-
տիւն ին՞չ է (իւր կրծքին խփում է:): Ա՛յ,
սրտեղ է նա, իմ պատիւը: Ես փողոց կը նե-
տեմ աղջրկանս գիշերը, անձրևով, քամով...

ԲՕԲ: Որ նա այնտեղ բոլորովին կորչի:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Թող նա դուրս տայ գլխիցը:
ԲՕԲ. Տես, ո՛ւր է նա այժմ: Երևի վախում է մեր
աչքին երևալ:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Քնած պէտք է լինի: (զնուով է դե-
պի դուռը:) Ա՛լմա... (պատասխան չը կայ):

ԲՕԲ. Ո՛հ, Տէր Աստուած, նորան չը պէտք է թող-
նէիք միայնակ:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Հ՛ր, ա՛յ, (դուռը քայ անելով) ախր
ասում էի քնած է:

ԲՕԲ. Դեռ ևս նա կարող է քնել:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Դէ, կը վեր կենաս, թէ ոչ. անպի-
տան աղջիկ:

ԽԷՅՆԻԿԷ: (նորա երեւից:) Դէ, վեր կաց. թէ չէ
քեզ փայտով կը վերկացնեմ:

ԲՕԲ. Հայր՛, մայր, մինչի նորա գալը, լսէք ինձ:
Նորա հետ խիստ միք վարուի, թէ չէ հեշ-
տովթեամբ կը չարացնէք նորան:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Դու, որդիս, խելօք ես քո պառաւ
մօրիցը, բայց այս բանումը ես քեզանից լաւ
եմ հասկանում: Թող սիրտս տրորուի, բայց
ես նորան ինչպէս բերդումը՝ այնպէս պիտի
պահեմ: Կարտօֆիլ մաքրել, սենեակները
կարգի բերել, սանդուղը մաքրել, ա՛յ, ինչ
անել կը տամ նորան հիմայ:

ԲՕԲ. Իսկ եթէ նա գիշերը ձեզնից փախչի:

ԽԷՅՆԻԿԷ: Փահ... դուռը վերան կողպած կը պա-
հեմ, բանալին էլ գրպանս կը դնեմ... Դէ,
տեսնենք այն ժամանակը ո՞նց կը փախչի:

ԲՕԲ. Մտածեցէք, նա դեռ երեխայ է, միւսները
նորանից աւելի մեղաւոր են: Հարազատ քոյ-

րը... ա՛յ, նորա հետ պէտք է խիստ լինել,
ինչպէս մօցիքուլի հետ: Յոյսով եմ, որ գոնէ
այս կարող եմ ձեզանից պահանջել, որ ընդ
միշտ Աւգուստային և նորա մարդուն չընդու-
նէք մեր տանը:

ԽԷՅՆԻԿԷ: ձիշտ է: Մի անգամ ընդ միշտ պէտք է
ազատուել այդ փուչերից: Միխայիլսկին ինձ
վաղուց զգուցեցրել է: Ա՛յ, տեսնում ես, պա-
ռաւ, Բօբերտը պէտք էր Հնդկաստանից յետ
գար, որ մեզ վերջ ՚ի վերջոյ խելքի բերէր:
Քեզպէսն, ՚ի հարկ է, ինձ, պատուական ծե-
րունուս, սկանջ չի դնի...

ԲՕԲ. Ներքի, հայր, խնդիրը քո մասին չէ:

ԽԷՅՆԻԿԷ: Միւսնոյնն է: Իսկ Աւգուստան աման
լպտող է. գող կատուի նման պատրաստ է
ձեռն ընկածը թռցնել:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: (Թաշկինակով աչքերը սրընելով:)
Բայց չէ որ նա էլ իմ գաւակն է: Ես գաւա-
կներիս հաւասարապէս եմ սիրում:

ԲՕԲ. Իսկ եթէ նոքա արժանի չեն քո սիրոյն, մայրիկ:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Էն ժամանակն աւելի եմ սիրում:

ԲՕԲ. Կամայ... Ալման:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն III

ՆՈՅՆՔ և ԱԼՄԱ (գիշերուայ սպիտակ բաժկոնը
և սպիտակ շրջազգեստը հագին, հերարձակ,
անհաստատ դուրս է գալիս իւր սենեակից

և երկիրով նայում է մէկի, կամ միւսի վերայ):

ԽԵՅՆԻԿԷ: ՕՏՅՅ...

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (ծեռները ջարդելով): Աղջիկս, աղջիկս, ա՛յդ էր ուրեմն քո շնորհակալութիւնը մեր լաւութեան փոխարէն: Ինչ է, ես քեզ չէի խրատում, չէի սովորեցնում: Միթէ ես քեզ չեմ մեծացրել, ինչպէս մի իշխանուհի: Դէ, էլ այսուհետեւ բաւական է: Ինչ ես կանգնել. աւելը բեր, տունը սրբէր: (Այժման ուսերը վեր-վեր քաշելով, անցնում է խոհանոց):

ԽԵՅՆԻԿԷ: (շուտ-շուտ մասն է գալիս մ'ի անկիւնից դէպի միւսը): Ես քո ծերունի հայրն եմ, կասեմ քեզ. ես քո ծնողն եմ... այո՛, ես ծերեցած պատուաւոր ծերունի եմ... Այո՛, ես, ես... (Այժման երեսում է դռան շէմքում անցնելու խաքանդազը ձեռնի):

ԲՕԲ. Ո՛րքան սրտաշարժ է նա իւր մեղքերը քաւելու մէջ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Դէ, ինչ է, շուտ կանեմ:

ԽԵՅՆԻԿԷ: (հանդիսաւոր կերպով): Այժմա, աղջիկս, մօտ ե՛կ, էլի մօտ, էլի...

Ա.Լ.ՄԱ: Աստուծոյ սիրուն, Աստուծոյ սիրուն, մի՛ ծեծիր ինձ.

ԽԵՅՆԻԿԷ: Եդ դեռ քիչ է, ինչ որ գլխիդ գալու է: Ես ծերունի, պատուաւոր մարդ եմ: Ա՛յ, սրտեզ է իմ պատիւը... զիտե՛ս ինչ կա՛-

նեմ էս ըստէիս... կանիծեմ քեզ, ա՛յ ինչ...

Հ՛ը... ինչ կասես:

Ա.Լ.ՄԱ: Ա՛խ, հանգիստ թողէք ինձ, խնդրեմ:

ԽԵՅՆԻԿԷ: Ինչ է, ուզում ես քո ասածի վերայ մնալ: Ո՛չ, դու ինձ կը ճանաչես, դու...

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ծերու՛կ, հանգստացիր. հարկաւոր է, որ աշխատի:

ԽԵՅՆԻԿԷ: Ինչ: Ես չեմ կարող անիծել իմ անպիտան աղջկանը:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ախ՛, եդ միայն բոմաններումն է լինում:

ԽԵՅՆԻԿԷ: Փնճ...

ԲՕԲ. Իմ թանկագին ծնողներ, այդպէս չի լինի. շնորհ արէք ինձ և մեզ երկուսիս մի ըստէ միասին թողէք:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Գնանք, ծերու՛կ:

ԽԵՅՆԻԿԷ: Ես չեմ կարող իմ անպիտան աղջկանը... լաւ... կանց դու... (մայրը քաշ է տալիս նորան իր ետեւից և երկուսն էլ դուրս են գնում):

ՏԵՍԱՐԱՆ IV

ԲՕԲԵՐՏ և Ա.Լ.ՄԱ:

ԲՕԲ. (ինքն իրեն): Հիմայ ես վերահասու կը լինեմ թէ՛ ո՞վ է սա և ինչպէս պիտի վարուեմ (փափուկ): Ապա, քոյրիկս, մօտեցիր:

Ա.Լ.ՄԱ: Մայրս ինձ հրամայեց սենեակները մաքրեմ:

ԲՕԲ. Դեռ ժամանակ ունես: (ընում է նորա

ձեռք, նա դուրս է պրծնում:) Վախենալու ոչինչ չը կայ, ես քեզ ո՛չ կը ծեծեմ և ո՛չ էլ կանխեմ: Իմացիր, որ այսուհետև դու ունիս մի հաւատարիմ բարեկամ, որը քեզ կը պաշտպանի:

ԱԼՄԱ: Դու խիստ բարի ես... խիստ բարի: (հեծկըլտալով չորում է նորա առաջ:)

ԲՕԲ: Դէ, դէ, մի չոքիր. միայն նստիր նըստարանի վերայ: Այդպէս: (նստում է կողկին, զահաւորակի մէջ:): Նստիր այնպէս, որ ես կարողանամ ուղիղ նայել քո աչքերին: (ուզում է նորա գլուխը բարձրացնել, բայց նա թագցնում է երեսը նորա ծնկներում:): Դու, ուրեմն չես ուզում: Դէ լաւ, կանգնիր և լաց եղիր, որքան ուզում ես: Ես քեզ դուրս չեմ անի: Եւ դեռ շատ օրեր ու զիշերներ լալով կանցնես, մինչև կը հասկանաս, թէ ինչ արին քեզ: Ասա, խնդրեմ, միթէ չես հասկանում, որ դու զղջալու ես ամբողջ կեանքումդ:

ԱԼՄԱ: Այո՛, ես հասկանում եմ:

ԲՕԲ. (ըննում է նրա գլուխը երկու ձեռքով:): Այո՛, այո՛, քոյր իմ: Ա՛յ, ահա՛, օտար երկրում ես քո բաղդի մասին էի հոգում 10 երկար տարիներ... իսկ հիմայ 20 էլ քիչ է, որ այս անբաղդութիւնը մոռանամ:

ԱԼՄԱ: Զէ որ 20 տարուց լետոյ ես կը պառաւեմ:

ԲՕԲ. Կը պառաւես. ինչ անենք: Մեր երկուսի համար այլ ևս ջահելութիւն չը կայ: Երիտասարդութիւնն այլ ևս գոյութիւն չ'ունի:

ԱԼՄԱ: Ո՛հ, Աստուած իմ:

ԲՕԲ. (վեր թռչելով յուզուած:): Մի վաղիր, ես քեզ հետ կը լինիմ: Մենք կը թագնուենք մի որ է որջում, ինչպէս հալածուած գաղաններ: Եւ մենք ճիշտ որ այդպէս էլ ենք: Մեզ ծաղրեցին, հալածեցին, պատառ-պատառ արին: (Ալման երեսը պահում է միւս զահաւորակում:): Ա՛յ, տեսնո՞ւմ ես. մենք հիմայ կարող ենք մէկ-մէկու օգնել. դու ինձ, ես էլ քեզ... (ինքն իրեն:): Ինչպէս է ինքն իրեն տրորուում... Աստուած իմ, աւելի ու աւելի պառուում է, ինչ պէտք է անեմ ես այս դէպքում: Անարատ մանկական հոգին, որ ցեխն է կոխած, նա չի կարող լեռ դարձնել ինձ, իսկ ուրիշ բաւարարութիւն ինձ պէտք չէ... Ա՛լմա:

ԱԼՄԱ: (գլուխը վերցնելով:): Ինչ է:

ԲՕԲ. Դու նորան շատ ես սիրում:

ԱԼՄԱ: Ո՞ւմ:

ԲՕԲ. Ո՞ւմ: Նորան:

ԱԼՄԱ: Ո՛հ, այո՛:

ԲՕԲ. Եթէ դու նորան բոլորովին կորցնէիր... այն ժամանակ դու ինքդ ևս կը կորչէիր:

ԱԼՄԱ: Ո՛հ, ո՛չ:

ԲՕԲ. Լաւ, շատ ուղիղ է, հաստատ կնց... պէտք է սովորես մոռանալ, այո՛, պէտք է սովորես: (նստում է:): Ամենից առաջ դու նորից պէտք է գործի կենաս. դու պէտք է վերջ

դնես կլկլոցներիդ. այդ հասկանալի է ինքն
ըստ ինքեան: Չէ որ դու սովորել ես դերձա-
կութիւն... միայն մի մտիր արհեստանոց:

ԱԼՄԱ: Ա՛խ, հա՛, այդ մօզիաակէքն այնպէս զար-
շեկիւ են: առայս միջժժայտ, միջմիջրած

ԲՕԲ. Ո՛չ մէկին քար չը պէտք է ձգի մարդ, մա-
նաւանդ քեզ վրայ: Ու՛ր կը տեղափոխուենք,
դեռ ես էլ չը գիտեմ: Եթէ յաջողուի, որ
ծերերին էլ քաշ տամ, այն ժամանակ ձեզ
բոլորիդ կը տանեմ մի ուրիշ տեղ, միայն թէ
այստեղից դուրս գանք և այնտեղ դու միայն
իմն ես լինելու... իմը և աշխատանքինը...
Հաւատա՛ ինձ, աշխատանքից յոգնած լինելն
երջանկութեան կէսն է: Ծերերն, ՚ի հարկ է,
մեզ հետ կապրեն, իսկ դու ինձ կօգնես, որ
նոցա խնամենք: Կար անելով՝ դու միևնոյն
ժամանակ տունն էլ կը կառավարես: Ռուկը
հոգաս նորանց հանգստութիւնը և համբե-
րութեամբ կը տանես նորանց կամայականու-
թիւնները: Ուզո՞ւմ ես դու:

ԱԼՄԱ: Եթէ դու կուզես:

ԲՕԲ. Չէ, դու ինքդ պէտք է ուզես այդ ուրա-
խութեամբ, թէ չէ Աստուծոյ օրհնութիւնը
չի լինի: Ելի հարցնում եմ քեզ. ուզո՞ւմ ես:

ԱԼՄԱ: Այո՛... վաղուանից ամեն բանի կը համա-
ձայնեմ:

ԲՕԲ. Ահա՛, այդպէս... բայց ինչո՞ւ վաղուանից և ոչ
այսօրուանից:

ԱԼՄԱ: Որովհետեւ այսօր ես դեռ...

ԲՕԲ: Ինչ է: Վերջով տայս մտն
ԱԼՄԱ: Ա՛խ, դէ, խնդրում եմ, խնդրում եմ:

ԲՕԲ. (մտերմաբար:) Ի՛հ, դէ, ասա՛, վերջացրու...
ԱԼՄԱ: Ես կուզէի այսօր... ախ՛, շատ կուզէի լի-

... նել զիմակահանդէսում (երկար շուտիմն:
Անձնային տեսարան: Բօքերտը վեր է կենում եւ
յետ ու առաջ է գնում սենեակում: Ալման վեր
է կենում:) Հա՛: Կարելի է:

ԲՕԲ. Կանչիր ծերունիներին:

ԱԼՄԱ: Նշանակում է, չի՞ կարելի (լացակրկնած):
Մի՛նչև անգամ... հեռանալու էլ չի կարելի
այս փոքրիկ զուարճութիւնը ստանալ:

ԲՕԲ. Արդեօք, դու հասկանո՞ւմ ես, թէ ինչ ես
յստեղ խօսում: մտայս սմ յմիջմիջիսս իջ զսով

ԱԼՄԱ: (կտոր—կտոր գալով:) Ես շատ լաւ եմ
հասկանում, թէ ինչ ես ասում: Ես իսկի
այնպէս չիմար չեմ. ես գիտեմ մարդիկ ո՞նց
են ապրում: Ինչ ես այդպէս տաքանում.
չիմարութիւն չէ՞ միթէ նստել այստեղ առանց
բան ու գործի... Այս բակում ո՛չ արև, ո՛չ
լուսին, երբէք չեն երևում, իսկ չորս կողմը
... և ոչ հայհոյեանք... և ոչ ոք
կրթութեան վերայ էլ զազափար չունի: Հայրն
էլ է հայհոյում, մայրն էլ է հայհոյում և...
կար անելով ողջ մատներդ կարիւնոտես ծակ-
ծրկելուց... ու ընդ ամենը կը ստանաս 50 պը-
ֆենինգ օրը, որը նաֆթի էլ չի հերիք: Սա-
կայն ես և՛ ջահել եմ և՛ սիրուն... Ուրախա-
նալ է ուզում սիրտս. մի քիչ լաւ հագնուել

եմ ուզում... Ես շատ կ'ուզէի ուրիշ շրջաններում ընկնել... որովհետեւ ես միշտ հակուածն եմ ունեցել դէպի բարձր շրջանը: Այո՛, այո՛, դա միշտ եղել է ինձանում... Ես միշտ սիրել եմ այդ մասին գրքերում կարգալ... Իսկ եթէ հարկաւոր է մարդու գնալ... Ախ՛, Տէր Աստուած, ախր ո՛ւմ գնամ: Մի որ և է քոսոտ բանւորի գնալ ես խկի միտք չ'ունիմ, նորանք գիտեն միայն հարբել ու կուիւ ձգել: Ինձ հարկաւոր է կլթուած, ուսում առած ու զարգացած մարդ, իսկ եթէ այսպիսին չը կայ, ուրիշն էլ պէտք չէ: Կուրաք միշտ ինձ հետ լաւ է եղել: Նա ինձ երբէք ոչ մի վատ խօսք չի սովորեցրել, ես այստեղ եմ սովորել եմ այդ: Ես էլ ուզում եմ այստեղից դուրս գնալ... և խկի պէտքս էլ չի ինձ քո հովանաւորութիւնը: Ինձպէսները չեն կորչի:

ԲՕԲ. (յարձակվում է նորա վերայ, ըայց կանգ բռն է առնում): Կանչիր ձերունիներին:

ԱԼՄԱ: Իսկ հիմա ես հայրիկին կը հարցնեմ. կարելի է նա... (Րօքերտը սպաննայով, յարձակում է վերան): Դէ, գնում եմ, գնում... (զննում է):

ԲՕԲ. Այդպէ՛ս: Աւրեմն տես ին՞չպէս է եղել: Ախ՛, ին՞չ լալիան լիմարն եմ ես: Եւ ես ուզում էի լաւ խօսքով ներգործել այս բիրտ մարդկանց վերայ: Ո՛չ, այստեղ բանը զայլթակղութեան ու փորձանքի մէջ չէ, այլ արեան մէջ է:

Հիմայ ես կը գործեմ անսիրտ, կուպիտ... միևնոյնն է... թէ չէ ամեն բան կորած է:

ՏԵՍԱՐԱՆ V

ՐՕԲԵՐՏ, ԽԵՅԱԻԿԷ, ԽԵՅՆԻԿԷ — ՄԱՅՐԸ Լ ԱԼՄԱ:
(մայրը Ալմային հրում է իւր առաջից, Խէյնիկէն մտնում է կատաղած դէմքով):

ԽԵՅՆԻԿԷ: Այդպիսի անամօթութիւն:
ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Դի՛մակահանդէս գնալու փող է հարկաւոր. դէհ արի այժմ տանը նստիր:

ԽԵՅՆԻԿԷ: Ասա՛, խնդրեմ, դու միթէ արժանի չես իմ անէծքին: Ես քեզ էլի եմ անիծում, թանն ընկած մուկ:

ՐՕԲ. Ալմա՛, դուրս գնա՛. ինձ հարկաւոր է խօսել ձերբերի հետ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ին՞չ ես թրև գալի այդպէս, գոնե շոր ձգիր վերադ, հին կարկատած շոր:

ԱԼՄԱ: Հին ցնցոտիք:

ԽԵՅՆԻԿԷ: Դու՛րս:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Եւ չը համարձակուես սուրճ խմել: Դէ, դէ, մի՛ սուս (ցած կերպով): Նա պլիտայի վերայ է դրած: (Ալման դուրս է զնում):

ՏԵՍԱՐԱՆ VI

ՐՕԲ. Հայրիկ, մայրիկ, մի բարկանաք ինձ վերայ...:

Զեր կեանքում պէտք է և կը լինի անշուշտ մեծ փոփոխութիւն...

ԽԵՅՆԻԿԷ: Ինչ է եղել:

ՐՕԲ. Ես վերջնականապէս համոզուեցայ, որ Ալման կը փչանայ ու կորստեան յանդուհը կը գլորուի, եթէ նորան լաւ հանգամանքների մէջ չը դնել, որպէս զի անհնարին լինէր նորա համար վերադառնալ կրկին իւր տխուր անցեալին: Բայց ինչ կը լինի ձեր վիճակը: Զեզ այստեղ թողնել չի կարելի. որովհետեւ Միխայիլիները կը կողոպտեն ձեզ: Մի խօսքով, դուք ևս պէտք է ինձ հետ գաք:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (սարսափելով): Հնդկաստան:

ՐՕԲ. Այդ միւսնոյն է թէ ուր կը գնանք, բայց գուցէ և Հնդկաստան: Տրաստի ազդեցութիւնը ընդարձակ է և հեռու է տարածուած: Մենք այժմ այնպիսի պայմանների մէջ ենք, որ ինչ որ ուզենք, այն կ'ընտրենք:

ԽԵՅՆԻԿԷ: (հաճոյքով): Եթէ այդպէս է, այն ժամանակ միայն Հնդկաստան գնանք:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ախ', գլուխս պտոյտ է գալիս:

ՐՕԲ. Այդ ձեզ համար ծանր է, ես ինքս էլ եմ նկատում: Բայց խնդրեմ, մէք հրաժարուի գնալուց: Այդ միայն ըստ երևոյթին սարսափելի է թվում: Արևադարձի երկրում, պարզ երկնքի տակ աւելի յարմար է ապրել, քան այստեղ... Դուք այնքան ծառաներ կունենաք, որքան կը կամենաք:

ԽԵՅՆԻԿԷ: Օ՛, Ինչ հիանալի կը լինի:

ՐՕԲ. Եւ սեփական տուն: ԽԵՅՆԻԿԷ: Եւ արմաւենիք:

ՐՕԲ. Զեր ուզածից աւելի շատ: ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Եւ մենք ինքներս կարողենք ծառերից ամենալաւ պտուղներ քաղել:

ՐՕԲ. Կարելի է հրամայել, որ քաղեն:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Եւ այդ բոլորն առանց փողի:

ՐՕԲ. Համարեայ առանց փողի:

ԽԵՅՆԻԿԷ: Թուժակներ էլ են թուչում այնտեղ, կապիկներ էլ, ինչպէս զազանանոցում:

ՐՕԲ. Ուրեմն դուք համաձայն էք:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Դու ինչ կասես, ծերո՞ւկ:

ԽԵՅՆԻԿԷ: Ի՛նչ, ինչ կայ, գնանք:

ՐՕԲ. Շնորհակալ եմ ձեզանից, շնորհակալ եմ: (մի կողմը): Փառք Աստուծոյ, որ հեշտութեամբ բանը գլուխ եկաւ: (բարձր): Մայն ժամանակ չը պիտի կորցնել: Ո՛ւր են գրիչը և թուղթը: (Ետնիկէ խորը մտածմունքով քորում է ծործորակը):

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Կարելի է Ալմայի մօտ լինի (գնում է Ալմայի սենեակը):

ԽԵՅՆԻԿԷ: Ի հարկէ կը լինի, որովհետեւ նա միշտ նամակեր է գրում: (վառարանի դռնակը փակում է):

ՐՕԲ. (ինչն իրեն թելել հոգոց հանելով): Այժմս կրկնակի ինձ հետաքրքրում է, թէ ինչ է այն բաւարարութիւնը, որ նա պիտի ինձ առաջարկէ և որը ես պիտի մերժեմ: Կը մերժեմ, ինչպէս և մենամարտութիւնը: Սոքա

ինձ վախկոտ և անպատիւ մարդ պիտի համարեն: Ինչ արած... ինձ հարկաւոր չէ նորանց պատիւը. ինձ հարկաւոր է մի կտոր հաց վաստակել:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (վերադառնալով): Այնտեղ սեղանի վերայ բոլորը պատրաստ է, կամ կարելի է դուր այստեղ ես կամենում:

ԲՕԲ. Ո՛չ, ո՛չ, այնտեղ աւելի լաւ է, որովհետեւ ինձ չեն խանգարի:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Գուշատ յոգնած կը լինես... գոնէ մի ժամ էլ է քնէիր:

ԲՕԲ. (գլուխը շարժելով): Եթէ պ. Միւլինգը մարդ ուղարկէ, կամ ինքը դայ, այն ժամանակ կանչեցէք ինձ: (Գնում է:)

ՏԵՍԱՐԱՆ V II

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (Նստելով աթոռի վերայ) Հնդկաստան:

ԽԵՅՆԻԿԷ: Մենք արդէն ձերացած ենք, մեզ պատկառելի մարդկանցս, աշխարհի մի ծալրից միւս ծալրը պիտի քաշ տայ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Օ՛, Աստուած իմ:

ԽԵՅՆԻԿԷ: Ի՞նչ բան է:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Միխայիլիք են:

ԽԵՅՆԻԿԷ: Մթթէ: Նորս: (Սէրտուկը կոճկում է:)

Լաւ, ես ցոյց կտամ նորանց: (Բաղխում են:)

ԵՐԿՈՒ ԽԵՅՆԻԿԷՔ: (ցած ձայնով): Ներս մտէք:

ՏԵՍԱՐԱՆ V III

ՆՈՅՆՔ, ԱԻԳՈՒՍՏԱ և ՄԻԽԱՅԼՍԿԻՆԱՍ

ՄԻԽԱՅԼՍԿԻ: (մի կապոց ձեռին): Բարե առաւում:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Մ, ա... ս...
ԽԵՅՆԻԿԷ: (ընունցքով սպառնալով): Ահա՛նախկին ձեզ ցոյց կը տամ. կորէք այստեղից այս րոպէին:

ԱԻԳՈՒՍՏԱ: Այսօր դըտում օդը սրբան թարմ է:
ՄԻԽԱՅԼՍԿԻ: (նստում ու ըստ է անում շիշը): Ահա՛ ձեզ համար խմիչք էլ եմ բերել: Սա այն տեսակիցն է, որ մտաներդ էլ հետը կը լիգես: Տո՛ւր ինձ խցահանը:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Մի ուրիշ անգամ այժմ մենք չէ որ պէտք է ձեզ դուրս վաճառենք:

ԱԻԳՈՒՍՏԱ: Այդ ո՞վ ասաց:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Մ... Բօքերտը:

ԱԻԳՈՒՍՏԱ: Ինչպէս, միթէ՞ դուք թոյլ էք տալիս նորան, որ ձեր տան մէջ ձեզ հրամաններ արձակէ:

ԽԵՅՆԻԿԷ: (ցած ձայնով): Հանդարտ, չէ որ նա հարեւան սենեակումն է:

ԱԻԳՈՒՍՏԱ: (ափսոսալով): Խեղճ հայր: Նա մինչև անգամ դողում է երկիւղից:

ՄԻԽԱՅԼՍԿԻ: Այսպէս վարուել աղքատ, սրտուռա-

Լոր մարդկանց հետ... գարշելի արարած:
ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Նա գարշելի չէ, ընդհակառակը
օրինակելի որդի է: Նա մեզ վերայ հոգս է
տանում:

ԽԷՅՆԻԿԷ: Գոնէ կամենում է մեզ մինչև Հնդկաս-
տան տանել:

ՄԻԽԱՅԼՍԿԻ:

(Մ'իասին:) Ինչ: Ուր:

ԱԻԳՈՒՍՏԱ:

ԽԷՅ.-ՄԱՅՐ: Հնդկաստան:

ԱԻԳՈՒՍՏԱ: Այդ քնչ բանի համար:

ԽԷՔ.-ՄԱՅՐ: Միայն նորա համար, որ Ալման դի-
մակահանդէս էր ուզում գնալ և նրա գլխի ամեն
մի անկիւնում մի-մի կավալերներ են նըստած:

ՄԻԽԱՅԼՍԿԻ: Բայց նա գժուէլ է, քնչ է:

ԽԷՅ.-ՄԱՅՐ: Ահա դորա համար պիտի թողնենք
մեր կահ կարասիները... մեր տան գեղեց-
կութիւնը...

ԱԻԳՈՒՍՏԱ: (Մ'իակողմանի կերպով:) Եւ ինձ
անբաղդիս էլ նոյնպէս երեսի վերայ կը
թողնէք: Իուք կահ կարասիներն արդեօք պի-
տի ծախէք:

ԽԷՅ.-ՄԱՅՐ: Կահ կարասիները: (Աւզուստան
գլուխը քարծրացնում է ու ցածացնում:)
Ստիպուած պիտի ծախել:

ԱԻԳՈՒՍՏԱ: Հայելին էլ, (Մայրը հաստատելով
գլուխը շարժում է: Աւզուստան զգացուած:)
Եթէ ես ձեր տեղը լինէի, փոխանակ նորանց
չնչին գնով տալու, յիշատակէ համար կ'ըն-

ծայէիք ձեր աղջկան, որն որք պիտի մնայ:
Ահա այն ժամանակ կարող էք հաւատացած
լինիլ, որ ձեր կահ-կարասիները կը պահ-
պանուին, ինչպէս պէտք էր:

ԽԷՅ.-ՄԱՅՐ: (կասկածելի հայեացքով շարժում է
Աւզուստային, յետոյ ցած ձայնով յօշոյնիկէ
ին:)— Լսում ես, ծերուկ, սա արդէն մեր
բազկաթոռների ընտրութիւնն է անում:

ԱԻԳՈՒՍՏԱ: (ուղղուելով:) Լաւ, եթէ դուք կամե-
նում էք ծախել, մենք միշտ էլ ձեզ լաւ գին
կը տանք, որպէս զի այդ բոլորը գոնէ որդոց
որդի անցնեն:

ԽԷՅՆԻԿԷ: Բայց սպասեցէք, խօսմ դեռ ևս մենք չը
գնացինք:

ՄԻԽԱՅԼՍԿԻ: Ես եթէ ձեր տեղը լինէի...

ԽԷՅ.-ՄԱՅՐ: Ե՛հ, մենք քնչ կարող ենք անել:
Մենք ամեն բանով կախումն ունինք Բո-
բերտից: Նա ուր որ հրամայէ, մենք պէտք
է գնանք: Այլապէս չենք գայ ձեր վզին
նստելու:

ԱԻԳՈՒՍՏԱ: Մի վախիր, մենք ինքներս ոչինչ
չ'ուենենք ուտելու: (Բաղխում է ն:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի X

ՄԻԻԼԻՆԳ: (Բողոքը վախեցած վեր են թռչում?)

ՄԻԻԼԻՆԳ: Բարե առաւօտ ձեզ, իմ սիրելիք: Ձեր

որդին տանն է, թէ ոչ:

ԽԵՅՆԻԿԷ: (առանձին յարզանքով:) Ինչպէս չէ,

ինչպէս չէ, տանն է:

ԽԵՅ.-ՄԱՅՐ: (դուռը քայ անելով:) Բօբերտ...

(Փափկութեամբ: Ախ տէր Աստուած, աթո-

ռի վերայ քունը տարել է... Ախր նա ամ-

բողջ գիշերը չէ քնել... Բօբերտ, պ. Միւլինգը:

ՄԻԻԼԻՆԳ: Ո՛չ, շատ խորն է քնել:

ՄԻԻԼԻՆԳ: (քաղցրութեամբ:) Այո՛... Է՛՛հ աւելի

լաւ, մի՞ք զարթնեցնի:

ԽԵՅՆԻԿԷ: Փակի՛ր դուռը:

ԽԵՅ.-ՄԱՅՐ: (ցած կերպով:) Ձէ որ նա հրամայեց...

ԽԵՅՆԻԿԷ: Նա ասաց երիտասարդ աղալի մասին:

(Դուռը փակում է:)

ՄԻԳՈՒՍՍԱ: (իւր մարդուն:) Նայի՛ր թէ քնն չը

չմզոլինի:

ՄԻԻԼԻՆԳ: (հայեացք ձգելով սենեակին:) Սիրելիք,

պիտի ասել, որ ձեզանում այտեղ շատ

հիանալի է:

ԽԵՅՆԻԿԷ: (քաղաքավարի կերպով:) Արդեօք ձեզ

հաճելի չի լինի նստել... ահա այս բազկա-

թոռի վերայ:

ՄԻԻԼԻՆԳ: Ա՛յ, ա՛յ, քնն լաւ միտաքս է:

ԽԵՅ.-ՄԱՅՐ: Այո՛, շատ լաւ մետաքս է:

ՄԻԻԼԻՆԳ: Կարելի է որ և է մարդու բերած ըն-
ծայ լինի:

ԽԵՅ.-ՄԱՅՐ: (կրկրկրմալով:) Այո՛... այսպէս ասած...

ՄԻԻԼԻՆԳ: (անհոգ կերպով:) Կարելի է, իմ որդու:

ԽԵՅՆԻԿԷ { Այո՛

և (մ'ախիհն:)

ԽԵՅ.-ՄԱՅՐ: { Մ... ս...

ՄԻԻԼԻՆԳ: (մ'ի կողմ:) Անպիտան: (Բարձր:) Հա՛,

'ի գէպ. ձեր սիրելի որդին այնքան զգոյշ չէ

վարուել իմ որդու հետ և իւր չափը չէ ճա-

նաչել: Պարզ ասեմ, ես սպասում էի նորանից

այլ երախտապարտութիւն: Սակայն դուք նո-

րան կարող էք հաղորդել, որ ես նորան ար-

ձակել եմ արդէն և հաշուի եմ սպասում նո-

րանից մինչև երեկոյեան ժամի չորսը:

ԽԵՅ.-ՄԱՅՐ: Ախ՛, Աստուած, նա շատ պիտի վշտա-

նայ ու տխրի դորա համար:

ԽԵՅՆԻԿԷ: Նա սիրում է ձեզ ծնօղ հօրպէս:

ՄԻԻԼԻՆԳ: Այո՛, այդ ինձ շատ ուրախալի է: Բայց

ես դորա համար չեմ եկել ձեզ մօտ սիրելիք...

դուք մի աղջիկ ունիք:

ԱԻԳՈՒՍՍԱ: (առաջ գալով:) Ծառադ եմ:

ՄԻԻԼԻՆԳ: Ինչ բանով կարող եմ ձեզ օգտակար

լինել:

ԱԻԳՈՒՍՍԱ: (առանձին յարզանքով:) Ես եմ աղջիկը:

ՄԻԻԼԻՆԳ: Այո՛: Դուք էք: Շատ ուրախ եմ: Շատ

ուրախ եմ. բայց իմ խօսքը ձեր մասին չէ:

Իմ ասած աղջկայ անունը Ալմայ է:

ԽԵՅ.-ՄԱՅՐ: Շատ ճիշտ է: Եւ ճշմարիտ պիտի

խոստովանել, որ Ալման շատ գեղեցիկ է:
 ԽէՅՆԻԿԷ: Եւ քանքարաւոր աղջիկ է: Մենք նորան պատրաստում ենք, որ երգչուհի լինի:
 ՄԻԻԼԻՆԳ: Ախ', միշտ հաճելի է տեսնել, որ զաւակները մխիթարում են իրենց ծնողներին: Բայց մի բան ինձ դուր չի գալի. այդ այն է՝ որ ձեր գեղեցիկ ու հիանալի աղջիկը օգտուեց այս տան մէջ ապրելով, որտեղ ես ձեզ թող տուի ամբողջ 17 տարի ապրել, որպէս զի սիրային յարաբերութեան մէջ մտնի որդուս հետ: Այն, պարզ ասեմ, ես ուրիշ երախտագիտութեան նշան էի սպասում:

ԽէՅՆ.-ՄԱՅՐ: Բայց, պարոն տէր:

ՄԻԻԼԻՆԳ: Ընդհատելու համար բոլոր յարաբերութիւններն իմ և ձեր ընտանիքի մէջ, ես ձեզ առաջարկում եմ նոյն բանի փոխարէն մի մեծ գումար, որը սիրելի Խէչնիկէ, կարող էք բաժանել ձեր աղջրկայ հետ այնպէս, որ կեսը օրիորդի համար օժիտ լինի, երբ նա պիտի մարդու գնայ մէկին թէ ինչ տեսակ մարդ կը լինի, այդ միւսնայն է... (ժպտալով): Մինչև նրա ամուսնանալն այդ գումարը ձեր անօրէնութեանն եմ յանձնում: Ինչ կասէք, համաձայն էք:

ԱԻԳՈՒՍԱ: (յետեւից ցած ձայնով): Աստ, «այն»,

ԽէՅՆԻԿԷ: Ես... ես...

ՄԻԻԼԻՆԳ: Ես նշանակեցի սովորականից դուրս մեծ գումար, որպէս զի լուծուի այն անմիտ

խոստումը, որ ձեր սիրալի որդին երեկ ճարպիկութեամբ կարողացել է դուրս խլել իմ որդու բերանից: Այդ գումարը հասնում է մինչև (տատանվում է եւ խօսքը կույ է տալիս): 50 հազար մարկի:

ԽէՅՆԻԿԷ: (Ճշարով): Օ՛, Աստուած իմ, սիրելի աղայ, ուղիղ էք ասում:

ԽէՅՆ.-ՄԱՅՐ: Օ՛, տէր՝ իմ, ես վատ եմ զգում ինձ: (ընկնում է աթոռի վերայ, Աւզուստան ընկնում է նորան):

ՄԻԻԼԻՆԳ: (մի կողմը դառնալով): Շատ-շատ է... (քարձր ձայնով): Ես ձեզ նորից եմ հարցնում. բաւական է ձեզ 40 հազար մարկ:

ՄԻԽԱՅԼԱՍԻ: Գուք կարծեմ, առաջ ասացիք...

ԱԻԳՈՒՍԱ: (հորը զաղտնի կերպով բռնելով): Շուտով աստ, «այն»... եթէ ոչ նա էլի կը պակսեցնէ:

ԽէՅՆԻԿԷ: Սիրելի աղայ, ես հաւատալ չեմ կարող մինչև անգամ 40 հազարի: Այդքան փող աշխարհումս չի էլ լինի: Այդ լիմարութիւններ են: Ցոյց տուէք ինձ փողերը:

ՄԻԻԼԻՆԳ: Փողերը պատրաստ են ձեզ համար իմ գրասենեակում:

ԽէՅՆԻԿԷ: Բայց, կարելի է, ձեր գանձապահը հրամայէ ինձ իմ վզակիթին տալով, դուրս անեն: Գուցէ ասէ. թէ ես խելագար եմ, ինչ եմ: Օ՛, Աստուած, գանձապահները որ աստիճան կոպիտ են վարվում մեզ նման աղքատ մարդկանց հետ: (Միլիկնալը հանում է ծոցից ստա-

ցազրերի զրքոյկը, զրում է. սրկում է մի
հատ եւ տալիս է խէյնիկէին: Բոլորը վրայ
են թափվում եւ ուշադրութեամբ նայում են
օրդերի վերայ: 40 Հազար... սիրելի ազնւոյ,
այս ձեր կողմից սրբան ազնութիւն է: Տուէք
ինձ ձեր ձեռք:

ՄԻԻԼԻՆԳ: (ձեռք պահում է զրպանում:) Հն,
էլի ինչ պիտի ասէի: Ես վաղը կուղարկեմ
ձեզ կահ կարասիների համար սալ և երկու
ժամից յետոյ դուք նեղութիւն կրեցէք իմ
տունը դատարկել: Այնուհետև ես յոյս ունեմ:
որ ձեր մասին այլ ևս երբէք մի խօսք ան-
գամ չը պիտի լսեմ:

ԽԵՅՆԻԿԷ: Աղա՛ս այդպէս մի՛ ասէք: Եթէ ձեզ
ձանձրոյթ չի լինի պատուելի նուաստիս այ-
ցելութիւնը, այն ժամանակ ես երբեմն ու-
րախութեամբ, մեծ հրճուանքով պատիւ կու-
նենամ ձեզ այցելելու: Այո՛, ես մի ծեր, պա-
տուի տէր մարդ եմ:

ՄԻԻԼԻՆԳ: Ի հարկ է, ի հարկ է. խօսք չը կայ:
Մնաք բարով, սիրելիք: (Ի կողմ դառնա-
լով:) Հայնա՛ն! (դու է գնում:)

ՏԵՍԱՐԱՆ X

ՆՈՅՆՔ առանց Միւլինգի:

ԽԵՅՆԻԿԷ: Դու, մայր, 40 հազար... (Միխայիլսկին
ուզում է նորան զրկել:) Դէհ, երեք քալ յետ

գալիքն, փեսայ, մօտ չը գաս:
... (որոնում է զրպանում քիթ) Թաշկինալը.
վերջապէս գտնում է, փռում է ծնկների վե-
րայ ամենայն խնամքով, փաթաթում է նո-
րա մէջ օրդերը եւ պահում զրպանի խոր-
քում:) Այժմ դու կարող ես փափկասեր
դառնալ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ես այժմ ուրախութիւնից ինքս ինձ
կորցրել եմ: (Փաթաթվում են լաց լինելով:)
Երբ մտածում եմ, որ այլ ևս ես առանց փո-
ղի փողոց չը պիտի գնամ բան առնելու,
կարծէք, աշխարհս ինձ է պատկանում: Իսկ ճա-
շերից յետոյ, երբ ես յանկարծ մտքս եմ,
կարող եմ հանգիստ խղճով ու համարձակ
կերպով մի քանի անգամ վառարանը վառել:

Իսկ երեկոներին ընթրիք անելիս, կուտենք
խոզի միս և ուրիշ շատ տեսակ մսեղէն խոր-
տիկներ:

ԽԵՅՆԻԿԷ: Իսկ ես կարող եմ այժմ ձիաքարշով ման
գալ, որքան որ ուզեմ:

ՄԻԻՍԸՆՍԿԻ: Ծիշտ 400,000 անգամ շտաս—տաս
պֆենինգով:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Իսկ ինձ համար կանապէ կաննես:
ԱԻԳՈՒՍՏԱ: Է՛հ, մի վախենաք, Հնդկաստանն այլ
ևս չէք գնայ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: { Աստուած քեզ հետ...
և (միասին:)
ԽԵՅՆԻԿԷ: { Դու գժուէ՛լ ես, ին՛չ է...

ԱԻԳՈՒՍՏԱ: Բայց զորա մասին եղբայրս ին՛չ կասի:
 ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (Տրժուանքով:) Ա՛խ, այո՛, իսկ որդէ՛ր...
 ԱԻԳՈՒՍՏԱ: (ընկերով նորան:) Ես քեզ խորհուրդ
 կը տամ նորան հանգիստ թողնել: Ժամանակ
 կը գայ, երբ նա կիմանայ. ինչ ես ըշտապում:
 ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (վահեցած:) Ին՛չ կայ:
 ԽԵՅՆԻԿԷ: (կնոջ փէշից քաշում է եւ ցոյց է տա-
 ձնոյ շին դուռը դէպի խոհանոց:) Իսկ այնտե՛ղ,
 այնտե՛ղ... Հ՛ը... Հ՛ը...
 ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ա՛խ, իմ սիրելի Ալմա, իմ խղճուկ
 զաւակ:
 ԽԵՅՆԻԿԷ: (խորհրդաւոր կերպով:) Մ՛ը, մենք նո-
 յանց լան մի սիւրպրիզ կամ մի անսպասելի ընծայ կը
 յաճկոտանք: (ըլլորը թաթերի վերայ գնում են
 դէպի դուռը խոհանոցը մտնելու: ԽԵՅՆԻԿԷՆ
 գնում է առաջ եւ քաց է անում դուռը, խո-
 հանոցում ծիչ, աղաղակ է քարճրանում,
 ԽԵՅՆԻԿԷՆ զարհուրած յետ է թռչում:) Ա՛հ
 այդպէս, այդպէս:
 ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (ծեռներին տալով:) Ո՛հ, Տէ՛ր Աս-
 տուած:
 ՄԻԽԱՅԼՍԿԻ: (մօր ուսերից նայելով:) Մ՛, սատա-
 նէն տանի:
 ԽԵՅՆԻԿԷ: (կեղծաւոր խստութեամբ:) Ռէ, դու
 շո՛ւտ պիտի դուրս գաս, թէ չէ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն X I

ՆՈՅՆՔ Լ ԱԼՄԱ:

ԱԼՄԱ: (խոհանոցից վահովելով:) Ա՛խ, չէ, չէ.
 աղաչում եմ:
 ԽԵՅՆԻԿԷ: Շո՛ւտ: (Ալման դուրս է գալիս հարուստ
 հնդկական հագուստով, ամաշելուց երեսը
 ծածկում է ձեռներով: Բոլորը շքապատում
 են նորան, ծիծաղները զսպելով եւ զարմա-
 ցքի հառաչանքներով:)
 ԱԻԳՈՒՍՏԱ: Հնդկական հագուստով:
 ՄԻԽԱՅԼՍԿԻ: Այո՛, դքսուհու կողոպտած շորերով:
 ԱԼՄԱ: Ես ուզեցայ... միայն... չափել վերաս...
 ես այս բոպէին կը հանեմ...
 ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (փաղաքշելով նորան:) Ա՛խ, Աս-
 տուած իմ, կարծէք, կատարեալ հրեշտակ լինի:
 ԱԼՄԱ: Դուք այլ ես ինձ վերայ չէք բարկանայ:
 ԽԵՅՆԻԿԷ: Ին՛չպէս թէ չէք բարկանայ: (վրայ է
 ընկնում խստութեամբ:) Այսինքն յատկապէս
 սասած, շատ, բայց մենք կամենում ենք էլի
 ցոյց տալ քեզ մեր ներողամտութիւնը: (յետ
 դառնալով:) Լաւ սասցի, չէ:
 ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (Ալմայի գլուխը շփում է եւ նո-
 յանց տանում է դէպի աջ:) Ե՛կ, այստեղ նըս-
 տիւր, այստեղ: Ո՛հ. այստեղ, այստեղ, բազկա-
 թոռի վերայ:
 ԱԼՄԱ: Բազկաթոռի վերայ. ին՛չ է պատահել:

ԽԵՅՆԻԿԷ: Հ՛ր... Հ՛ր... (նստում են Ալմայի շուրջը:)
ԱԼՄԱ: Այսօր ուրեմն ինձ զլնակահասնդ էս էլ կա-
րելի է գնալ:

ԽԵՅՆԻԿԷ: Այո՛, այո՛, կարելի է, կարելի է:

ԱԻԳՈՍՏԱ: Խեղճ զաւակ:

ԽԵՅՆԻԿԷ: (տեղից վեր թռչելով:) Ախ, հա՛... ինձ
հարկաւոր է այս ըոպէիս աղալի գրասենեակը
ըշտապել:

ՄԻԽԱՅԼՍԿԻ: Սպասիր, այստեղ հարկաւոր է մի
քիչ թռչուի՛նք, որ բաղդը մեզ լաւ կպչի: Ալ-
մա, բաժակները բեր: (շէշը բաց է անում:)

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (տեղից վեր թռչելով:) Հանգիստ
թող սիրելի աղջըկանս: Ես ինքս այս ըոպէին
կը բերեմ: (գնում է պահարանի մօտ եւ
դուրս է բերում կարարէ լէկեօրի քաժա-
կներով:) Մի քանի ըոպէ առաջ դու ին՞չ էիր
ասում Բօբերտի մասին:

ԱԻԳՈՍՏԱ: Վերջը կը տեսնես: (այս ել ծառայ
ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Խօս նա չը պիտի մեզանից, աղքատ
ծնօղներիցս, մեր բաղդը խէ:

ՄԻԽԱՅԼՍԿԻ: (քաժակը վեր բարձրացնելով եր-
գում է:) Եւս քո գոյնը այս օրը ծառայ
« Այսպէս ենք ապրում: »

« Այսպէս ենք ապրում: »

« Այսպէս ենք ապրում մենք ամեն օր: »

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Յաճ, ի սերն Աստուծոյ: (այն սեն-
եակը ուր Բօբերտն է, լսվում է ընկած ա-
թոռի ձայն:)

ՄԻԽԱՅԼՍԿԻ: Մեծապատիւ պարոններ, Ալմա Խէյ-

նիկէին, մեր զաւակին բաղդաւորութիւն, իսկ
ամենից առաջ այն Ֆիրմային, որ ցոյց տուեց
իրե՛ս: այդպիսի ազնիւ կողմերով:

ԽԵՅՆԻԿԷ: Կեցցէ Միւլինգը և իւր Ֆիրման ու վա-
ճառատունը: Ուրա՛... ինչո՞ւ ինչ ինչ ինչ
այդպիսի մէ ինչո՞ւմ, միջապա միայն
-մի մեծ ծառայող մի զայն զայն ազգէ: Եւս
չմի ինչ յո՞նք և Բօբերտ (դուան մէջ:)

ՏԵՍԱՐԱՆ XII

ԲՈՂՈՐԷ: Ուրա՛...
ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Նա է (լուծիւն եւ շփոթիւն:)
ՄԻԽԱՅԼՍԿԻ: Բարև եկար, աներձագ:

ԲՈՐԵՐՏ: Բացաւրէ ինձ, մայր, ին՞չ երեսով այս
մարդիկ նստած են մեր պատուաւոր սեղանի
շուրջը:
ՄԻԽԱՅԼՍԿԻ: Օ՛... հօ՛...

ԽԵՅՆԻԿԷ: Այդքան անքաղաքավարի մի լինի:
ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (գնում է Բօբերտի մօտ:) Որդիս,
հպարտանալը լաւ բան չէ. նա մանաւանդ ազ-
գականների առաջ:

ԲՈՐԵՐՏ: Հըմ... Ալմա, այդ ին՞չ է: Ո՛վ թող տու-
եց քեզ:

ԽԵՅՆԻԿԷ: Այդ նորա համար է, որ դու մոռանաս
քո սիրելի Հնդկաստանը: Ես աւելի լաւ եմ
համարում փողերս միսել տանս մէջ, Գեր-
մանիայում:

ԲՈՐ. (զարմացմամբ:) Այստեղ մի՛ բան է պա-
տահել:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Գու խօսիր, ծեր. չէ որ քո մօտ են
թղթերը:

ԲՕԲ. Ինչ թղթեր:
ԽԷՅՆԻԿԷ: (նստում է լուրջ դիրք ընկած): Որ-
դեակ իմ, մի քանի մարդկանց մասին դատել
միայն արտաքին տեսքով չի կարելի: Նոքա,
այսպէս ասած՝ իրենց մէջ թագնուած են լի-
նում: Դորա համար պէտք է նորանց միշտ յար-
գել, քանի որ չի կարելի իմանալ, թէ ինչ
կայ համեստ շորի տակ թագնուած: Մուշ-
տակ իւրաքանչիւրն էլ կարող է կրել իւր
վերայ:

ԲՕԲ. Վերջապէս դու բացատրելու ես ինձ:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Բաւական է, ասա:

ԽԷՅՆԻԿԷ: Այսպէս, ուրեմն... ես արդէն ասացի...
Բոլորը շատ հասարակ բան է եղել... աղան
այստեղ էր:

ԲՕԲ. Նա... ինչո՞ւ ինձ չը զարթեցրիք:

ԽԷՅՆԻԿԷ: Ինչպէս չէ: Նախ՝ պիտի ասել, որ երի-
տասարդ աղան չէր եկողը: Գու կարող ես
ընդունել քո բարեկամներին, իսկ մեծ աղան
այժմ իմ սիրելի բարեկամն է: Մենք խոստա-
ցանք այսուհետև միշտ իրարու այցելել: Երկ-
րորդ՝ պիտի ասեմ, որ ես ամենևին դիտաւո-
րութիւն չունիմ իմ որդուց զանազան հրա-
մաններ ստանալ: Բաւական է վերջապէս,
հասկանում ես, թէ ոչ:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Ի՛է, ծերունկ:

ԽԷՅՆԻԿԷ: Դու մի՛ խառնուի, երբ ես որդուս խրա-

տում եմ: Ես այլ ևս թոյլ չեմ տայ ինձ քեզ
հետ հանաքներ անելու:

ՄԻԽԱՅԼՍԿԻ: (ետեւից): Հենց այդպէս է հարկաւոր:
Այժմ ես հասկանում եմ:

ԲՕԲ: Ալմայի մասին խօսք եղաւ:
ԽԷՅՆԻԿԷ. Նախ խօսքը քեզ վերայ է եղել: Գու,
քո ծառայութիւնից զրկուած ես վատ վար-
քիդ համար: Պարզ ասեմ, ես սպասում էի
քեզանից ուրիշ շնորհալի բաներ:

ԲՕԲ. Գ՞ու, հայր:

ԽԷՅՆԻԿԷ: (խստութեամբ): Այո՛, ես, քո ծեր, պա-
տուաւոր հայրը: Ես չեմ կարող տանել, երբ
որդիս թափառում է փողոցներում անգործ:
Բայց այնտեղ, այսօր մինչև չորս ժամը դու
պարտական ես հաշիւ ներկայացնել աղային,
ապա թէ ոչ, վատ կը լինի քո բանը:

ԲՕԲ. (ուռչելով քարկուծիւնից, ըստ պահում է
իրեն): Խօսենք Ալմայի մասին: Նա ձեզ բա-
ւարարութիւն առաջարկեց, այնպէս չէ:

ԽԷՅՆԻԿԷ: Շատ հասկանալի բան է և լիովին
բաւարարութիւն:

ԲՕԲ. (դանդաղ կերպով, իբր թէ անյարմար է
զգում): Ուրեմն... ամուսնութիւն:

ԽԷՅՆԻԿԷ: Ինչ ամուսնութիւն:

ԲՕԲ. Այսինքն, նորա որդուն Ալմայի հետ:

ԽԷՅՆԻԿԷ: Գու զգուէ՛ր ես, ինչ է:

ԲՕԲ. (վախեցած տեղից վեր թռչելով):

Ուրեմն ինչպէս:

ԽԷՅՆԻԿԷ: (խորամանկութեամբ ցած ձայնով նոյն

իսկ նորա սկանչին:) Ամբողջ 40 հազար մարկ: (ըարձր:) Ուրեմն ինչպէս... պատուաւոր չէ՞ դա, լաւ վարմունք չէ՞:

ԲՕԲ: (վայրենի աղաղակով:) Ոսկի՞. ո՞չ?

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (վախեցած:) Աստուած իմ, սիրտս վկայում էր:

ԲՕԲ. Փո՞ղ.!!

ԽԵՅՆԻԿԷ: Ի հարկէ, ահա փողերը: Միւնոյնն է թէ նաղդ է:

ԲՕԲ. Ինչպէս, և դու վեր առա՞ր: (իրենից դուրս գալով յարձակվում է նորա վերայ:)

ԽԵՅՆԻԿԷ: Ինչ կը լինի:

ՄԻԽԱՅԼՍԿԻ: (մէջ է ընկնում:) Ես քեզ խորհուրդ եմ տալիս ծերին հանգիստ թողնել:

ԲՕԲ. (հեռանալով, նորա վերայ ուշադրութիւն չի դարձնում:) Մայր, դուք վեր առաք:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (ձեռները ծալած:) Մենք աղքատ մարդիկ ենք, որդիս: (Բօքերտը ծիծաղելով ընկնում է նստարանի վերայ, Միխայիլին եւ Ալոուստան հոգ են տանում Խէյնիկէի շուրջը: Ալման ձեռները կուրծքին ծալած նստում է քազկաթոռի վերայ եւ ծիծաղում է:)

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Տէր, ողորմիր մեզ: Սա կը խելագարուի: (ձեռը դնում է ուսի վերայ:) Որդիս, օրինակ անքո պառաւ մօրից: Ինչու բաղդը մեր ոտների տակ դնենք: Հպարտներին Աստուած էլ չի տայ:

ԲՕԲ. Մայր, դեռ այդ չէ ամենազազրալի ու տգեղ բանը... լաւ է ես մեռնիմ ցեխի մէջ, ծղնտի վերայ... թող ես սատկիմ, ինչպէս շուն, միայն թէ դուք փողը յետ տուէք: Նայեցէք, ես պիտի հանգիստ ու սառը խօսեմ: Ես մատերով կը համարեմ, թէ դուք ինչ պիտի անէք: Նորա մեզ խայտառակեցին... լաւ... Բայց խօսմ մենք մեղաւոր չենք. մենք ամաչելու ոչինչ չ'ունեինք ոչ ոքի առաջ... Կարելի է գողանալ պատիւս, ինչպէս փողիս քրտակը, այդ բանի դէմ մարդս, այն, անպաշտպան է: Բայց երբ մենք մեր վերջին պատիւն ենք ծախում նաղդ փողով... այն ժամանակ մենք ինքներս էլ անպատիւ ենք և անպատկառ ու մենք միշտ այսպէս ենք եղել. անպատիւ, անզգայ և առանց թասիբի ուրիշի առաջ... Ուրեմն մենք մեր արարքով պատժւում ենք ամեն բանում: (Խէյնիկէն դառնում է Միխայիլին, իսկ նա մատով ցոյց է տալիս ծակատի վերայ:) Տէր Աստուած, չէ՞ որ ես բոլորը հասկանում եմ... Եւ ես ձեզ չեմ մեղադրում: Իրաւ եմ ասում, ո՞չ: Ձեր կեանքը միշտ մի կտոր հացի համար ոչնչացնում է ամեն հասկացողութիւն մարդկային առաւելութեան ու պատուի վերայ. կորցնում է նորա կանոնաւոր դատողութիւնը: Եւ դուք կուրացաք մի կտոր ոսկու համար, բայց հաւատացէք, որ ոսկին ձեզ բաղդաւոր

ըուծիւն չի տայ: Մարդու երջանկութիւնն ու բաղդը դորա մէջ չէ: Դա միայն զգուանք կը պատճառի ձեզ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Մարմնովս սարսուռ է անցնում այդպիսի խօսքեր լսելիս:

ԽԵՅՆԻԿԷ: Ուրեմն այդպէս, որդեակ:

ԲՕԲ. Եւ դուք չը կարծէք, թէ մի բան կը կորցնէք, եթէ ինձ լսէք:

Նայեցէք ինձ. չէ որ մի բան սովորել եմ: Չէ որ ձեռներս առողջ են, կարող են աշխատել. դեռ ես չեմ ծերացել: Միթէ ձեր կեանքի մնացած օրերը հանդիստ կերպով ինձ չէք կարող հաւատալ: Չէ որ ես կամենում եմ աշխատել միայն ձեզ համար... հարստացնել... ձեզ հարստացնել: Դուք կարող էք անել ինձ հետ այն, ինչ որ կամենաք... Ես ձեր սարուկը կը լրինեմ... ձեր դռան շուներ կը լինեմ, միայն թէ՛ այդ փողերը յետ տուէք:

ԽԵՅՆԻԿԷ: Այդ բոլորը շատ գեղեցիկ է, բայց աւելի լաւ է, լոյս եղած տեղն էջը չը կորցնենք... ես ուզում էի ասել...

ՄԻԽԱՅԼՍԿԻ: Շատ ճիշտ է:

ԽԵՅՆԻԿԷ: Այո՛, ուզիդ է... Այսպէս ուրեմն, որդիս. դու հանգիստ կերպով գնա՛ քո արագիւնների յետևից, իսկ ես իմ էջը կը քշեմ: Ես այս րոպէիս տոմսակը նաղդ փող կը շինեմ:

ՄԻԽԱՅԼՍԿԻ: Կեցցես...

ԲՕԲ. Իսկ դո՛ւ, մայրիկ... (մայրը լոռով է եւ երեսը յետ է դարձնում): Դու էլ: Տէր Աստու-

ած, ես ին՛չպէս անեմ: Ա՛լմայ, չէ որ այս բոլորը քո պատճառով է... ես քեզ համար ամեն բան պատրաստ եմ անելու, միայն թէ այժմ ինձ օգնիր: (ընում է Ալմայի ձեռնից: Ալման ընդդիմանում է: Նա նորան տեղն է քերում):

ԱԼՄԱ: (յամառութեամբ): Թող ինձ:

ԱԻԳՈՒՍՏԱ: Նա նորա ձեռները կը կոտրտէ:

ԱԼՄԱ: Ես այլ ես ո՛չ մի բանի վերայ քեզ հետ կարիք չ'ունիմ խօսելու: (դուրս է պրծնում):

ԲՕԲ. Քո՛յր:

ԱԼՄԱ: Այնուամենայնիւ, ինչ որ էլ լինի, ես դիմակահանդէս պիտի գնամ: Հարցրու մօրս, եթէ ուզում ես:

ԲՕԲ. Մօ՛րդ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ինչո՛ւ խեղճ երեխիս թոյլ չը տալ այդ չնչին գուարճութիւնը ստանալու:

ԲՕԲ. (ընկճուած): Ահա՛, թէ մենք մինչև ո՞ր աստիճան ստորացել ենք:

ՄԻԽԱՅԼՍԿԻ: (նստելով քաղկաթոռի վերայ եւ հեղնորէն): Այո՛, ահա՛, թէ ու՛ր ենք հասել:

ԲՕԲ. Ախ՛, դու դարձելի. կորի՛ր այստեղից: (Միխայլսկին տեղից չէ շարժում: Բօքերտը խլում է քաղկաթոռը): Կորի՛ր այստեղից, ասում եմ քեզ: Դու՛րս, դու՛րս այստեղից երկուսդ էլ:

ՄԻԽԱՅԼՍԿԻ: (ընկնելով նորա վերայ): Չէ, արդէն բաւական է:

ԲՕԲ. (ընկնելով քաղկաթոռը): Եւ դու էլ համար-

ձակուում էս սպառնալ ինձ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (այս ու այն կողմը՝ ընկնելով նոցա մէջ:) Ախ՛, Տէր Աստուած, դու մեր բազկաթոռն էլ կը ջարդես:

ԲՕԲ. Երևի նա շատ թանգ է, որովհետև տիրոջ տանիցն է:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Ի հարկ է:

ԲՕԲ. Զեր ամենասիրելի ս. Կուրտիցն է, այնպէս չէ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: Է՛հ. այն, այն:

ԲՕԲ. (վայրենի ծիծաղով:) Ահա՛ նա ձեզ: (շարտում է աթոռը յատակի վերայ, որը կտրտվում է, կտորները ձգում է ոտների տակ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (լայով:) Ախ՛, բազկաթոռ՛ս, բազկաթոռ՛ս: (ծունկ չոքած հաւարում է քաղկաթոռի կտորտանքները. տանում է դէպի ձախ, յետոյ նստում աթոռի վերայ):

ԽԵՅՆԻԿԷ: Է՛հ... այս ին՛չ բան է, նա միանգամայն ձեռից դուրս է եկել: (ուզում է զնայ դէպի աջ):

ԲՕԲ. (ընկելով նորա մանապարհը:) Վերջապէս դու ին՛չ ես կամենում. կը վերադարձնես արդեօք անղկանդ ամօթի և խայտառակութեան գինը, թէ ոչ: Ասա՛. կամ «այո՛», կամ «ոչ»:

ԽԵՅՆԻԿԷ: Ես չեմ էլ մտածում:

ԲՕԲ. Ուրեմն, հայր, քեզ հետ այլ ևս գործ չունիմ: Նոյնպէս քեզ հետ մայր: Այնպէս ուրեմն, կը նշանակէ անպատուութեամբ և խայտառակութեամբ մարդիկ աշխարհ են գալիս:

Ուրեմն անպատուութիւնը բժի նման մարդու հետ ծնվում է: Ենտ լաւ, եթէ, իրաւի, ինձ հարկաւոր էր աշխարհ գալ կամ ծնուիլ, ուրեմն ինչո՞ւ ինձ չը թողիք, որ ես մնայի միւսնոյն ցեխի մէջ, որի մէջ ես ծնայ... և որի մէջ ես իմ բոլոր կեանքումը կը թաւալուէի, ինչպէս այդ ուզում են իմ պատուելի ծնողները:

Ա.Ի.Գ.ՈՒՍՍԱ: Մայր, դու լսում ես, ին՛չ է դառել քո սիրելի զաւակը:

ԲՕԲ. Ո՛չ, մայրիկ, մի լսիր: (ծունկ է չոքում նորա առաջ:) Ես ոչինչ մի խօսք չեմ ասել... և եթէ ասած էլ լինեմ, գուցէ նորանից լինի, որ ես գլուխս կորցրած էի: Ինձ թվում է, որ այսօր ես ընդ միշտ բաժանուեցայ մարգավայել կեանքից և կորովի մտքից: Մայր իմ, խղճա՛ վերաս, խնդրեմ: Դեռ ևս գիտեմ, որ կարող ես փրկել թէ ինձ և թէ քեզ: Գնանք միասին, ուր ես գնալու եմ:

ԽԵՅՆ.-ՄԱՅՐ: (հեծկտալով:) Գիւհահար. չը լինի թէ՛ մեր հայելին էլ ես ուզում փշրել:

ԲՕԲ. (շղկուած նայում է հայելու վերայ, յետոյ քարձրանալով:) Մենք զանազան լեզուներով ենք խօսում և իրար չենք հասկանում:

ՄԻԻԱՅԼԱԿԻ: (ամբողջ ժամանակ ցած խօսելով ԽԵՅՆԻԿԷի հետ, քննում է ԲՕԲԵՐՏԻ ուսից:) Է՛հ, վերջապէս բաւական է, որ դու այստեղ երկպառակութիւններ ես հանում: Այժմ հեռացիր, կորի՛ր այստեղից:

ԲՕԲ. (յետ հրելով նորան:) Կորէր: (նայում է ձերերի եւ իւր քոյրերի վերայ, որոնք շարացած ձայներով շրջապատել են նորան: Բօքերտը ըստ ճրատեան ծիծաղում է:) Ախ, այն, ինչ արտաքսում են այստեղից:

ՄԻԽԱՅԼՍԿԻ: (դուռը կրնկի վերայ ըսնալով:) Կորէր:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն XIII

ՆՈՅՆՔ Ե ՏՐԱՍ, (երեւում է դռան շէմքի վերայ:)

ՏՐԱՍ: (Միխայիլու ուր փայփայելով:) Ենորհակալ եմ ձեր սիրալիք ընդունելութիւնից:

ԲՕԲ. (տեսնելով Տրաստին, աղաղակում է եւ ձեռք պարզում է նորան, իբրեւ թէ պահպանութիւն է գտնում:) Ինչ ես ուզում դու այստեղ... (ժանր հոգոց հանելով, ձեռներով երեսը ծածկում է: Այլման Տրաստի երեսալուն պէս, ամուշելով, փախչում է: Միխայիլին եւ Ազուստան գաղտնի կերպով քաշվում են գնում խոհանոց: Տրաստը աչքերը յառած, նայում է նորանց վերայ:)

ՏՐԱՍ: Ուշքի եկ. ինչ է պատահել:

ԽԷՅՆԻԿԻ: (գլխարկը ձեռին:) Նա իրեն լաւ չը պահեց, Զերդ պայծառափայլութիւն: Սկզբում նա խելքին զօռ էր տալիս մեզ Հնդկաստան քաշ տալու, իսկ չետոյ էլ իւր այդ խելքով փչում է, որ մենք չը համարձակենք փող առնել: Ես էլ հէնց այս րոպէիս գնում եմ

Միլիոնի զրատենեակը փողերը ստանալու երևակայեցէք, ամբողջ 40 հազար: Ուստի, պատիւ ունիմ, Զերդ Պայծառափայլութիւն. մնաք բարով: (գնում է:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն XIV

ՏՐԱՍ: Այդպէս, այդպէս. այն, ես այժմ հասկանում եմ: (ձեռք դնում է Բօքերտի ուսի վերայ:) Կարելի է Միլիոնը այստեղ էր:

ԲՕԲ. Միլիոն: Ահա ո՞վ է ինչ հարկաւոր այժմս: ՏՐԱՍ: Դու ինչ ես ուզում անել:

ԲՕԲ. Նա ինչանից հաշիւ է պահանջում և նա կրստանայ: (շտապում է դէպի խորը եւ տաք—տաք պայուսակը քրքրում է:)

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: (լալով:) Փառք տուէք Աստուծուն, որ դուք ընտանիք չ'ունիք... Ախ, Աստուած, ինչպիսի ապերախտ որդիք են լինում աշխարհիս երեսին:

ՏՐԱՍ: (ինքն իրեն:) Մայրական բերանիցը լիմարութիւններ է լսվում... Ամաչիք, Տրաստ, այդ լաւ բան չէ:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Միթէ ես ճշմարիտ չեմ:

ՏՐԱՍ: (երկու ձեռով ընկնում է նորա ձեռք:) Մայրը միշտ ճշմարիտ է: Նա շատ է տանջուել ու սիրել ճշմարտասէր լինելու համար:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: Բայց, Զերդ Պայծառափայլութիւն, ինչ, մի հասարակ կնոջ, ձեռ էք տալիս:

ՏՐԱՍ: Ես սաստիկ մեղաւոր եմ մայրերի առաջ

և պէտք է արժանանամ նորանց թողութեանը... Նա մանաւանդ իմ մօր առաջ: Աւելի վատթար որդիներ էլ են լինում, քան թէ ձեր որդին: (Րօբերտը որոնում է պապկան թղթերի հետ միասին եւ դնում է նորան մ'ի կողմ: շարունակում է իւր որոնողութիւնը. որոնում է ատրճանակը եւ զննում է նորան:)

ՏՐԱՍՏ: (մ'ի կողմէ) Ախ', ատրճանակ... ահա, թէ ինչպէս է նա ուզում հաշիւ ներկայացնել:

ՐՕԲ. (տեսնում է, որ իրեն հետեւում են, ատրճանակը պահում է գրպանում, վերցնում է իւր պապկան եւ դուրս է գալիս քեմի առաջ:) Ես պատրաստ եմ:

ՏՐԱՍՏ: Ես ճանապարհ կը զնեմ քեզ:

ՐՕԲ. Դ՛հա:

ՏՐԱՍՏ: Մթթէ այդ բանին ես իրաւունք չ'ունիմ:

ՐՕԲ. (տատանուելով:) Լաւ, զնանք:

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: (մեղմաբար արտասուելով:) ԲՕբերտ:

ՐՕԲ. (աշխատում է մնչել իւր յուզմունքը:) Ես... կը գամ... էլի... մնաս բարով ասելու, մայր իմ: Այժմ ինչ հարկաւոր է վերջացնել աւելի կարևոր գործեր: (զնում է դռան մօտ:)

ԽԷՅՆ.-ՄԱՅՐ: (ծեռները իրար խփելով ու կտորտելով զնում է Տրաստի մօտ:) Պարօն Կուրտը և նա... Է. շատ հաւանական է, որ մի դժբախտութիւն պիտի լինի:

ՏՐԱՍՏ: (կիսածայն նորան:) Հանգա՛րտ, հան-

դա՛րտ... դէհ, մենք զնանք:

ՐՕԲ. (ընկնում է մօրը սաստիկ յուզուած եւ ընդհատող փաղաքշանքով:) Է՛հ, իսկ եթէ մենք... մայր իմ... այլ ևս չը... (ընկելով Տրաստին:) Լաւ, զնանք:

Վ ա ը ա գ ո յ ը :

Վերջ III Գործողութեան:

ՉՈՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԵՆ ԳԵՎԱՐԱՑԻՆ

Տ Ե Ս Ա Ր Ա Ն I

ՏՐԱՍ ՐՕԲԵՐՏ (պապկէն կոնստակին
ըրած) և ՎԻԼՀԵԼՄ:

ՎԻԼՀԵԼՄ: (ցած ձայնով Տրաստին): Ինձ խիստ
արգելուած է պարոն Խէյնիկէին ընդունելը:
ՏՐԱՍ: Ինձ ևս:

ՎԻԼՀԵԼՄ: Խնդրեմ, ինչպէս կարելի է: Դ՛նք ձեր
բանն ուրիշ է:

ՏՐԱՍ: Խորն զգացուած եմ, բայց պ. Խէյնիկէն
ինձ հետ եկաւ: Պատասխանատուութիւնը ինձ
վերայ եմ առնում: Մենք այստեղ կը սպա-
սենք պ. Միւլինգին:

ՎԻԼՀԵԼՄ: Բայց...

ՏՐԱՍ: Դուք որն էք աւելի լաւ համարում, թըղ-
թաղրած, թէ ոսկեգրամներ: (քսակում փա-
թաթում է): Միթէ ոչ ոք չ'կայ տանը:

ՎԻԼՀԵԼՄ: Ինքը, պ. Միւլինգը գնաց գործարանը.
տիկինը հիւանդ է, նորա զուգըր ցաւում է,

Իսկ օրիորդը կրտսեր աղալի հետ քաղաք
գնացին:

ՏՐԱՍ: Միասին:

ՎԻԼՀԵԼՄ: Օ՛, նորանք երբէք միասին դուրս չէին
գնայ: Կրտսեր աղան ուզում էր մերժել հիւ-
րերին, որոնք այսօր ճաշի էին հրաւիրուած...

ՏՐԱՍ: (նորան փող տալով): Լաւ, գնացէք:

ՎԻԼՀԵԼՄ: Ինչ էք հրամայում:

ՏՐԱՍ: Գնացէք: (Վիլհէլմը գլուխ տալով գնում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն II

ՏՐԱՍ և ՐՕԲԵՐՏ:

ՏՐԱՍ: Ե՛կ այստեղ, տղաս!

ՐՕԲ. Ինչ ես կամենում:

ՏՐԱՍ: Ինչ եմ կամենում: Դու շատ լաւ գիտես,
որ երբէք ոչինչ չեմ ուզում: Ես միշտ լանձ-
նուած եմ բաղդի բերման: Բայց այստեղ
խնդիրը նորանումն է, թէ դու ինչ ես ու-
զում այս տան մէջ:

ՐՕԲ. Կամենում եմ հաշիւ տալ:

ՏՐԱՍ: Ասենք, ես այդ գիտեմ, միայն մի բան
չեմ հասկանում. քանի որ դու այլ ևս մտա-
գիր չես այդ ձեռը տալու, որը տալիս են
այնպիսի դէպքերում ամեն մի պատուաւոր
մշակին. ուրեմն չեմ հասկանում, ինչո՞ւ դու
անմիջապէս չես ուղարկում հաշիւը նորա
գրասենեակը, որ վերջանայ գնայ:

ՐՕԲ. Դ՛ հարկ է, դա ամենից լաւ կը լինէր:

ՏՐԱՍՏ: Իմ թանկագին, թող տուր ինձ միանգամ
էլ խօսել քեզ հետ իբրև սրտակցի:

ԲՕԲ. Ասա՛, ասա՛:

ՏՐԱՍՏ: Դու ցնորքների ետևիցն ես ընկնում:

ԲՕԲ. Միթէ: Ինչպէս:

ՏՐԱՍՏ: Քո անձնական պատիւը ոչ ոք չ'ըզափեց:

ԲՕԲ. Յիրա՛ն?!

ՏՐԱՍՏ: Որովհետև աշխարհիս երեսին այդ ոչ ոք
չի կարող անել:

ԲՕԲ. Այդպէս, այդպէս:

ՏՐԱՍՏ: Այն ինչ որ դու պատիւ ես անուանում. դա
չափաւորութիւն է ամօթխածութեան, արդա-
րամտութեան և վստահութեան զգացմունքնե-
րի: Այդ ամենը՝ ինչ որ դու փայփայել,
դաստիարակել ես քո մէջ բարոյական կեան-
քովդ և խիստ պարտաճանաչութեամբ՝ չի կա-
րող պատահել, որ մէկն իւր տղայական
վարմունքով կարողանայ խլել, ինչպէս քո
սրտի բարութիւնն ու սեփական առողջ դա-
տողութիւնը: Կամ այդ պատիւ ասած բանը
քո «Եսի» մասն է, կամ թէ չէ նա բոլորովին
զոյւթիւն չ'ունի: Դու ո՛չ մի կապ չ'ունիս
նորանց հետ, որոնց պատուին կարող է զիպ-
չել ամեն մի յայտնի վարսավիր, կամ կօշկա-
կար, որն անզուշուրթեամբ ձգում է իւր
ձեռնոցը և մենամարտութեան է հրաւի-
րում... Այն պատիւն է լաւ, որը ինչպէս
հայելի է լիմարների, ինչպէս խաղալիք թա-
փառաշրջիկների և ինչպէս անուշահոտ իւղ

պճնասերների համար:

ԲՕԲ. Դու խօսում ես իբրև այնպիսի մի անձ, որը
դժբաղաւթիւնը փոխում է առաքինութեան:

ՏՐԱՍՏ: Այդ շատ կարելի է, որովհետև առաքի-
նութիւնը, անբաղաւթիւնիցն է առաջ գալիս:

ԲՕԲ. Իսկ իմ ընտանիքը...

ՏՐԱՍՏ: Իսկ ես կարծում էի, թէ դու այլ ևս չ'ու-
նիս ընտանիք: (Տօբերտը յուզմունքից ծած-
կում է երեսը ձեռներով): Ես շատ լաւ եմ
հասկանում քեզ, բայց դա ոչինչ է, եթէ ոչ
նեարդերի ցնցումն. սրանց, կարծես, հէնց նոր է
կտրել բժիշկը: Քեզ մի խաբիր:

ԲՕԲ. Դու ելբէք քոյր չես ունեցել:

ՏՐԱՍՏ: Ասա՛, խնդրեմ՛, միթէ ես, իբրև ազնու-
ական արիստօկրատ, պարտական եմ քեզ վեհ-
անձնութիւն սովորեցնել դէպի խեղճերը,
աղքատները և այլն... Սիրելիս, մի՛ արհա-
մարհիր սրտակիցներիդ և ծնօղներիդ. մի՛ ա-
սիր, թէ նոքա ինձանից և քեզանից վատ են:
Միայն թէ նոքա այլ վիճակի մէջ են՝ ուրիշ
ոչինչ... Նորանց միջ կայ այնպիսի զգացմուն-
քներ, որոնք բոլորովին օտարոտի են քեզ հա-
մար: Նորանք կեանքի վերայ նայում են այն-
պիսի հայեացքով, որ բոլորովին քեզ անհաս-
կանալի է: Ուստի՝ դորա համար նորանց մե-
ղադրել քո կողմից լիմարութիւն կը լինի: Եւ
վերջապէս, իմ բարեկամ, իմանաս, որ դու քո
ընտանիքի անդամների հետ մղած պատերազ-
մում սկզբից մինչև վերջն անիրաւացի ես:

ԲՕԲ. Տրաս'տ, և այդ բանը դո՞ւ ես ասում:

ՏԲԱՍՏ: Այո՛, ես այդ թող տուի ինձ... Դու եկել ես ուրիշ երկիրներից, որտեղ կարգին մարդկանց մէջ ինն անգամ դու փոխել ես քո բնակարանը և դու այժմս պահանջում ես ձերոնցից, որ նոքա մի օրուայ մէջ փոխեն իրենց մօրթը, որի մէջ նոքա մեծացել են: Այդ շատ կարճամտութիւն է քո կողմից, զաւակս, իսկ քրոջդ պատիւը Միւլինգը իսկապէս վերադարձրել է: Հէնց այդ պատիւը, որ նորան հարկաւոր էր պերճ ապրելու համար. որովհետև ամեն բան աշխարհումս ունի իւր համապատասխան փոխարինադինը: Մի ազնուականի պատիւ գնահատվում է, կարելի է արիւնով, ես կարելի եմ ասում, իսկ մի դունապահի պատիւը կարելի է գնել փոքրիկ գումարով, կամ մի քանի կոպէկով: (Բօրնրտը քարկուլթեան նշաններ է անում:*) Ինձ չ'ուտես, խնդրեմ, սպասիր, ես դեռ ևս չեմ վերջացրել խօսքս: Ուղիղ, ինչ միտք ունի, ասա խնդրեմ, այս դէպքում մի օրինորդի պատիւը, քան այն, որպէս զի նա իւր ապագայ մարդու համար յայտնի օժիտ տանի հանգիստ խղճով, մաքուր սրտով ու անկեղծ տրամադրութեան տակ: Չէ որ այդ ամենը հարկաւոր է մարդու գնալու դէպքում: Ապո՛, հարցրո՛ւ, խնդրեմ, այն դասակարգի մարդկանց. երբ էր քոյրդ աւելի նախանձելի հարսնացու. այժմ, թէ առաջ, երբ նա Միւլինգից ստացաւ մի յայտ-

նի և խօշոր գումար:

ԲՕԲ. Տրաստ, դու կոպիտ ու դաժան ես:

ՏԱՍՏ: Կոպիտ եմ, ինչպէս բնութիւնը, խիստ ու դաժան, ինչպէս ճշմարտութիւնը: Միայն ծոյլերն ու վախկոտներն են յօրինում իրենց համար հովուական a tout prix. *) Բայց չէ որ դու նորանց հետ ոչ մի կապ չ'ունիս: Ուստի, տուր ինձ ձեռք, թափ տուր ոտերիցդ հայրենիքի փոշին և երբէք այդ բոլորի վերայ երեսդ չը դարձնես նայելու:

ԲՕԲ. Բայց նախ ես պիտի անձնական բաւարարութիւն ստանամ:

ՏԲԱՍՏ: Այդպէս ուրեմն, կը նշանակէ, դու կամենում ես ինչպէս էլ որ լինի՝ նորա հետ մենամարտել:

ԲՕԲ. Թէև ես կը հրաժարուէի՛ այդ մտքից, բայց այժմ... այո՛, կամենում եմ:

ՏԲԱՍՏ: Ես կարծում եմ, պէտք չէ... այդպէս հնապաշտ լինել:

ԲՕԲ. Հնապաշտ. կարելի է: Կարելի է, այո՛, հէնց նորա համար, որ ես ծնուել եմ աղքատ, ստրուկ... իմ հասկացողութիւնները պատուի մասին շատ թուուցիկ և թեթև են. ես չեմ կարող բարձրանալ ու հասնել քո հայեացքների բարձրութեանը: Հանգիստ թո՛ղ ինձ: Թո՛ղ ես ոչնչանամ այս դէպքում իմ սահ-

*) Ծան. a tout prix—ամեն բանի ձեռնահաս փոխարենը ստանալու: Զիջանդ:

մանափակ հայեացքների մէջ:

ՏՐԱՍՏ: Բայց եթէ նա հրաժարուի:

ԲՕԲ. Ես նորան կ'ստիպեմ:

ՏՐԱՍՏ: Օհօ... (ինքն իրեն): Ահա, թէ ինչու հա-
մար է ատրճանակը... (նորան): Ելի մի բան,
զաւակս... եթէ դու կամենում ես ինչպէս էլ
լինի, որ պ. Կուրտը քո կաշին ծակէ, ուստի,
դու նորանից հրաժարուելու ամեն մի պատ-
ճառը պէտք է խլես:

ԲՕԲ. Ախ', Աստուած իմ: Դու կատարելապէս իրա-
ւացի ես:

ՏՐԱՍՏ: (հանելով քսակը): Դու ամաչում ես, ինչ է:

ԲՕԲ. Ո՛չ, առանց այդ էլ դու ինձ համար շատ
բան ես արել:

ՏՐԱՍՏ: (տալով նորան չէկը): Ահա՛ քեզ:

ԲՕԲ. Բայց եթէ ես երբէք չ'կարողացայ քեզ այդ
հատուցանել:

ՏՐԱՍՏ: Ե՛հ, ես այն ժամանակ սառուցի վերայ կը
գրեմ, ինչպէս սովորաբար գործ են դնում
բարեկամները միմեանց մէջ: (փայտիայրում է
նորա գլուխը): Բայց ես կարծում եմ, որ
գործը մինչև այդ տեղ չի հասնի: Հա՛, զա-
ւակս, էլի մի բան, որի մասին դու բոլորո-
վին մոռացել ես:

ԲՕԲ. Ինչ:

ՏՐԱՍՏ: Լէօնորան:

ԲՕԲ. (ցնցունելով): Մի խօսի նորա մասին:

ՏՐԱՍՏ: Դու նորան սիրում ես:

ԲՕԲ. Ես այդ հարցին ոչինչ չեմ պատասխանիլ:

ՏՐԱՍՏ: Երևի նա պիտի տեսնի քս անձի մէջ իւր
եզրօք սպանողին:

ԲՕԲ. Աւելի լաւ կը լինէր, եթէ նա տեսնէր ինձ,
իբրև մի ապիկարի ու խարդախի:

ՏՐԱՍՏ: (ուղղուելով): Իսկ միթէ ես էլ այդպիսի
մի ապիկարի և անամօթի մէկը չեմ: Միթէ
դու ինձ, իբրև մի քաղաքավարի մարդ չես
ճանաչել: Միթէ ես ևս այժմ գլուխս բարձր
չեմ պահում, ինչպէս ուրիշները: Ամաչիր:

ԲՕԲ. (լռութիւնից յետոյ): Տրստ, ներքը ինձ,
խնդրեմ:

ՏՐԱՍՏ: Ներքը... Յիմարութիւն ես անում: Ես
քեզ սիրում եմ, ուրիշ ոչինչ:

ԲՕԲ. Տրստ, ես... չը պիտի մենամարտեմ:

ՏՐԱՍՏ: Ազնիւ խօսք:

ԲՕԲ. Ազնիւ՛ւ:

ՏՐԱՍՏ: Ուրեմն գնանք:

ԲՕԲ. Ու՛ր:

ՏՐԱՍՏ: Ինչ գիտեմ... ուր ստներս կը տանի:

ԲՕԲ. Ներքը, ես չեմ կարող զրկել ինձ մի գուար-
ճութիւնից. այն է՛ այդ բարերարի երեսին
չպրտել իբ տուած փողը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն III

ՆՈՅՆՔ և ՎԻՂԷԼՄ:

ՎԻՂԷԼՄ: Ազան այս լուսնի անցու գնաց լուր
18

գրասենեակը:

ՏՐԱՍ: (մի կողմը): Կուրտը չը կայ. հանգամանքները շատ լաւ են նպաստում:

ԲՕԲ. (վերցնելով պապկան): Ես գնում եմ այն տեղ:

ՏՐԱՍ: Լա՛ւ, բայց սպասիր ինձ այն տեղ:

ԲՕԲ. Դու ելի ինձ գործ ունես:

ՏՐԱՍ: Դա արգէն իմ գործն է: Ե՛կ այստեղ. (ցած ձայնով): նախ քան զնալդ, այդ ատրճանակը տո՛ւր ինձ:

ԲՕԲ. (վախեցած): Ին՞չպէս: Մի՞թէ դու գիտես:

ՏՐԱՍ: Նա շատ պարզ երևում է գրպանումդ:

ԲՕԲ. Ես խնդրում եմ, որ թողնես մնայ ինձ մօտ ատրճանակը. կամ դու երեւի չես հաւատում ինձ:

ՏՐԱՍ: Ես վախենում եմ, որ քո մէջ նստած լինի իմ Պէպէն:

ԲՕԲ. Մի՞թէ, իրօք, մեզանում անազնիւների նոյն իսկ ազնիւ խօսքը նշանակուած իւրն չ'ունի:

ՏՐԱՍ: Լա՛ւ, թո՛ղ մնայ ատրճանակը քեզ մօտ: (Բօքերտը եւ Վիլյէլմը դուրս են գնում: Տրաստը շարժումներով նշաններ է անում Բօքերտին վերադարձնել, յետոյ կանգ է առնում): Հաւանական է, որ դա անզգուշութիւն էր: Ե՛հ, ոչինչ, եթէ այն լիմար երեխան վերագառնայ, ես նորան կը բռնեմ եւ կը պահեմ, որքան հարկաւոր է: Բայց այժմ բանը բոլորովին դորանում չէ, այլ նորանում, որ եթէ,

լիրաւի, այդ օրիորդն այնպէս է, ինչպէս ես նորան ճանաչեցի:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն IV

ՏՐԱՍ: Ե ԼԷՕՆՈՐԱ: (ձմեռուայ շորերով, կանացի գլխարկով, մուշտակով, օղիկով (MYΦTA) ներս է մտնում՝ աջ կողմից:)

ՏՐԱՍ: Ա՛... հենց այդ անուանում եմ յաջողութիւն:

ԼԷՕՆՈՐԱ: (ձեռ տալով նորան, սարսուելով): Կո՛մս, գիտէ՞ք այս ըոպէին սրտեղ էի: Զեզ մօտ: (շորերը հանում է): Դուք երեւի սարսափում էք իմ վստահութիւնից... սակայն միայն ձեզնից կարող էի իմանալ, թէ այստեղ ին՞չ է կատարվում: Երկիւղ էի կրում... կասկածում էի, թէ եղբայրս մտադիր է այս դեռահաս օրիորդին դժբաղդացնել... գիտէ՞ այդ մասին ձեր բարեկամը:

ՏՐԱՍ: Օ՛, եթէ միայն այդ լինէր:

ԼԷՕՆՈՐԱ: Ապա էլի ին՞չ:

ՏՐԱՍ: Ես պիտի խոստովանեմ, խօսք չեմ գրտնի, որպէս զի երիտասարդ օրիորդին...

ԼԷՕՆՈՐԱ: Ասացէ՛ք, խնդրեմ, բոլորը:

ՏՐԱՍ: Լա՛ւ, ուրեմն լսեցէ՛ք: Զեր ծնօղները կարեւոր համարեցին ստիպել այն խեղճ, աղքատ մարդկանց մոռանալ իրենց ամօթն ու խայտառակութիւնը: Եւ նոքա մօտեցան նորանց հենց այն թողլ կողմից, որտեղից աւելի հեշտ էր.

այն է՝ որ նորա չքաւոր էին և փողի կարօտութիւն ունէին:

ԼԷՕՆՕՐԱ: Ուղի՞ղ եմ հասկացած, արդեօք: Եղբայրս դրամով ազատուել է այդ աղջըկանից... (Տրատ հաստատապէս գլխով է անում:)
Աստուած իմ:

ՏՐԱՍ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ես հեռու եմ պահում ինձ ամեն մի քննադատութիւնից: Բացի դորանից, այդ ամենն ամենասովորական բան է, որով առհասարակ խզվում են նման օրինակ կապերը: Բայց ես շատ եմ վախենում մեր բարեկամի մասին:

ԼԷՕՆՕՐԱ: (Երեսը ծածկում է ձեռներով:)
Ինչով և երբ կարող եմ ես այդ ուղղել:

ՏՐԱՍ: Մի՞թէ դուք այդ ձեր պարտականութիւնն էք համարում:

ԼԷՕՆՕՐԱ: Անկասկած, ես իմ բոլոր էութեամբ մեր ընտանիքի զգուելի սովորութիւններն ատում եմ: Վճարել... ամեն բանի համար վճարել... պատուի, իրաւունքի, սիրոյ... ամեն ինչ փողով գնել. այդ մենք կարող ենք... որովհետեւ հարուստ ենք: (ընկնում է ըստ կաթողի վերայ, յետոյ վեր է թռչում:)
Ներեցէք, ես չեմ կարողանում է ինձ զսպել. ծնօղների մասին խօսում եմ, իբրև օտարների մասին, կարծէք թէ նորա խորթ լինէին ինձ:

ՏՐԱՍ: Կարելի է նորա ձեզ համար աւելի խորթ են, քան թէ կարծում էք:

ԼԷՕՆՕՐԱ: (հիացած:)
Ա՛, երանի թէ այդ ճիշտ

լինէր: (Տրատը ականջ է դնում:)
Այդ ինչ է: ՏՐԱՍ: Ձեր եղբօր ձայնը չէ:

ԼԷՕՆՕՐԱ: (դռան մօտ:)
Այո՛, նա է, իւր ընկերների հետ:

ՏՐԱՍ: (ինքն իրեն:)
Ես ՚ի զուր տեղը թողի նորա մօտ ատրճանակը: (ըարձրածայն վերցնելով գլխարկը:)
Նա գրասենեակն է գնալու:

ԼԷՕՆՕՐԱ: Ո՛չ, նորա այս կողմն են գալիս:

ՏՐԱՍ: (գլխարկը յետև դնելով:)
Շատ գեղեցիկ, ես նորանց այստեղ կը սպասեմ: Պատուելի օրիորդ, էլի մի խնդիր. իմ բարեկամի հետ միասին այսօր հեռանալու ենք այս տանից. վաղը մեկնելու ենք քաղաքից, իսկ քիչ ժամանակից յետոյ, կարելի է գնանք դէպի Եւրոպա:

ԼԷՕՆՕՐԱ: (ինքն իրեն:)
Աստուած իմ:

ՏՐԱՍ: Բայց այսօր ես կամենում էի խանգարել Բօբերտին ձեր եղբօր հետ տեսնելու: Եթէ մի բան ինձ խանգարէ խառնուելու, այն ժամանակ, խնդրեմ, դուք ևս օգնէք ինձ:

ԼԷՕՆՕՐԱ: (տաք կերպով գլուխը խոնարհում է:)
Դռան ետեւից ձայներ: Ես գնում է դէպի ձախ, շուտ է գալիս:)
Կո՛մս, ես ինչ պիտի անեմ:

ՏՐԱՍ: Ինքդ քեզ հաւատարիմ մնաս:

ԼԷՕՆՕՐԱ: Պատրաստ եմ: (դուրս է գնում:)

ՏՐԱՍ: Է՛հ, այժմ սիրելիս...

ՏԵՍԱՐԱՆ V

ՏՐԱՍՏ, ԲՐԱՆԳԻՏ, ՇՏԵՆԳԵԼ և ԿՈՒՐՏ:

ԿՈՒՐՏ: (զարմացմամբ): Կոմս:

ԲՐԱՆԳԻՏ: (ցած ձայնով): Լաւ է, որ մենք էլ նորա հետ ենք:

ՏՐԱՍՏ: Պարոն Միւլինգ, խնդրեմ մի քանի ըսպէ նուիրեցէք ինձ ձեր ժամանակից:

ԿՈՒՐՏ: Ժամանակ չ'ունիմ, Կոմս. հայրս ինձ սպասում է:

ՏՐԱՍՏ: (մ'ի կողմ): Օհօ... (ըստ ձր ձայնով): Այստեղ գործը կայանում է մի խնդրի մէջ:

ԿՈՒՐՏ: Կոմս, ես բարեկամներիցս զազտնիք պահել չը գիտեմ: (ստոտմ' են):

ՏՐԱՍՏ: Իմ ամենալաւ բարեկամներից մէկը սաստիկ անպատուած է ձեզնից: Բայց, թէ իմ խորհրդով և թէ այն սիրոյ համար, որ նա ունի դէպի ձեզ, հրաժարուեց ձեզանից բաւարարութիւն պահանջելու:

ԿՈՒՐՏ: Դուք սխալվում էք, Կոմս, պ. Խէյնիկէն արդէն ստացել է այդ բաւարարութիւնը:

ԲՐԱՆԳԻՏ: Ուրիշ բաւարարութիւն տալ նորան մենք չէինք կարող:

ԲՐԱՆԳԻՏ: (նայում է նորանց ոտից մ'ինչեւ զլուխ): Թողնենք այդ հարցը, պ. Միւլինգ: Իմ բարեկամը, ինչպէս ես ենթադրում եմ, այժմ հորդ մօտ է գտանվում, որովհետեւ նա պըն-

դել էր, որպէս զի նորան թոյլ տրուի անձամբ հաշիւ տալու:

ԿՈՒՐՏ: Եթէ այդ նորան բաւարարութիւն է տալիս:

ՏՐԱՍՏ: Այս դէպքում նա ձեզ հետ շատ էր ուզում տեսնուել:

ԿՈՒՐՏ: Նա այդ կարող է ունենալ, Կոմս:

ՏՐԱՍՏ: Մի ժամից լետոյ բարեկամս թողնում է ձեր գործարանը: Ի նկատի ունենալով նորա զրգուած վիճակը, որի մէջ նա գտնվում է, շատ ցանկալի կը լինէր խուսափել մի առ ժամանակ իրար տեսնելուց:

ԲՐԱՆԳԻՏ: Կոմս, երկչոտութեան զրօշ բարձրացնելը երբէք արձագանք չի գտնիլ գերմանական սրտի մէջ:

ՏՐԱՍՏ: (հանդարտ կերպով): Պարոն սպայ, ես ինձ թոյլ չը տուի դիմել ձեզ: Պ. Միւլինգ, լաւ մտածէք. այդ ասում է ձեզ մի այնպիսի մարդ, որին այս դէպքում պիտի թանգ գնահատէք: Ոչ թէ, 'ի հարկէ, համակրութիւնից, ինչպէս այդ ինքս պարզապէս ասում եմ: Ես ինձ թոյլ եմ տալիս այդ պատճառաւ դիմել ձեզ բարեկամաբար. այդ պարոնների ազդեցութեան մի ենթարկուէք:

ՇՏԵՆԳԵԼ: Ո՛չ, ո՛չ, մեզ մի ենթարկուի:

ԲՐԱՆԳԻՏ: Տուէք ազատութիւն այն զգացմունքներին, որոնք գաղտնի կերպով ձեզ ասում են. դուք չը պիտի ընդգիմանաք ստութեան գիտակցութեանը, որը դուք ունեցել էք դէպի ձեր ընկե-

րը, ձեր մօտ բարեկամը: Գուք լուճւմ էք.
այդպէս չէ: Գուք կը կատարէք իմ խնդիրը:
ԲԲԱՆԳՏ: (ցած ձայնով Կուրտի ետեւից:) Դէ՛հ,
նորան մէկ լաւ:

ԿՈՒՐՏ: Ես չ'ուզում եմ, Կոմս, որովհետեւ խօսք չեմ
գտնում զարմացքս ձեզ յայտնելու ձեր օտա-
րօտի ցաւակցութիւնների վերաբերմամբ: (ըն-
տրը վեր են կենում:)

ԲԲԱՆԳՏ: (Կուրտի ետեւից ցած ձայնով:) Շատ
լաւ արեցիր, շատ լաւ:

ԿՈՒՐՏ: Ես թոյլ եմ տալիս ինձ ձեզ հարցնելու.
ինչ բան է ձեզ իրաւունք տալիս իմ տան
մէջ ինձանից պահանջ ունենալու:

ՏԲԱՍՏ: Այն պահանջը, որ դուք պահանջի ետեւն էք
ձգում:

ԿՈՒՐՏ: Միթէ դուք կարող էք գորանում կասկա-
ծել, Կոմս:

ԲԲԱՆԳՏ: (ցած ձայնով:) Մի լաւ, մի լաւ...

ՏԲԱՍՏ: (մի կողմն դառնալով:) Ուրեմն հարկաւոր
է 'գործ դնել անշո՛ւշտ աւելի արմատական,
խիստ միջոցներ... (ըստ ձր:) Այո՛, կասկածում
էի: Դեռ ևս մի քիչ յոյս ունէի, թէ գործ
ունիմ պատուի տէր մարդու հետ... ներողու-
թիւն, սխալուել եմ:

ԿՈՒՐՏ: Կոմս, այդ...

ՏԲԱՍՏ: Անպատուութիւն է. միթէ: Այո՛:

ԿՈՒՐՏ: Որի համար դուք ինձ բաւարարութիւն
պիտի տաք:

ՏԲԱՍՏ: Ես ուրիշ ոչինչ աւելի լաւ բան չեմ ցան-

կանում:

ԿՈՒՐՏ: Գուք վաղը կը լսէք իմ մասին:

ՏԲԱՍՏ: Վաղը: Միթէ ձերօնք կարող են քնել այդ-
պիսի մի անպատուութիւնից լետոյ: Իսկ ես
սովորութիւն ունիմ այդպիսի անբարոյական,
կեղտոտ բժերն անմիջապէս լուանալ:

ԿՈՒՐՏ: (կմ'կմալով:) Եթէ կամենաք, պատրաստ եմ:

ՏԲԱՍՏ: (մի կողմն դառնալով:) Փառք Աստուծոյ:
(ըստ ձր:) Այսպէս, ուրեմն գնանք:

ԲԲԱՆԳՏ: (մէջ մտնելով:) Սիրելի Կուրտ, ամեն
բանի մէջ աստիճանաբար վարուելը. դու իբրև
ուսոխ, այլ ևս ոչինչ բանի վերայ չես կարող
խօսել այս պարոնի հետ: (ըստ ձր ձայն:)
Նախ՝ որ պատուի օրէնսգրութեան գիրքը կամ

կօղէքսը պահանջում է, Կոմս, որ հակառա-
կօրդներն ունենան 24 ժամ ժամանակամիջոց,
որպիս զի իրենց գործերը կարգի բերեն: Մենք,
այսինքն ես եւ բարեկամս թերևս օգտուէինք
այդ իրաւունքից: Եթէ այժմ գանք օրէնքի
երկրորդ յօդուածին, մենք ստիպուած չէինք
լինի հրաժարուել ձեզանից բաւարարութիւն
պահանջելու հաճոյքից, որովհետեւ դուք, Մե-
ծապատիւ պարոն, մեզ չ'անպատուեցիք:

ՏԲԱՍՏ: Ա... ա...

ԲԲԱՆԳՏ: Դուք պատկանում էք այն մարդկանց
գասակարգին, որոնք մեզ անպատուել չեն
կարող:

ՏԲԱՍՏ: (ուրախ:) Այդպէս է, այդպէս է:

ԲՐԱՆԴՏ: Յիշեցէք, խնդրեմ, որ Կոմս Տրաստ Զարեհրզը 25-ին յունիսի 1864 թուին, ինչպէս տեղեկացայ նորա իսկական վկայաթղթերից, ստիպուած է եղել թղթախաղի պարտքի պատճառով թողնել իւր զինւորական ծառայութիւնը և հեռանալ այն զօրագնդից, որի մէջ նա ծառայելիս է եղել: Ուստի, (անհոգաբար գլուխ է տալիս:) Կոմս...

ՏՐԱՍՏ: (ըարձրածայն ծիծաղելով:) 'Ի սրտէ շնորհակալ եմ ձեզանից, պարոններ, այդ ձեր տուած դասի մասին: Ես դորան լիովին արժանի եմ, որովհետեւ մարդու ամենամեծ յանցանքն այդ նորա անկարգ, անկանոն և անհեռատես վարմունքն է: Եւ գլխաւոր բանն այն է, որ դորանից ես դուրս բերի հետեւալը. ինչքան էլ որ մարդս բարձր չը լինի ժամանակակից հասկացողութիւնից պատուի գաղափարի մասին, նա միշտ դարձեալ նորա ստրուկն է մնում, թէեւ մեր խօսքը միայն այն բանի մասին էր, որպէս զի ազատել վտանգից իւր անբաղդ բարեկամին: Պարոններ, ես ունիմ պատիւ, բայց ներողութիւն, ես պատիւ չ'ունիմ: Այս իմ մէջ պատիւ չէք գ'տնի... Այսպէս ուրեմն, ինձ մնում է միայն պարզ հաճութեամբ մնաք բարով ասել ձեզ, իսկ այդ ինձ համար աւելի հաճելի է: (գլուխ է տալիս ու ծիծաղելով դուրս գնում:)

ՏԵՍԱՐԱՆ V I

ՇՏՆՆԳԵՒ: Հ'ը... ահա, մենք էլի մեր պատուի հետ լիմար մնացինք:

ԲՐԱՆԴՏ: Ինչպէս: Մենք մեզ պահեցինք լիովին, իբրև լաւ ազնիւ մարդիկ:

ՇՏՆՆԳԵՒ: Բայց Բրանդա, սուրճը ո՞նց է, սուրճը:

ԲՐԱՆԴՏ: Հարկաւոր է վերջապէս քիչ էլ մեր պատիւը պահենք, ինքնաճանաչ լինենք, բարեկամս... Ես շատ ուրախ եմ, որ կարողացամ քեզ այդ ծառայութիւնն անել, սիրելի Կուրտ: Գուր, առանց ինձ, ինչ պիտի անէիր: Այսպէս, մինչև երեկոյ:

ԿՈՒՐՏ: Մթթէ դու կրկին վերադառնալու ես դէպի քաղաք:

ԲՐԱՆԴՏ: Այո՛:

ԿՈՒՐՏ: Ես ճանապարհ կը դնեմ:

ԲՐԱՆԴՏ: Օ՛, այդ փախուստի կերպարանք կը ստանայ:

ԿՈՒՐՏ: Գլխումդ այդ ինչ բաներ են պտույտ գալիս:

ԲՐԱՆԴՏ: Իսկ Կոմսը քթի տակից ո՞նց պիտի ծիծաղի: Այժմ քո պարտականութիւնն է նորա հետ հանդիպել:

ԿՈՒՐՏ: Ե՛՛հ, այդ բանը կարելի է ասել, որ այդպէս չէ:

ԲՐԱՆԴՏ: Այդ քո պարտականութիւնն է, ես քեզ

ասում եմ. եթէ դու չես ուզում երևալ, իբրև վախկոտ:

ՏԵՍԱՐԱՆ V•II

ՆՈՅՆՔ և ՄԻԻԼԻՆՔ (մազէ վերարկուով եւ գլխարկով) նորա ետեւից ՎԻԼՀԵԼՄ:

ՄԻԻԼԻՆՔ: (վերարկուն վայր ձգելով Վիլհելմի թեւի վերայ:) Այդ սրտեղից նորա խելքին փչեց շրջապատել ինձ գրասենեակում: Բարով ձեզ, պարոններ: Հրամայեցէք այնտեղ վեր առնել նորանից բոլոր գրքերը և հաշիւները ու ասացէք նորան, որ նա կորչի այստեղից... (Վիլհելմ՝ գնում է:) Կուրտ, դու ինչո՞ւ ես ինձանից թազ կենում. դու գիտես, որ մեր խօսակցութիւնները քեզ հետ դեռ ևս չեն վերջացել:

ԿՈՒՐՏ: (ցած ձայնով Բրանդտին եւ Շտենզելին:) Ըհ... այժմ իմ գլխին պատարագ կայ, ես կը ստանամ իմը: Ազատուեցէք:

ՇՏԵՆԳԵԼ: Պարոն Միլլինգ՝ մեր ժամանակը... դժբաղդաբար...

ՄԻԻԼԻՆՔ: Յ'տեսութիւն... պարոններ, չափազանց ափսոսում եմ... ց'տեսութիւն

ԲՐԱՆԴՏ: (ցած ձայնով Կուրտին:) Յետոյ մեզ կը պատմես, թէ ձեր պատահելն ինչպէս եղաւ:

ՏԵՍԱՐԱՆ V•III

ՄԻԻԼԻՆՔ և ԿՈՒՐՏ:

ՄԻԻԼԻՆՔ: Հ՛ր... ասենք այս անգամ ինձ յաջողուեց ամեն բան մի կերպով խաղաղ վերջացնել... Միայն Աստուած գիտէ, թէ ի՞նչպիսի զոհաբերութիւններով: Ես այս բոլորը կը գրեմ քո հաշուում: Բայց այժմ դառնանք այդ պատմութեան բարոյական կողմին:

ՏԵՍԱՐԱՆ IX

ՆՈՅՆՔ և ԱՄԱԼԻԱ (խորքից) յետոյ ԼԵՕՆՈՐԱ (ձախ կողմից):

ԿՈՒՐՏ: (ինքն իրեն:) Ահա մայրս էլ երևաց. լաւ տեսարան պիտի լինի:

ԱՄԱԼԻԱ: Օ՛, Կուրտ, Կուրտ:

ԿՈՒՐՏ: Այո՛, մայրիկ:

ԱՄԱԼԻԱ: (նստում է:) Որդեակ, դու ծնօղներիդ շատ վիշտ ես պատճառել: Ինչ աստիճանի կեղտոտ, վարմունք է: Ինչ աստիճանի ստորութիւն է մեզ համար, որ դու ստիպեցիր քո ծեր հօրը յարաբերութիւն ունենալ այդ կեղտոտի հետ: (մոնող Լեօնորային:) Իսկ քեզ ինչ է հարկաւոր այստեղ:

ԼԵՕՆՈՐԱ: Ես ձեզ ասելիք ունիմ:

ՄԻԻԼԻՆՔ: Այժմ մենք ժամանակ չ'ունինք: դեռ
գնահ դու քո սենեակը: **ՍՍՅՑ**

ԼԷՕՆՈՐԱ: Ո՛չ, հայրիկ, այդպիսի գործերում լուել
չեմ կարող, քանի որ ես ընտանիքի անգամ
եմ, ուրեմն, ես ևս իմ ձայնը պիտի ունենամ:

ՄԻԻԼԻՆՔ: Ին՞չ է նշանակում այդ քո հպարտ ու
հանգիստը խօսակցութեան ձևը: Գու այդ
ին՞չպէս ես խօսում:

ԼԷՕՆՈՐԱ: Մեր գերդաստանում այսօր մի տղեղ
դէպք է տեղի ունեցել...

ՄԻԻԼԻՆՔ: Կարող եմ ես իմանալ, թէ ո՞չ:

ԼԷՕՆՈՐԱ: ... և ինձանից գաղտնիք պահելու կա-
րիք չը կայ: Անշուշտ, աշխարհային քաղաքա-
վարութեան կանոնների համեմատ, որոնց ակա-
մայ մենք ենթարկվում ենք, ես, իբրև մի
օրիորդ, աչքերս ցած գծած՝ ոչինչ չ'իմացո-
ղի դեր պիտի կատարէի, սակայն ներկայ դէպ-
քում անհրաժեշտ է այդ ձևը թողնել: Ինձ
ամեն ինչ յայտնի է:

ՄԻԻԼԻՆՔ: Եւ դու չե՞ս խղճահարուի:

ԼԷՕՆՈՐԱ: Այո՛, ես շատ եմ խղճահարվում ձեր տեղ:

ՄԻԻԼԻՆՔ: Բայց դու հասկանում ես, թէ ո՞ւմ հետ
ես խօսում. դու խելագարուել ես, ին՞չ է:

ԼԷՕՆՈՐԱ: Եթէ ես այնպէս չ'արտայայտեցի, խնդ-
րեմ ներէք: Բնաւ ցանկութիւն չունիմ ձեզ
վիրավորելու կամ չարացնելու: Գուցէ, իրօք,
ես վատ դուստր եմ եղած, գուցէ իրաւունք
չ'ունիմ իմ անձնական համոզմունքներն ու-
նենալու, մինչև որ անկախ դիրք չեմ ունե-

նալ: Եթէ այդպէս է, ներէք ինձ. կաշխա-
տեմ ուղղուել: Բայց ճշմարտութիւնը յարգե-
լով՝ վերագարձրէք նորան իւր պատիւը:

ՄԻԻԼԻՆՔ: Ես մինչև անգամ չեմ էլ ուզում քեզ
հարցնել: Իսկապէս քո ին՞չ գործն է, որ դու
այդ մարդու համար խօսում ես: Սակայն ինձ
բացատրէ, թէ դու ին՞չ ես հասկանում «վե-
րագարձրէք պատիւը» ասելով:

ԼԷՕՆՈՐԱ: Աստուած իմ, գոնեայ ցանկութիւն յայտ-
նեցէք ամեն բան ուղղելու, իսկ յետոյ միջոց էլ
կգտնուի:

ՄԻԻԼԻՆՔ: Գու կարծում ես: Գեւ մէկ առաջ
նստի, զաւակս, ես չեմ կամենում այս անգամ
էլ կանոններս փոխել և կ'աշխատեմ ներգոր-
ծել քո վերայ հեղաբար և համոզել քեզ փաս-
տերով, թէև այստեղ աւելի տեղն էր խիստ
պարսաւանքի: Նայիր սպիտակ գլխիս. նորա
վերայ չը կայ անպատուութիւն, թէև երբէք
չեմ զբաղուել, այսպէս ասած՝ պատուի գա-
ղափարի վերաբերեալ հարցերով: Ախ՛, կեան-
քի մէջ մարդս որքան տուժում է և չի հա-
մարձակվում բերանը բաց անել անգամ, եթէ
ուզում է նպատակի հասնել: Ենթադրենք,
որ դու ճշմարիտ ես, սաստիկ վրդովուած
ու նեղացած եմ քո եղբօր թեթեամտութեան
և անպիտան վարմունքի վերայ: Բայց ո՞վ է
ստիպում երիտասարդին ունենալ մի ինչ որ
է պատիւ: Եւ վերջապէս նորան այդ որտեղից
է. խօսմ նորա ընտանիքից չէր լինի, և ոչ էլ իմ

առևտրական գործերից: Եստ լաւ, դու ա-
սացիր, որ նա ունէր պատիւ և մենք պարտա-
կան ենք նորան այդ պատիւը վերադարձնել:
Բայց ինչ բանով, ինչ կերպով: Կարելի է
պատկել Կուրտին ուղղակի այդ աղջկայ վե-
րայ:

ԱՄԱԼԻՍ: Ես ստիպուած եմ խնդրել քեզ, Թէոդո-
րոս, այդպիսի բաներ չ'ասել. մինչև անգամ
հանաքի մտքով:

ՄԻԻԼԻՆԳ: Բայց չէ որ այդ բանը թէ ինձ և թէ
իմ գործին սաստիկ քամբադդուծիւն կը բե-
րէր: Այն ինչ՝ յիշեալ երիտասարդին լիովին
հնարաւոր է դուրս գալ այդ թշուառ պատ-
մուծիւնից: Եթէ նա այդ չ'անի և ինձ հար-
ցնես թէ՛ ո՞վ պիտի լինի անբաղդը, մե՞նք,
թէ նա. այն ժամանակ ես կը պատասխանեմ.
Նա... որովհետեւ ես անբաղդ լինելու բոլորո-
վին տրամադիր չեմ: Այսպէս եմ գործել բո-
լոր իմ կեանքում և իւրաքանչիւրն ինձ ճա-
նաչում է, իբրև մի պատուաւոր մարդ:

ԼԵՕՆՈՐԱ: (վերկենալով): Հայրիկ, դա քո վերջին
խօսքն է:

ՄԻԻԼԻՆԳ: Վերջինն է: Այժմ մօտ ե՛կ ինձ, համ-
բուրիւր և խնդրիւր մօրիցդ ներողութիւն:

ԼԵՕՆՈՐԱ: (յետ է կանգնում սարսափով): Թո՛ղ
ինձ, ես չեմ կարող քեզ խաբել:

ՄԻԻԼԻՆԳ: Այդ ինչ է նշանակում:

ԼԵՕՆՈՐԱ: Հայրիկ, ես նկատում եմ, որ սխալ եմ.
Ես ձեզանից անհնարին բան եմ պահանջում:

Ես պարտական էի փոխել իմ հայեացքները
քեզ հետ հաւասարուելու համար. սակայն...
(կանգ է առնում եւ ականջ դնում: Գոսան
ետեւից ձայներ են լսվում):

ՄԻԻԼԻՆԳ: Սակայն:

ԼԵՕՆՈՐԱ: (ինքն իրեն): Նա է: (նարձր): Բայց...
Ես այլ ևս անկարող եմ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն X

ՆՈՅՆՔ և ՎԻԼՀԵԼՄ:

ՎԻԼՀԵԼՄ: Երիտասարդ պ. Խէյնիկէն էլի այստեղ
է: (Կուրտը նրկնչում է):

ՄԻԻԼԻՆԳ: Մի՞թէ դուք չը յայտնեցիք նորան,
ինչ որ ձեզ հրամայել էի:

ՎԻԼՀԵԼՄ: Ինչպէս չէ, հաղորդեցի, բայց եկաւ
ետեւիցս գրասենեակից:

ՄԻԻԼԻՆԳ: Այդ չ'եղած ու չ'իմացած կոպտութիւն
է, եթէ նա մի վայրկեանում չը...

ԿՈՒՐՏ: Ներողութիւն, հայրիկ, կարելի է նա կա-
մենում է իւր շնորհակալութիւնը յայտնել
քեզ: Ես կարծում եմ, որ նա դորա համար
բաւականին պատճառ ունի:

ՄԻԻԼԻՆԳ: Այդ ժողովուրդը շնորհակալութիւն ա-
սած բանը չը գիտէ:

ԿՈՒՐՏ: Չէ որ նա դեռ ևս պարտական է յանձնել
քեզ գրամարկը:

ՄԻԻԼԻՆՔ Ի Հարկէ:
 ԿՈՒՐՏ. Վերջ 'ի վերջոյ այնտեղ պակասներ կ'եր-
 ևայ. այն ժամանակ զնա ու որոնիր նորան:
 ՄԻԻԼԻՆՔ: Ասենք, յիրաւի, թո՛ղ նա ներս գայ:
 (Վիշէլմ' դուրս է գնում:)
 ԱՍԱԼԻՍ: Գնանք այտեղից, Լէօնորա:
 ԼԷՕՆՈՐԱ: (արագ, փսփսալով:) Կո՛ւրտ:
 ԿՈՒՐՏ: Ին՞չ է:
 ԼԷՕՆՈՐԱ: Զգուշացիր:
 ԿՈՒՐՏ: (աշխատում է ծածկել իւր շփոթութիւնը)
 Է՛հ, յիմար բան է: (Ամայիս եւ Լէօնորա
 դուրս են գնում:)

Տ Ե Ո Ա Ր Ա Ն X I

ՆՈՅՆՔ և ԲՕԲԵՐՏ (ըստ երեսոյթին հանգիստ,
 խիստ պատուով, պատկէն կոնատակին:)

ՄԻԻԼԻՆՔ: Դուք մի քիչ ձանձրացնող էք եղել, սի-
 րելիս: Է՛հ, բայց ես երբէք յանցանք չեմ
 համարում աւելորդ եռանդը ծառայութեան
 մէջ, նա մանաւանդ, երբ դա երևում է պաշ-
 տօնից հեռացնելու վերջին րոպէում: Է՛հ,
 ինչ և իցէ, նստեցէք:
 ԲՕԲ. Եթէ թող կը տաք, ես կը մնամ կանգնած:
 ՄԻԻԼԻՆՔ: Ինչպէս կամենաք: Եղբօրս որդու մա-
 սին ես արդէն երեկ իմացայ: Նա լաւ է ապ-
 րում, թէև, յիրաւի, Կոմս Տրաստի ասելով,

գուարճ, ուրախ կեանք է վարում. թէև քիչ
 չափից դուրս: Բայց ին՞չ անենք. այդ սովո-
 րութիւնը լաւ շրջանի մարդկանց արեան
 մէջն է: Յոյս ունիմ, որ դուք հաշիւ էք
 բերել այնպէս չէ:

ԲՕԲ. Անշուշտ:
 ՄԻԻԼԻՆՔ: Ե՛լ:
 ԲՕԲ: (որոնում է պատկայի մ'էջ եւ տալիս է
 նորան սեղանի վերայից:) Ահա:
 ԿՈՒՐՏ: (անհոգ ու ազատ, առանց քաշուելու:)
 Կարելի է ինձ նայել, հայրիկ:
 ՄԻԻԼԻՆՔ: Այո՛, այո՛, 'ի հարկէ, կարելի է: Դուք
 պատճէն էլ ունիք:
 ԲՕԲ. Անկասկած:
 ՄԻԻԼԻՆՔ: Ուրեմն տուէք այդ պատճէնը որդուս,
 խնդրեմ: (Կուրտ առաջ է գնում. երկուսն
 էլ կանգնած են լուռ իրար դէմ եւ չափում
 են աչքերով մ'էկը մ'իւսին ոտից մ'ինչն
 գլուխ:) Ըստ առաջին երեսոյթին, թվում է գոր-
 ծերը լաւ են գնում: Զուտ արդիւնք ստա-
 ցուած է...
 ԲՕԲ. (նայելով պայուսելի մ'էջ:) 116, 227
 գուրդէն:
 ՄԻԻԼԻՆՔ: Հօլանդական մի գուրդէնի հաշուով, որ
 70 մարկի է հաւասար, այդ կանէ ուրեմն...
 Կու՛րտ, դու էլ հաշուիր:
 ԲՕԲ. 197, 585 մարկ:
 ՄԻԻԼԻՆՔ: 8—1—3—5—8... շատ ուղիղ է, 197,
 856 մարկ 90 պֆենինգով... Կու՛րտ, ինչո՞ւ

դու էլ չես հաշվում:
ԿՈՒՐՏ: Եւ 90 պֆենինգ.— շատ ուղիղ է:
ՄԻԻԼԻՆԳ: Հըմ... սուրճի ահագին առևտուրից
այսպէս աննշան օգուտ: Այն ինչ է նշանա-
կում:

ԲՕԲ. (տալով նորան հաշուի թերթը): Ահա, ա-
ռանձին հաշիւը: Ես նախագուշակեցի, որ
Բրազիլիայի մրցումից սուրճի գործը թողա-
նում է, ուստի դաշտերի ⁵/₆ — ականք յա-
կապէս թէյ ցանեցի:

ՄԻԻԼԻՆԳ: Դո՛ւք:
ԲՕԲ. Այո՛, ես:
ԿՈՒՐՏ: Օտարօտի է.

ՄԻԻԼԻՆԳ: Իսկ ինչպէս են քինուու կեղևի վերա-
բերեալ գործերը:

ԲՕԲ. Ահա հաշիւը: (տալիս է նորան մ'ի ուրիշ
հաշուէթուղթ):

ՄԻԻԼԻՆԳ: Նոյնպէս մի առանձին աչքի ընկնող
բան չի ներկայացնում: Բայց սրտեղից է այս-
պիսի օգուտը:

ԲՕԲ. Գլխաւորապէս արգիւնաւէտ դուրս եկան
ծխախոտի սերմերի ցանած փորձերը, որ բե-
րել էինք սուել Սու մտարա կղզուց: (տալիս
է նորան էլի մ'ի ուրիշ հաշուէթուղթ): Ես մտ-
նաւանդ, երբ սկսեցինք թէյի մշակելը:

ՄԻԻԼԻՆԳ: Այդ վստահ քալըն արիք դուք ձեր
նախաձեռնութեամբ.

ԲՕԲ. Բոլորովին մենակ, թէև այդ դէպքում ես
օգտուեցի նա և իմ բարեկամ Կոմս Տրաստի

խորհուրդներով.
ՄԻԻԼԻՆԳ: Իսկ եղբօրս որդին հաւանում էր այդ
միջոցները:

ԲՕԲ. Յետոյ, 'ի հարկէ:
ՄԻԻԼԻՆԳ: ձշմարիտ ասացիր, սիրելի Կու՛րտ, որ
այս բոլորը շատ օտարօտի է:

ԲՕԲ. Հարցնելու էլի բան ունե՞ք:
ՄԻԻԼԻՆԳ: Ի նկատի առած, ինչպէս որ դուք ձեզ
պահում էք, բոլոր իմ առևտրական գործերը
Ես վա կղզում, արդեօք բոլորը ինքնուրոյն էք
կատարել և թէ ինչ կերպով:

ԲՕԲ. Որովհետև ես լիազօր հաւատարմաթուղթ
ունէի:

ՄԻԻԼԻՆԳ: Այդ ժամանակ սրտեղ էր իմ եղբօր
որդին:

ԲՕԲ. Այդ հարցին ես չեմ պատասխանիլ:
ՄԻԻԼԻՆԳ: Միթէ եղբօրս որդին ամեն օր չէր լի-
նի գրասենեակում:

ԲՕԲ. Ո՛չ:

ՄԻԻԼԻՆԳ: (աւելի եւս ալէկոծուելով): Իսկ երբ էր
լինում նա այնտեղ:

ԲՕԲ. Երբ որ Համբուրգից փոստան գալիս էր և նա
փողի պէտք ունէր:

ԿՈՒՐՏ: Դորանով ինչ էք ուզում ասել. իբր թէ.
հօր եղբօրս որդին գործիցը յետ էր ընկնում:

ԲՕԲ. Ես ուզեցայ ասել միայն այն, ինչ որ ասացի:
ՄԻԻԼԻՆԳ: Բայց նեղութիւն կրէք բացատրել ինձ...

ԲՕԲ. Ես ինձ իրաւունք չեմ համարում պատմել
իմ պարտնի մասնաւոր կեանքի մասին:

ԿՈՒՐՏ: Իսկ նորանց ցեխոտել դուք ձեզ իրաւունք էք համարում:

ՐՕԲ. (ուզում է յարձակուել նորա վերայ, բայց իրեն զսպում է:) Գարձեալ հարց ունիք:

ՄԻԻԼԻՆԳ: Այժմ ձեզ մօտ պատրաստի որքան փող կայ:

ՐՕԲ. Ես ունիմ հետս բերած 95,000 զուլդէնի փոխանակազրեր զանազան բանկերի վերայ: Ահա և նորա:

ՄԻԻԼԻՆԳ: Կուրտ, համեմատէ և տես, ճիշտ են, թէ ոչ: (Երկուսն էլ կրկին կանգնում են իրար դէմ ու դէմ: Կուրտը վերցնում է փոխադարձ թղթերը եւ նայում է նորանց մէկ-մէկ:)

ՐՕԲ. Այժմ բողբոջ վերջացաւ:

ՄԻԻԼԻՆԳ: Մի քիչ էլ սպասեցէք: (լռութիւն:)

ԿՈՒՐՏ: Շատ ուղիղ է:

ՄԻԻԼԻՆԳ: Սակայն, իմ սիրելի պ. Խէչնիկէ, ցանկանում եմ ձեզ բաղդաւորութիւն և յաջողութիւն ձեր ապագայ մի ուրիշ ասպարիզում: Կարգին և քաղաքավարի մարդ մնացէք. չը մոռանաք, որ դուք պարտական էք իմ տանը և իմ օջախին:

ՐՕԲ. Ո՛չ, ես այդ չեմ մոռացել: Բայց ահա այն 40 հազարը, որ դուք բարի էք եղել տուել էք հօրս:

ՄԻԻԼԻՆԳ: Այս 40 հազարը բնծայ էր, այլ ոչ թէ ձեռաց փող տուած վերադարձնելու համար:

ՐՕԲ. Այնուամենայնիւ ես իմ պարտքս եմ համարում:

ընդ վերադարձնել ձեզ այդ գումարը:

ՄԻԻԼԻՆԳ: Դուք իրաւունք ստացել էք ձեր հօրից այդ գումարը վերադարձնելու:

ՐՕԲ. Ո՛չ, ես իրաւունք չեմ ստացել նորանից:

ՄԻԻԼԻՆԳ: Ուրեմն այս փողերը ձերն է:

ՐՕԲ. Այո, իմս է:

ՄԻԻԼԻՆԳ: Այդպէս, այդպէս:

ԿՈՒՐՏ: Հայրիկ, արդեօք չես հետաքրքրվում այն բանով, որ պ. Խէչնիկէն այդքան խնայողութիւն է արել:

ՐՕԲ. (մի վայրկեանում գլխի է ընկնում, թէ քանի ինչումն է հասկանում է այդ խօսքերի միտքը. ուստի, աղաղակում է եւ տործանակը ձեռին յարձակվում է Կուրտի վերայ բռնելով նորա կոկորդից:) Անագնիւ, չեա ա՛ն խօսքերդ:

ՄԻԻԼԻՆԳ: Ազատեցէք, ազատեցէք...

Տ Ե Ս Ա Ր Ա Ն XII

ՆՈՅՆՔ, ԼԷՕՆՈՐԱ, յետոյ ԱՄԱԼԻՍ:

ԼԷՕՆՈՐԱ: (վրայ վազելով:) Բ՛օքերա, խղճացէք: (Բօքերտը նորան տեսնելով, ատրձանակը վայր է ձգում եւ հեռանում է, ծածկելով երեսը ձեռներով: Կուրտը ծանր կերպով շունչ առնելով, ընկնում է քազմիցի վերայ:)

ԱՄԱԼԻՍ: (դուրս է գալիս միջին դռնից:) Ինչ է պատահել... Կուրտ... օգնեցէք... սպանո-

ղը, սարանողը. Թէոդորոս, զանգահարեցէք...
ՄԻԻԼԻՆԳ: Հանգարտ, հանգարտ, այլ ևս վտանգ
չը կայ: Էլ ինչ է հարկաւոր քեզ: Գնան, կու
րի՛ր այստեղից:

ԲՕԲ. Ինչպէս գող, այնպէս չէ: (Լէօնորան շար
ժումնէր է անում:): Այն, Լէօնորա, ես
խնայողութիւն արի ձեր հօր համար, այժմ ինձ
իբրև գող դուրս է անում իւր տանից:

ԼԷՕՆՈՐԱ: Ի սէր Աստուծոյ, հայրիկ, դուք ինչ
էք բերում մեր գլխին:

ԲՕԲ. Լնու: Այսպէս ուրեմն, այսօր հաշուի օր է:
Համեմատենք մեր հաշիւները, կամ այսպէս
ասած, գրտուկենք: Հաւասարեցնենք աղայի
պալատի նման տան և մեր վերնայարկ խըր
ճիթի մէջ եղած հաշիւը... ես ձեզ համար
գուտ օգուտ բերել եմ ատամներով և մատ
ների ծայրերով ու այսքան ժամանակ մի ծրպ
տու անգամ չը հանեցի ուռնկիս մասին: Ես
ձեզ վերայ նայում էի, իբրև սուրբի վերայ:
Դուք իմ հաւատն ու կրօնն էիք: Բայց դուք խլե
ցիք, յափշտակեցիք անամօթաբար ինձանից
իմ ընտանիքի և քրոջս պատիւը: Չէ որ նա
պատուաւոր անարատ օրիորդ էր, նա դունից
դուրս չէր գալիս: Դուք գողացաք ինձանից
զէպի իմոնցս ունեցած սէրը: Թէև նոքա կեդ
տոտ, ցեխոտ աղքատներ են, բայց ես նորանց
սիրում եմ: Դուք գողացաք ինձանից այն
բարձր, որի վերայ ես համգաստանում էի ձեզ
համար անդուլ աշխատութիւնիցս յետոյ:

Դուք գողացաք, խլեցիք ինձանից իմ թան
կագին հայրենիքը և ծննդավայրը... Դուք
գողացաք ինձանից զէպի մարդիկ ունեցած
սէրս և յոյս առ Աստուած: Դուք գողա
ցաք, յափշտակեցիք իմ հանգստութիւնը,
իմ ամօթը և իմ անգորը խիղճը: Վերջապէս
դուք գողացաք իմ երկնքի արեգակը: Սակայն,
իրօք, գողեր և աւագակները դուք էք:

ՄԻԻԼԻՆԳ: (լռութիւնից յետոյ): Ինչ է, դու ու
զում ես, որ կանչեմ ծառային քեզ տանից
դուրս շարտէ... այն...

ԼԷՕՆՈՐԱ: (մտնելով նորանց մէջ): Այդ բանը չի
կարող լինել, հայրիկ:

ՄԻԻԼԻՆԳ: Ինչ: Դու համաձակվում ես:

ԼԷՕՆՈՐԱ: Նա այստեղից ազատ, առանց վիրաւո
րանքի կը հեռանայ, ապա թէ ոչ դու ինձ էլ
պիտի դուրս շարտես նորա հետ:

ԲՕԲ. Լէօնորա, ինչ էք ուզում անել:

ԼԷՕՆՈՐԱ: Հայրիկ, միթէ նորանից ներողութիւն
խնդրելու, գոնեա, դու մի բառ չ'ունես, մի
այն մի բառ:

ՄԻԻԼԻՆԳ: Դու գժուե՛լ ես, ինչ է:

ԲՕԲ. Լէօնորա, թողէք: Ես երախտագիտութեամբ
պիտի լիջեմ ձեզ, քանի որ կենդանի եմ: Չեր
անձի մէջ ես թողնում եմ այն՝ ինչ որ հայ
րենիք է անուանվում: Մնաք բարեաւ: (զնում
է դուան մօտ:)

ԼԷՕՆՈՐԱ. (ձշարով ընկնում է նորա ետեւից եւ

կախ է ընկնում նորանից:) Մի գնա, մի գնա. իսկ եթէ դու հեռանում ես՝ ինձ էլ վերցրո՛ւ:

ԲՕԲ. Լէօնորա:

ՄԻԻԼԻՆԳ. Այդ ինչ է նշանակում:

ԼԷՕՆՈՐԱ. Ինձ մեծակ մի թողնիր այստեղ: Ինձ համար սաստիկ ցուրտ է և սարսուռ է պատճառում այս մարդկանց հետ ապրելը: Իմ ծննդավայրը, հայրենիքն ու աղբը, բո՛ւ էութեան մէջն է: Հայրենիքի ուժը միշտ քեզանով է զորացել: Նայիր, ես քեզ գրկում եմ, դու չես կարող ինձ երեսի վերայ թողնել ու գնալ:

ՄԻԻԼԻՆԳ. Ախ, այս ինչ խայտառակութիւն է:

ԼԷՕՆՈՐԱ. Հայրիկ, մենք իրարու չը պիտի ատենք:

Ես պիտի վարձատրեմ նորան այն բոլոր զորհանքի համար, ինչ որ դուք նորանից խեցիք: (Րօբերտին:) Ինձ էլ ոչինչ չ'ունիմ, բացի իմ անձից և իմ գլխից: Նա ուզում է այդ:

ԲՕԲ. Լէօնորա:

ՏԵՍԱՐԱՆ XIII

ՆՈՅՆԲ և ՏՐԱՍ:

ՏՐԱՍ: Ինչ է կատարուել այստեղ:

ԼԷՕՆՈՐԱ. (վազելով գնում է նորան հանդիպելու:) Սիրելի բարեկամ, շնորհակալ եմ ձեզանից: Գուք ինձ իսկական ճանապարհը ցոյց

տուիր: ԲՅրերտ, մենք մեզ համար նոր հայրենիք և նոր պարտաւորութիւններ կը ստեղծենք:

ԲՕԲ. (հայեացք է ձգում Կուրտի վերայ, որը վիրատրուած կերպով նստած է:) Եւ նոր պատիւ: (զրկում է Լէօնորային:)

ԱՄՍԼԻՍ. Ահա, թէ ինչպիսի երախտագիտութիւն, Թէոդորոս:


ԼԷՕՆՈՐԱ. Հայրիկ, մայր, ես ձեզանից ներողութիւն չեմ խնդրում. որովհետեւ այդ ամենը պարտաւոր էի անել: Զգում եմ, իրաւացի չեմ, բայց աղաչում եմ, անյիշաչար եղէք իմ մասին:

ՄԻԻԼԻՆԳ. Այ, թէ ինչպէս: Եւ դու կարծում ես, թէ կը թողնես ընտանիքդ, առանց լիշեւութե՛ դու ո՞վ ես... Ի՛նչ... (ձեռները քարձրացնում է անիծելու համար:)

ՏՐԱՍ: (մտնենալով նորան:) Թողէք այդ: Ինչու էք ծանրաբեռնում ձեզ անէճքով: (կամաց.) Բացի այդ, խօսքը մեր մէջ մնայ. ձեր աղջիկը վառ զոյգ չի կազմիլ Րօբերտի հետ: Այդ երեսասարդը կը լինի իմ ընկերակիցը և որովհետեւ ես ծնօղներ ու ազգականներ չունիմ, հետևապէս կը լինի նա և իմ ժառանգը:

ՄԻԻԼԻՆԳ. Բայց... Կո՛մս... Ինչու դուք ինձ վաղ չ'ասացիք:

ՏՐԱՍ: (արագութեամբ յետ վազելով և հեռանցնելով նորան իւր ձեռներով:) Ես սպասում եմ



ձեր գրաւոր համաձայնութեանը: (զնում է
Բօրերտի եւ Լէօնօրայի ետեւից:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

Վ Ե Ր Զ:



ՏՊԱԳՐԱԿԱՆ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Տպած է.

պէտք է լինի.

- 5-որդ երեսում. թերեհաւտութեան - թերահաւտութեան
 16 որդ — ամբողջանել — — — — — ամբողջացնել
 21-որդ — աղայի — — — — — աղայի
 23-որդ — վեռադառնալը — — — — — վերադառնալը
 , — , — լիներ — — — — — լինէր
 30-որդ — beaucoup — — — — — beaucoup
 34-որդ — cercle — — — — — cercle
 142-որդ երեսում ցածից
 4-որդ տողում տպած է
 ԲՐԱՆՆՑ — — — — — — — — — — — ՏՐԱՍ.

